



52



191 93-86

4

Մ Ա Յ Ր Ե Ն Ի Լ Ե Զ Ո Ի

ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ

Պ Ա Տ Կ Ե Ր Ա Զ Ա Ր Դ

Догодрина Попечительским Советом Кавказского Учебнаго Округа для употребленія въ начальныхъ училищахъ.

Պ. Ե Գ Ե Բ Ե Ր Դ Կ Պ Պ Պ Պ Պ Պ Պ Պ

(Ք ա ղ Ե փ յ յ ա ծ և Լ Ը յ յ ա ջ ղ ա ծ)



ԱԼԷԿՍԱՆԴՐՈՍԻ

Տպարան Բ. Գ. Սանդուկյանցի

A 2883

Գ Բ Ե Լ 40 40 9.

Zurückgekehrt.



ՄԱՅՐՇՆԻ ԼԵՋՈՒ

ԵՐՐՈՐԴ ՏՇՐԻ

Ա. Ռ. Ա. Ջ. Ի. Ն. Բ. Ա. Ժ. Ի. Ն.

1. Վոյր և Լորալր

Արամը և Սաթենիկը տանը մենակ էին մնացել:—«Արի, Սաթենիկ, —ասաց Լորալրը, —նայենք-տեսնենք, չենք կարող արդեօք մի համեղ բան գտնել ուտելու»:—«Եթէ դու կարող ես ինձ մի աշնափախ տեղ տանել, որ ոչ ոք չտեսնի մեզ, ինչու չէ, կըղամ», —պատասխանեց քոյրը:—«Գնանք մառանը, աշնտեղ լաւ-լաւ բաներ շատ կան և մեզ ոչ ոք չի տեսնի»:—«Ո՛չ, Արամ, աշնտեղ մեզ մեր հարեանը կարող է տեսնել. նա գուանը փայտ է ջարդում»: — «Ի՛էհ, ուրեմն գնանք խոհանոցը, —համողում էր Արամը իւր քրքրոջը. —աշնտեղ մի մեծ կճուճ մեղր կայ. մի-մի կտոր հաց կըվերցնենք, կըթաթախենք և կուտենք»:—«Սոհանոցումն էլ մեր հարեանի կինը կընկատէ մեզ. նա լուսամուտի առաջ նստած թել է մանում»:—«Օ՛, ինչ փախկոտն ես դու, —բացազանչեց փոքրիկ բկլիկը. —եթէ այդպէս է, գնանք նկուղը խնձոր ուտելու. աշնտեղ էլ խօս ոչ ոք չի նկատի մեզ»:—«Ա՛խ, սիրելի Արամ, դու կարծում ես, թէ նկու-

դու՛մ մեզ ոչ ոք չի՞ տեսնիլ... Մի՞թէ չգիտես, թէ կա Մէ-
կը, Որը պատերի միջով անգամ տեսնու՛մ է և Որի աչքից
մու՛թ տեղերու՛մ էլ թագնւելն անկարելի է»։ Արամը վա-
խեցաւ. — «Ի՛րա՛ւ ես ասու՛մ, Սաթենիկ, — ասաց նա. — Սատ-
ւած մեզ տեսնու՛մ է և այնպիսի տեղերու՛մ, ուր մարդ-
կանց աչքը ոչինչ չի նկատիլ. ուստի թէ առանձին և թէ
մու՛թ անկիւններու՛մ մենք չպէտք է գործենք այն, ինչ որ
չէինք համարձակելի անել ուրիշների մօտ և լոյսի առաջ։

Ի՞նչ էր առաջարկում Արամը քրոջը.
Ինչո՞ւ Սաթենիկը չհամաձայնուց.
Ինչո՞ւ վախեցաւ Արամը։

2. Ստահակ որդին

Գիւղացու մէկը ունէր մի որդի՝ Աշոտ անու՛նով։ Աշո-
տը շատ ստահակ տղայ էր և ամենեին ականջ չէր դնում
հօր խրատներին։ Մի անգամ հայրը նրան տարաւ իրանց
դու՛ն առջևն ընկած գերանի մօտ և ասաց.

— Տես, Աշոտ, ինչքան որ դու ստահակութիւն անես,
այնքան մեխ պէտք է խփեմ այս գերանի վրայ և ինչքան
որ խելօք լինիս, այնքան մեխ պէտք է հանեմ։

Բայց Աշոտը՝ փոխանակ ուղղւելու՝ աւելի ևս ստահակ
էր դառնում, այնպէս որ գերանը շուտով ծածկւեց մե-
խերով։ Անց կացաւ մի ժամանակ։ Մի օր հայրը՝ որդուն
խելօք տեսնելով՝ հանեց մեխերից մէկը։ Այնուհետև որ-
դին հետզհետէ խելօքանում էր և հայրն էլ հանում էր
մեխերը։

Վերջապէս մի օր հայրն ասաց Աշոտին.

— Ուրախացիր, զաւակս, ահա մի մեխ էր մնացել գե-
րանի վրայ, այն էլ հանում եմ։

Ասաց ու հանեց մեխը։ Սակայն Աշոտը, փոխանակ
ուրախանալու՝ սկսեց լաց լինել։

— Ինչո՞ւ ես լաց լինում, զաւակս, — հարցրեց հայրը. —

չէ՛ որ աւելի պէտք է ուրախանաս, որովհետեւ բոլոր մե-
խերը հանուած են:

—Ա՛խ, հայրիկ, — պատասխանեց Աշոտը. — ճիշտ է՛ մե-
խերը հանուած են, բայց նրանց տեղերը մնում են:

Ի՛նչ միջոց գործ պրեց հայրը, որդուն ուղղելու համար:
Այդ բանն ազդեց որդու վրայ եւ ինչպէս:

3. Բարեկամութիւն

Երեք ընկեր անտառի միջով միասին ճանապարհ էին
գնում: Իրանից միքանի օր առաջ այնտեղ զարհուրելի
փոթորիկը կոտորատել և արմատախիլ էր արել բազմաթիւ
ծառեր: Ինչո՞ւ նոյն իսկ ճանապարհի վրայ միքանի հսկայ
կաղնիներ էին ընկած, բայց նրանցից ո՛չ հեռու՝ միմեանց
մօտ կանգնած էին երկու փոքրիկ ծառ:

Ընկերներին սաստիկ զարմացրեց այն, որ փոթորիկն,
այդքան մեծամեծ ծառեր տապալելուց յետոյ՝ այդ երկը-
սին անմիտա էր թողել:

—Մօտ գնանք և տեսնենք՝ ինչու՞մն է դրա զաղանի-
քը, — ասաց ընկերներից մէկը:

Մօտեցան և սկսեցին նայել: Այստեղ միայն նրանք
նկատեցին, որ այդ փոքրիկ ծառերի արմատներն այնպէս
պինդ էին հիււսել միմեանց հետ, որ ո՛չ մի փոթորիկ չէր
կարող խորտակել նրանց:

—Տեսնո՞ւմ ես, — ասաց միւսը, — թէ որքան մեծ նշա-
նակութիւն ունի մտերմութիւնն ու բարեկամութիւնը:
Միայնակ մարդը, որքան էլ ուժեղ լինի՛նա, շուտ կընկճւի
զժրադդութեան առաջ. իսկ այն մարդը, որ ունի հաւա-
տարիմ ընկեր ու բարեկամ, շատ թշւառութիւնների կը-
ղիմադրէ:

Ի՛նչը զարմացրեց ընկերներին եւ ինչո՞ւ:

Ինչո՞ւմն էր թագնած զաղանիքը:

4. Երեք բարեկամ

Մարդու մահը մօտեցել էր և նա իմաց արաւ իւր բարեկամներին, որ գան՝ վերջին հրաժեշտը տալու իրան։


Եկաւ առաջին բարեկամը։ — «Մնաս բարեա՛ւ, բարեկա՛մ. ես մեռնում եմ», — ասում էր նրան մահամերձը։ — «Երբ մեռնես, ես մոմ կը վառեմ քո հոգու փրկութեան համար», — ասաց նրան առաջին բարեկամը. ուրիշ ոչինչ։

Գալիս է երկրորդը և մահամերձին տեսնելուն պէս՝ սկսում է հառաչել և դառնապէս լաց լինել. փաթաթւում է հիւանդին, համբուրում նրան։ — «Ի՛նչո՛ւ ես հեռանում ինձանից, իմ թանկագին, — ասում էր նա. — Ի՛նչպէս բաժանւեմ քեզանից. ցաւալի է, շատ ցաւալի։ Ձեմ թողնիլ քեզ, մինչև գերեզմանդ կուղեկցեմ»։ — «Հարկաւոր է քահանայ հրաւիրել», — մտածում է ինքն իրան այս բարեկամը։ Մահից միքանի ընդէ առաջ եկաւ քահանան. Հիւանդը խոստովանեց և հաղորդւեց. Հէնց այդ վայրկենին յայտնւում է և երրորդ բարեկամը և մեղմ ու քաղցր ձայնով շնջում մեռնողի ականջին. — «Ես քեզանից յաւիտեանս չեմ բաժանւիլ»։

Մեռաւ մարդը և բարեկամներից իւրաքանչիւրը կատարեց իւր խոստումը։ Հարստութիւնը մոմ վառեց նրա համար. Ազգականներն ու ծանօթները ուղեկցեցին նրան մինչև գերեզման. Իսկ մարդու առաքինութիւնը նրանից անբաժան մնաց, — նա նրա հետ թէ՛ դէպի երկինք՝ Աստուծոյ մօտ բարձրացաւ և թէ՛ երկրիս վրայ նրա յիշատակը վառ պահեց։

Որո՞նք են մարդու բարեկամները։

Ո՞ր բարեկամն է ամենից գերադասը։



5. Ամենաշատ վկայականը

Մի վաճառական լրագրներում յայտարարել էր, թէ իւր խանութի համար ուզում է մի աշակերտ վարձել:

Շատ մարդ եկաւ-դնաց, վերջապէս վաճառականը մէկին ընտրեց և խանութն ուղարկեց:

—Ասա ինձ, բարեկամ,—հարցրեց ծանօթներից մէկը, ինչո՞ւ այն տղային ընտրեցիր: Ոչ վկայական ունէր, ոչ էլ ուրիշ կերպ ճանաչում էիր: Ուրիշները հրաշալի վրկայականներ ունէին, այն ինչ դու ճանապարհ դրիր նըրանց:

—Սխալում ես,—ասաւ վաճառականը:—Այս տղան շատ վկայականներ ունէր: Սենեակը մտնելուց առաջ ոտները լաւ սրբեց ու դուռը ծածկեց առանց թրխկացնելու, ուրեմն մաքրասէր է ու կարգապահ: Իւր նստած աթոռից վեր կացաւ ու տեղ տեղ կաղ մարդուն.—ուրեմն բարետիրտ է և յարգում է աւելի հասակաւորներին: Դեռ շէմքին գլխարկը հանեց և արագ, կտրուկ պատասխաններ էր տալիս իմ հարցերին. ուրեմն քաղաքավարի ու աչքարաց է: Կուացաւ, բարձրացրեց գիրքը, որ դիտմամբ ձգել էի յատակին, մինչդեռ ուրիշները դէմ էին ընկնում գրքին կամ կողքից անցնում: Հանգիստ սպասում էր իւր հերթին, չաշխատելով ուրիշների առաջը կտրել. ուրեմն լաւ կրթւած տղայ է: Շորերը լաւ սրբւած էին, իսկ երեւն ու ձեռները մաքուր: Ի՞նչպէս ես կարծում, այս ամենը լաւագոյն վկայական չէ՞:

Ի՞նչն է մարդու ամենաշատ վկայականը:

6. Կուպէկը

Մեռնում էր մի ժլատ հարուստ: Այս հարուստը իւր կեանքում ոչ ոքի՛ ոչ մի օգնութիւն չէր արել և այսպիսով գիզել էր իւր համար ահագին հարստութիւն:

—Յնկարելի է,—ասում էր նա միշտ, երբ յիշեցնում էին նրան իւր ժլատութեան մասին,—փողը կեանքում ամեն բան է:

Եւ ահա այժմ, երբ մօտեցել էր մահւան ժամը, նա մտածում էր, որ երևի այն աշխարհումն էլ փողը ամեն բան է, ուրեմն պէտք է նախապէս պատրաստուել, որ այնտեղ մարդ կարիք չունենայ:

Նա կանչեց իւր որդիներին և վերջին հրաժեշտը տալով՝ հրամայեց դագաղում իւր կողքին դնել փողով լիքը պարկ:

—Մի խնայէք,— աւելացրեց նա. — որքան կարելի է, շատ ոսկի լցրէք:

Եւ ինքը նոյն գիշերը մեռաւ:

Որդիները կատարեցին իրանց ծնողի վերջին կամքը և միքանի հազար ոսկի ածեցին դագաղի մէջ:

Երբ նա յայտնուեց այն աշխարհում, սկսեցին սովորական ձևականութիւնները,—հարց ու փորձը՝ նրա ով լինելու մասին և մինչև կէս գիշեր այդ բաներով նրան չարչարեցին: Կէս գիշերին նա սաստիկ քաղց և ծարաւ դգաց:

—Ի՞նչ պէտք է անեմ, կորած եմ այստեղ,—մտածում էր նա:

Յանկարծ տեսնում է մի ճոխ սեղան զանազան համեղ ուտելիքներով և ըմպելիքներով:

—Այժմ կարող եմ պարծենալ, — ասում էր նա ինքն իրան,—որ կարողացայ առաջուց իմանալ, թէ այստեղ էլ ամեն բան այնպէս է, ինչպէս մեզ մօտ: Ի՞նչ լաւ արի, որ հետս փող վերցրի:

Եւ մեծ ուրախութիւնով շօշափելով փողով լիքը պարկը՝ մօտենում է սեղանին:

—Ի՞նչ արժէ,—խրոխտ ձայնով հարցնում է նա տիրոջը, ցոյց տալով թանկագին ուտելիքներից մէկի վրայ:

—Մէկ կոպէկ,—պատասխանում է տէրը:

—Էժան է,—մտածում է հարուստը. — չեմ կարծում, որ այսպէս լինի: Ապա, հարցնեմ մի ուրիշը:

— Իսկ սա՞ ինչ արժէ, — ցոյց է տալիս տաք-տաք համեղ կարկանդակի վրայ:

— Իսկ էլ մէկ կոպէկ է, — պատասխանում է սեղանի տէրը և ժպտում:

— Եթէ այդպէս է, այն ժամանակ խնդրում եմ մի ամանի մէջ տւէք ինձ տաք հատ այս կարկանդակներէց, հինգ հատ էլ միւսից:

Սեղանի տէրը լսում էր նրան առանց շտապելու:

— Մենք փողը առաջուց ենք առնում, — շատ սառը կերպով յայտարարեց նա:

— Փողը... ուրախութեամբ:

Այս ասելով հարուստը հանեց մէկ հատ ոսկի և ասաւ՝ «ահա»: Տէրը վերցրեց ոսկին, նայեց, շուռու մուռու տւեց և ասաց:

— Միչ, սա այն կոպէկը չէ. — և յետ վերադարձրեց:

Շատ տխրեց և վիրաւորւեց այդ բանից մեր հարուստը:

— Ա՛յ քեզ բան, — մտածեց նա, — ուրեմն սրանք միայն կոպէկներ են վերցնում: Զարմանք... Պէտք է ուրեմն մանրացնեմ:

Նա իսկոյն վազում է որդիների մօտ և ասում.

— Առէք, յետ վերցրէք ձեր ոսկիները, ինձ հարկաւոր չեն դալիս. իսկ սրանց բոլորի փոխարէն լցրէք պարկս կոպէկներով, թէ չէ կորած եմ:

Որդիները վախեցած միւս օրն և եթ կատարում են հօր պահանջը և լցնում են պարկը կոպէկներով:

Հայրը, վերցնելով պարկը՝ ուրախացած վազում է սեղանի մօտ և բարձր ձայնով կանչում.

— Այժմ ինձ շուտ ուտելու բան տւէք, սովից մեռնում եմ:

— Մենք փողը առաջուց ենք առնում, — լսում է նոյն սառը և չոր պատասխանը սեղանի տիրոջից:

— Համեցէք, համեցէք... — ասում է իսկոյն հարուստը, պարկից մի բուռը փայլուն կոպէկներ հանում և ածում սեղանի վրայ: — Վերցրէք, միայն թէ ինձ շուտ ուտելու բան տւէք...

Տէրը նոյն սառնութեամբ նայեց այդ փողերի վրայ և ծիծաղեց:

— Ինչպէս տեսնում եմ, դուք շատ քիչ բան էք տեսել և սովորել այնտեղ, ձեր աշխարհում: Մենք այստեղ ընդունում ենք ոչ թէ այն կոպէկները, որ ձեր ձեռքին են այժմ, այլ այն, որ դուք ուրիշների ձեռքն էք դրել: Մտաբերեցէք, գուցէ դուք երբ և իցէ տւել էք այդպիսի կոպէկներ մուրացկաններին, օգնել էք աղքատներին:

Հարուստը ցած գցեց իւր աչքերն ու ընկաւ խորը մտածամտնքի մէջ:

Նա իւր կեանքում ոչ մի աղքատի երբէք ողորմութիւն տւած չէր:

Ինչո՞ւ սխալուեց հարուստը:

7. Հարագատ մայրը

Պաղէստինում մի ընտանիքի մէջ ապրում էին երկու կին: Դրանցից իւրաքանչիւրը մի-մի ծծի երեխայ ունէր: Մի անգամ, գիշերը, կանանցից մէկը քնած ժամանակ իւր երեխային տակոյն արաւ, խեղդեց: Արթնանալով և նկատելով այդ՝ նա իւր քնած դրացու մօտից կամացուկ վեր առաւ նրա կենդանի երեխային, իսկ մեռածին դրեց նրա անկողինը: Առաւօտը, երբ այս վերջինը կամենում էր կերակրել իւր որդուն, յանկարծ տեսաւ, որ երեխան մեռած է և իսկոյն ճանաչեց, որ դա իրանը չէ: «Սա իմ որդին չէ, — ասաց դրացուհուն, — այլ քոնն է. տո՛ւր ինձ իմ զաւակը»: — «Սուտ ես խօսում, — վրայ բերեց միւսը, — այդ քո որդին է, իսկ կենդանին իմն է»:

Եւ նրանք սկսեցին վիճել: Հաւաքւեցին մարդիկ, բայց ոչ ոք չէր կարող հասկանալ, թէ նրանցից որն է ճշմարիտը:

Այդ ժամանակները Պաղէստինում իշխում էր Սողոմոն անունով մի իմաստուն թագաւոր: Կանայք վեր

առան թէ մեռած և թէ կենդանի երեխաներին և բերին
թագաւորի մօտ:

Սողոմոն թագաւորը, լսելով նրանց գանգատը, իսկոյն
կանչեց իւր թիկնապահներին մէկին և հրամայեց կենդա-
նի երեխային կէս անել ու բաժանել գանգատաւորներին:
Հէնց որ երեխայի հարագատ մայրը լսեց այս հրամանը,
իսկոյն թագաւորի ոտներն ընկաւ և ասաց. — «Տէր թագա-
ւոր, մի հրամայիր սպանել երեխային. ահա, թող նրան
յինի, միայն թէ կենդանի մնայ»: Իսկ միւս կինն ասաց. —
«Թագաւորն արդար գատեց. թող սա ոչ քեզ լինի, ոչ ինձ»:

Թագաւորն իսկոյն հասկացաւ, թէ կանանցից որն է
մանուկի հարագատ մայրը և հրամայեց նրան ապա երե-
խային:

Ընդէր երեխայի հարագատ մայրը:

8. Որդիական սէր

Լիւզիայի Կրեսոս թագաւորը մի որդի ունէր՝ Ատիս
անուամբ, որն ի ծնէ համբ էր: Հայրն ամեն ջանք գործ էր
գրել ընտելեան այս թերութիւնը բժշկելու համար, սա-
կայն բժիշկների բոլոր գիտութիւնը չէր կարողացել մի
օգնութիւն բերել:

Մի անգամ պարսիկներն յաղթեցին Կրեսոսի գօրքե-
րին և յարձակեցան նրա մայրաքաղաքի վրայ: Ատիսը
նկատեց, որ մի գինւոր, սուրը ձեռքին՝ վազում է իւր հօր
վրայ, որ սպանէ նրան: Իւր հօրն սպառնացող վտանգը
տեսնելով՝ Ատիսը, սարսափահար և սրտադող, մոռացաւ
ընտելան պակասութիւնը, բաց սրաւ բերանը և իւր բոլոր
ոյժը հաւարեց, որ գոչէ: Ի՞նչ հրաշքներ կարող է գործել
որդիական անկեղծ սէրը. նրա լեզուն կաշկանդող կապանք-
ները յանկարծ բաղեցան և նա այս խօսքերն արտասու-
նեց բարձր ձայնով.


— Զինւոր, խնայիր հօրս. դա ինքը՝ Կրեսոս թագաւորն է:

Այսպիսով պատանի Ատիսը փրկեց հօր կեանքը վտանգից և ինքն էլ առատ կերպով վարձատրւեց իւր որդիական սիրոյ համար, որովհետև ամբողջ կեանքում մտքերն յայտնելու թանկագին ձիրքն ստացաւ:

Միտում էր Ատիսը իւր հօրը:
 Ինչնց նրեաց այդ:

9. Ծնողասէր աղջիկը

Զինաստանում մի հին օրէնք կայ, որի զօրութեամբ կտրում են այն մարդու ձեռքերը, ով որ խաբերայութեան մէջ բռնւի: Մի անգամ այդ երկրի իշխաններից մէկին մեղադրեցին այդ յանցանքի մէջ և երբ թագաւորի հրա-



մանով պէտք է կատարւէր պատիժը, յանկարծ պալատ մտաւ դատապարտւած իշխանի մանկահասակ աղջիկը և խնդրեց, որ իրան թագաւորին ներկայացնեն: Նրան տա-

րան թագաւորի մօտ: «Մեծ թագաւոր, — ասաց նա. — իմ հայրը շատ իրաւացի կերպով դատաւարուած է պատժի և պէտք է դրկւի իւր ձեռքերից: Ահա, կտրել տուր սր-րանք, — գոչեց նա, մեկնելով իւր փոքրիկ ձեռքերը. — այս ձեռքերն էլ պատկանում են իմ դժբաղդ հօրը: Սրանք ըն-դունակ չեն կերակրելու հիւանդ մօրս, թոյլ եղբօրս և փոքրիկ քրոջս: Հրամայիր օրէնքի բոլոր խստութեամբ վարել սրանց հետ, միայն թէ անսխառ մնան հօրս ձեռքե-րը, որովհետեւ միայն նրանք կարող են կերակրել մեր թըշ-ւառ ընտանիքը»: Թագաւորը սաստիկ զգացւեց որդիական այս ջերմ սիրուց և ներեց յանցաւորին:

*Եւնչը՝ դողեց սողջկանն այդ քայլն անելու:
Եւնչն թագաւորը ներեց յանցաւորին:*

10. Անձնագոհ ընկեր

Քաղաքի մի հսկայական շինութեան բարձրունքների վրայ կանգնած էին երկու քարտաշ, որոնցից մէկը ծեր էր, իսկ միւսը երիտասարդ: Ներքեւ, նրանց ոտքերի տակ, ազմկում էր մեծ քաղաքը, իսկ նրանց շուրջը փշում, վա-յում էր սառն քամին:

Քարտաշները սիրով աշխատում էին, ուշադրութիւն չդարձնելով ցրտին ու մռնչող քամուն: Քամին հետզհետէ սաստկանում էր: Վերելակները երերւում էին և քիչ էր մնում, որ կործանւէին: Յանկարծ քամու մի ուժգին հո-տանք միմեանցից բաժանեց վերելակների կապերը, և նը-րանք դղրդալով ցած թափւեցան: Անսխառ մնաց միայն մի տախտակ դերանակալի հետ: Քարտաշները մի հնարքով կարողացան բռնել այդ տախտակից և այդպէս կախւած մնացին բարձրում օդի մէջ:

Քամին մռնչում էր աւելի ուժգին, տախտակը ճար-ճատում և կորանում էր մարդկանց ծանրութիւնից: Այն ժամանակ երիտասարդ քարտաշն ասաց ծերին.

—Երևի մեր վերջը հասել է: Մինչև մարդկանց օգնութեան հասնելը մենք չենք կարող կախուած մնալ այս տախտակից. գուցէ մեզանից մէկը կարողանայ, բայց երկսով անկարելի է այդ, որովհետև տախտակը շուտով կը կոտորւի:

—Տէր Աստուած,—հառաչեց ծերը,—ի՞նչ կըլինի իմ երեխաների վիճակը, եթէ ես մեռնեմ:

—Երեխաներ շատ ունիս:

—Հինգ հատ:

—Իսկ ես մենակ եմ և ոչինչ ու ոչ ոքի չեմ կորցնիլ, եթէ մեռնեմ. Հարց էլ չի կարող լինել, թէ մեզանից որը պէտք է մեռնի. Մնաս բարև, ընկեր:

Եւ երիտասարդ քարտաշն զգուշութեամբ բաց թողեց տախտակն ու թռաւ դէպի ցած. Նրա մարմինն ուժգին թափով դիպաւ սալայատակին և ջարդ ու փշուր եղաւ:

Իսկ ծերունին, ընտանիքի հայրը, ողջ և անմնաս մնաց և իւր ամբողջ կեանքում երախտագիտութեան արցունքներն աչքերին՝ յիշում էր իւր անձնագոհ ընկերոջը:

Ի՞նչն ստիպեց նրիտասարդին անձնագոհ լինել:

11. Բարը

Ա.

Տիգրանը շատ ուրախ էր: Ուրախութիւնից չէր իմանում ինչ անի. իջել էր պարտէզ և քարեր էր շարտում ճնճողուկների վրայ: Թէև ոչ մէկին էլ չդիպաւ, բայց խեղճ ծտերը շատ էին վախենում և նրա ձեռքի ամեն շարժումից վեր էին թռչում ծառի ճիւղերից, նստոտում էին տանիքի վրայ ու նորից իջնում ցանկապատին: Նրանց այդ վախեցած թռչկոտելը շատ էր զլարճացնում Տիգրանին:

Այդպէս ճնճողուկների յետևից ընկած միջոցին յանկարծ նկատեց, որ դարպասի առջև մի աղջիկ էր կանգնած՝ պատառոտած շորերը հագին ու ոտաբոբիկ. Նրա մազերը խիտ-խիտ փնջերով թափւում էին կեղտոտ ճակատին, աչտերին և ուսերին:

—Աղան, քեզ մատանդ...—կամացուկ և երկշուտ ձայնով
կմկմաց աղջիկը:

Տիգրանը հէնց այն է՝ ուզում էր քարը զցել ճնճողուկ-
ներին, կանոց առաւ ու մօտեցաւ աղջկան:

—Ի՞նչ աղքատ ես,—հարցրեց նա, ձեռքով ճակատի



քրտինքը սրբելով:

—Այն... աղքատ եմ... խեղճ եմ... Պատիկ աղա, մի
ողորմութիւն արան,—կրկնեց աղջիկը:

Տիգրանը հետաքրքրութեամբ նայում էր նրան:

Աղջիկը այնպէս տղեղ էր, այնպէս փոքր, նիհար, այն-
պէս արևից սևացած. նրա մեծ, ներս ընկած աչքերի մէջ
և ամբողջ դէմքի վրայ մի հիւանդոտ, ողորմելի բան կար:

—Ի՞նչ հանց ես ուզում, հան,—հարցրեց նա, քարը իւր
բոխ չ մէջ ամուր սեղմելով:—Ապա, բռնիր:

Աղջիկը վատահ պարզեց իւր փոքրիկ, չորացած ձեռքը:

—Ա՛ն,—ասաւ զիժ տղան և նրա ափը դրաւ դեղին
քարի կտորը:

Աղջիկը քարը դէն ջնետեց և ոչինչ էլ չասաւ. նայեց քարին, յետոյ արտասուալից աչքերը բարձրացրեց Տիգրանի վրայ ու գլուխը կախած դուրս գնաց փողոց:

Ոչ մի խօսքով, ոչ մի շարժումով, ոչ մի հայեացքով նա չկշտամբեց Տիգրանին, բայց Տիգրանի ուրախութիւնը յանկարծ չքացաւ, դէմքը մռայլեց. Ի՞նչ էր պատահել, ինչո՞ւ: Արևը առաջւայ պէս պայծառ էր, երկինքը առաջւայ պէս ջինջ, ճնճողուկներն էլ առաջւայ պէս թրուչ կոտում էին և ճրլըլում, բայց Տիգրանն էլ ոչինչ չէր տեսնում:

Յանկարծ վազեց խոհանոց, ինքն իւր ձեռքով կտրեց մի մեծ կտոր հաց և դուրս նետուեց դարպասից: Նայեց աջ, նայեց ձախ, աղջիկը չէր երևում, գնացել էր: Տիգրանը վազեց փողոց, նայեց մէկի, միւսի բակը, չկար...

Տիգրանը վերադարձաւ իրանց բակը և հացը ձեռքին կրթնեց դարպասի անկիւնին:

Կարծես մի ծանր բան նստել էր նրա կրծքին: Ա՛խ, Աստուած, գուցէ այդպէս ծանր չլինէր, եթէ աղջիկը յետ շարտած լինէր քարը, եթէ հայհոյած, մի բան ասած լինէր: Բայց աղքատ աղջիկը արտասուալից աչքերով նայել էր նրան ու լուռ գնացել, ուրիշ ոչինչ:

Նրանից յետոյ ամեն անգամ աղքատի ձայն լսելիս, սեղմւում էր Տիգրանի սիրտը, դուրս էր նետւում, որ տեսնի՝ կարելի է այն աղջիկն է:

Ո՛չ. այն աղջկան էլ երբէք չտեսաւ: Աղջիկը անհետ չքացել էր, տանելով իւր հետ դեղին քարը, կորել էր, կարծես բնաւ աշխարհիս երեսին ծնւած էլ չլինէր...

Ինչո՞ւ յանկարծ փոխուեց նրա տրամադրութիւնը:



13. Ընկերներ

Մենք ունեւինք մեր այգում մի գեղեցիկ աւազան: Ես
շատ սիրում էի այդ աւազանը, երբ նա լցւած էր չիւնում
աղբիւրի յատակ ջրով և մեծ ընկուզենին գողգողում էր
նրա երեսին, ինչպէս հայելու մէջ:

Ես սիրում էի աւազանը և այն ժամանակ, երբ նա
կիսատ էր լինում և ջրորդանից ջուրը աղմկելով թափւում
էր մէջը:

Ամառը շատ անգամ ընտանիքով գնում էինք այդի և
ամբողջ օրն անց էինք կացնում այնտեղ՝ կանաչ ծառերի
տակ կամ աւազանի ափին:

Մի օր մեր այգում այնպիսի բան պատահեց, որ մին-
չև մահա չեմ մոռանայ:

Մայրս, մօրաքոյրս և բոլոր տանեցիք գրօնում էին
այգում:

Աւազանի ափին մնացել էինք ես, իմ մօրաքրոջ որդի
Տելեմարը և նրա մեծ եղբայրը, որ պարկած էր խոտի
վրայ:

Ես և Տելօն աւազանի ափին նստած՝ գրադւած էինք
մի այսպիսի գւարճալի խաղով. Մեր բոբիկ ոտքերը դը-
նում էինք ջրորդանի մէջ. ջուրը մի առժամանակ՝ չէր
թափւում աւազանը, բայց անընդհատ լցւում, ուռչում էր
և երբ մեր ոտքերը յանկարծ յետ էինք քաշում, վարա-
րած ջուրը աղմուկով թափւում էր աւազանը, և այդ մեծ
բաւականութիւն էր պատճառում մեզ:

Մի անգամ էլ, երբ ընկերս կամեցաւ ոտքերը յետ
քաշել, գլխիվայր ընկաւ աւազանը:

Նրա եղբայրը, որ ինձանից հինգ տարով մեծ էր, վեր
թռաւ տեղից և լաց լինելով սկսեց դէս ու դէն վազել:

Ես ինձ կորցրի: Այսքանն եմ միայն յիշում, որ սաս-
տիկ ճշարտով միքանի քայլ վազեցի և յետոյ իսկոյն վերա-
դարձայ ափի մօտ և մի ակնթարթում ես ինձ նետեցի
աւազանի մէջ:

Ջրի ուժեղ թափը վեր նետեց իմ ընկերոջը և ես պինդ բռնեցի նրա կոնատակերից. ոտքերիս միջանի շարժումով մենք մօտեցանք աւազանի աստիճաններին:

Մինչդեռ ես ճիգ էի թափում ազատել Տելօին, աւազանի ափին հաւաքւել էին մայրս և ազգականներս ու լաց ու կոծ էին անում:

Մօրաքոյրս ձեռքերը ծնկներին խփելով գոչում էր.

—Վայ, իմ բալէս... հոտս կոտրւէր, էստեղից չհեռանայի:

—Մի վախենար, քոյրս, որդիդ ազատւել է,—հանգստացնում էր մայրս:

Նոյն այդ րոպէին մեր ծառան էլ երևաց աւազանի միւս ծայրին՝ կրծած վարունգը բռնած, և մեզ երկսիս տեսնելուն պէս՝ ցատկեց աւազանը:

Մինչ նա կրհասնէր մեզ, մենք արդէն կանգնած էինք ամենաբարձր աստիճանի վրայ և շուտով դուրս եկանք ափը:

Մեզ շրջապատեցին մօրաքոյրս և ուրիշները: Լացը փոխւեց ուրախութեան. մեզ զրկում, փայփայում, համբուրում էին:

Իմ խելքը դեռ գլուխս չէր գալիս, շմածի պէս էի: Մայրիկս իսկոյն հանեց շորերս, որից շուրը անձրևի պէս թափւում էր: Յետոյ երկսիս էլ փաթաթեցին դոշակի մէջ և պառկեցրին կանաչ ափի վրայ:

Ես բոլորովին չէի մտածում, որ կարող էինք երկուսս էլ խեղդւել: Միայն սիրտս լի էր այնպիսի ուրախութեամբ, որպիսին երբէք զգացած չէի:

13. Արեւի մօտ

Ա.

Մի անտէր երեխայ՝ ցնցոտիներ հագած կուչ էր եկել պատի տակ: Գարնան անուշ արևը բարի աչքերով նայում էր նրան:

— Կարմիր արև, բարի արև, դու ես միայն ինձ տա-
րացնում, — մտածում էր խեղճ մանուկը. — դու ես միայն
ինձ զգում, համբուրում, ինչպէս երբեմն իմ անգին
մայրս եթէ չէ՞ մարդիկ աչք չեն դարձնում վրաս:

Բայց կամաց-կամաց արևը թեքում էր կանաչ սա-
րերի յետևը. երեխան կարօտով ու արցունքով նայում էր
նրան, մինչև որ ոսկեհեր արևը սահեց ու անցաւ սարի
այն կողմը:

— Չէ, ես չեմ կարող առանց արևի, — վճռեց մանու-
կը. — ես պիտի երթամ արևի մօտ. ես դիտեմ ճամպան.
այ, այս սարի յետևը:

Վճռեց ու ճամպայ ընկաւ:

Բ.

Մութը իջնում էր և կանաչ սարը սևերով ծածկում:
Ճամպին մարդիկ էին հանդիպում և հեռւից ձայն
տալիս.

— Է՛յ, հէ՛յ, ո՞վ ես դու:

— Ճամպորդ տղայ եմ, — պատասխանում էր երեխան:

— Ո՞ւր ես գնում:

— Արևի մօտ. այ, այս սարի յետևը:

— Յիմար տղայ, — ասում էին նրանք ու հեռանում:

Բայց երեխան ուշ չէր դարձնում. նա պարզ զգում
էր, որ արևը այս սարի միւս երեսին է. մի քիչ էլ, մի
քիչ էլ ու կրկինի արևի մօտ:

Ու անվախ, վստահ քայլերով գնում էր վերև, բարձր,
միշտ բարձր:

Գ.

Բաւական ուշ էր արդէն, երբ լսեց մօտիկից շների
հաչոց ու տեսաւ՝ շատ մօտիկ մի կրակ է շողշողում:

— Ո՞վ ես, — լսեց խաւարի միջից մի ձայն. — ո՞ւր ես
գնում:

— Անտէր ճամպորդ տղայ եմ. գնում եմ արևի մօտ:
Աստ, ո՞րն է արևի ճամպան. մութն է, էլ սարերը չեմ
տեսնում:

Ճրագը ձեռքին մօտեցաւ երեխային մի մարդ, նայեց նրան, նայեց ու սասաց քնքոյշ ձայնով.

— Ի՞նչ դադրած կըլինիս ու քաղցած. դնանք ինձ մօտ: Ասաց բարի անձանօթը, բռնեց երեխայի ձեռքից ու տարաւ տուն:

Դ.

Նրա տունը մի հասարակ խրճիթ էր. մէջտեղում վառուում էր օջախը, որի շուրջը նստել էին բարի մարդն ու կինը և երեք փոքր երեխաներ, որոնք համարեա հասակակից էին ճամպորդ երեխային: Խրճիթին կից մի մեծ սրահում որոճում էին ոչխարները: Նա հովիւ էր, սարի հովիւ:

— Սիրելի երեխաներս, ձեզ եղբայր եմ բերել, թող չլինիք երեք եղբայր, լինիք չորս. երեքին հաց տւող ձեռքը չորսին էլ կըտայ: Սիրեցէք սրան. եկէք համբուրեցէք ձեր նոր եղբօրը:

Ամենից առաջ հովիւի կինը մօտ եկաւ, գրկեց երեխային և մօր պէս ջերմ-ջերմ համբուրեց. յետոյ երեխաները եկան և եղբօր պէս համբուրեցին նրան:

Երեխան իւր սրտում մի քաղցր տաքութիւն զգաց, և նրան այնպէս թւաց՝ թէ արևը հէնց ուղիղ խրճիթի վերևն է վառւում...

Ե.

Ուրախութիւնից լաց եղաւ. անուշ-անուշ լաց եղաւ և պատմեց բոլոր իւր գլխի եկածները:

Յետոյ օջախի առջև սեղան նստեցին. կերան, խմեցին, ծիծաղեցին: Մայրը նրանց համար անկողին շինեց և ամենքին քնացրեց իւր կողքին:

Երեխան շատ էր յոգնած: Տեղը մտաւ թէ չէ, իսկոյն աչքերը խփեց ու քնեց...

Երագի մէջ նա ժպտում էր ուրախ:

Իբրև թէ ինքը արևի մօտ էր, գրկել էր նրան ամուր ու պարկել նրա գրկում, տաք ու երջանիկ...

Մէկ էլ սրտի ուրախութիւնից վեր թռաւ, զարթնեց

ու տեսաւ, որ արևի փոխարէն իւր նոր մօր գրկումն էր։
Եւ նրան թւաց, որ արևը ոչ թէ այս խրճիթի վրան է,
այլ հէնց այս խրճիթի մէջը, որ ինքը ուղիղ հէնց արևի
գրկումն է...

Գտնու արդևօր ևրևխան արևուր:

14. Ամենաթանկագին բանը

—Տո՛ւր ինձ այն, ինչ որ ամենից թանկագինն է քեզ
համար, և ես կրթշկեմ քեզ,—ասաց պառաւ վհուկը վի-
տաւոր թռչնակին, որը մենակ ընկած էր ջրի ափին և մեռ-
նում էր:

Կարմիր արիւնը կաթիլ-կաթիլ ծորում էր նրա կրծ-
քից սպիտակ աւազի վրայ, և կեանքն արագ թողնում էր
նրա փոքրիկ մարմինը, որ արդէն սկսում էր սառչել:

—Ամենից թանկագինը, իհարկէ, կեանքն է,—մտածեց
թռչնակը:—Բայց մի՞թէ կրխի բարի վհուկը ինձնից այն
կեանքը, որ ինքը խոստանում է ինձ տալ: Բարի վհուկը
արևի հանաք է անում:

Եւ նրա վրայ ուղղելով իւր հանգչող աչքերը՝ թռչնակը
շնչաց.

—Լաւ, բժշկիր. կըտամ քեզ այն, ինչ որ ամենից թան-
կագինն է ինձ համար:

Վհուկը դիպաւ նրա վէրքին իւր գաւազանով. վէրքը
սուղջացաւ, և թռչնակը ուրախ վեր թռաւ, կենդանացած
ու առողջ:

—Իսկ հիմա տուր ինձ թևերդ,—ասաց վհուկը:

—Ո՛չ,—բացականչեց թռչնակը՝ ցնցւելով,—ոչ երբէք:

—Մի՞թէ թևերդ ամենից թանկագինն բանը չեն քեզ
համար:

—Հէնց դրա համար է, որ չեմ կարող տալ,—կամա-
տակ շնչաց թռչնակը:—Առ իմ կեանքը. Ս.Ելի լաւ է բո-
րովին չապրեմ, քան թէ ապրեմ և չկարողանամ թռչել:

—Թոխր, —ասաց վհուկը, — ես չեմ կամենում քո մահը: Բայց յիշիր, որ ամենից թանկագին բանը կեանքից էլ թանկ է:

Ի՞նչն է ամենաթանկագին բանը մանուկների համար:

15. Մուրացկան

Ես անցնում էի փողոցով: Ինձ կանգնեցրեց մի ծեր, ոչ թից ընկած մուրացկան: Աչքերն արտասուալից, ուռած ու կարմրած, շրթունքները կապտած, հագին լաթեր, մարմնի վրայ անմաքուր վերքեր:

Օ, ինչ այլանդակ կերպով մաշել-կերել էր այդ անբաղդ արարածին աղքատութիւնը:

Նա ինձ պարզել էր իւր կարմրած, ուռած ու կեղտերով ծածկւած ձեռքը: Նա հառաչում էր, նա խեղդւած ձայնով ողորմութիւն էր աղերսում:

Սկսեցի գրպաններս տակն ու վրայ անել: Բան չգտայ — ոչ փող, ոչ ժամացոյց, ոչ էլ նոյն իսկ թաշկինակ: Կեսու ոչինչ չէի վերցրել: Իսկ մուրացկանը շարունակ սպասում էր... և նրա կարկառած ձեռքը թոյլ կերպով երերւում ու ցնցւում էր:

Ինքս ինձ կորցրած, շփոթւած՝ ես ամուր սեղմեցի այդ դողդոջիւն, այդ կեղտերով ծածկւած ձեռքը. — «Թողութիւն արա՛, եղբայր, ես ոչինչ չունիմ»:

Մուրացկանն իւր կարմրատակած աչքերն յառեց վրաս: Նրա կապտած շրթունքները քմծիծաղ տւին, և նա էլ իւր կողմից պինդ սեղմեց իմ սառած մատները:

— Է՛հ, ի՞նչ արած, եղբայր, — ծամծամեց նա, — դրա համար էլ շնորհակալ եմ. այդ էլ մի ողորմութիւն է, եղբայր»:

Ես հասկացայ, որ ինքս էլ ողորմութիւն ստացայ իմ եղբօրից:



16. Աղբիւր

Ամառնային մի տաք օր երեք ճանապարհորդ պատահեցան իրար մի մաքուր և սառն աղբիւրի մօտ, որ դուրս էր բղխում գետնից՝ մեծ ճանապարհից ոչ հեռու: Նրա շուրջը բուսել էին ստւերախիտ ծառեր և գետինը ծածկւած էր խիտ կանաչով: Արտասուքի նման պարզ ջուրը, հաւաքւելով քարից շինւած մի խոր գուշի մէջ, դուրս էր հոսում այնտեղից և արագավազ առւակի ձևով վազում մարդագետնի միջով:

Ճանապարհորդները հանգստացան ծառերի ստւերի տակ և ապա աղբիւրի սառն ջրով զովացան: Աղբիւրի գլխին նրանք նկատեցին մի քար, որի վրայ գրւած էր հետևեալը. «Նմանւիր այս աղբիւրին»: Ծանապարհորդները կարդացին և սկսեցին մտածել, թէ ի՞նչ է նշանակում այդ:

— Իա մի լաւ խրատ է, — ասաց ճանապարհորդներից մէկը. — այս աղբիւրը հոսում է անդադար, գնում հեռու երկրներ, իւր ջրի մէջ ընդունում է ուրիշ շատ առւակներ և մեծ գետ դառնում. այսպէս էլ մարդը պարտաւոր է անդադար հոգայ իւր գործերը և այն ժամանակ նա յաջողութիւն կունենայ — մեծ հարստութիւն կը դիզէ:

— Ոչ, — ասաց երկրորդ ճանապարհորդը. — իմ կարծիքով դա նշանակում է, որ մարդս պէտք է իւր հոգին այս աղբիւրի ջրի նման մաքուր պահէ վատ մտքերից ու ցանկութիւններից: Այս ջուրն այժմ գլարթացնում և ոյժ է տալիս նրանց, որոնք մեզ նման գալիս են հանգստութիւն վայելելու նրա շուրջը. իսկ եթէ այս աղբիւրն անցնէր ամբողջ աշխարհը՝ նրա ջուրն էլ կը պղտորւէր, կը փչանար և այն ժամանակ էլ ի՞նչ օգուտ կը տար նա, ով ջուր կը խամէր նրանից:

Երրորդ ճանապարհորդը ժպտաց և ասաց.

— Իրա միտքն այն է, որ աղբիւրն ամեն ժամանակ ձրի ջուր է տալիս ծարաւ մարդկանց և մեզ ուսուցանում, որ մենք էլ բարիք գործենք բոլորին նոյնպէս ձրի՝ առանց վարձատրութեան կամ շնորհակալութեան ակնկալութիւն ունենալու:

17. Թանկագին մատանի

Հայրն իւր ամբողջ հարստութիւնը բաժանեց երեք որդիների մէջ՝ իւր մօտ պահելով միայն մի շատ թանկագին մատանի:

—Այս մատանին, — ասաց նա, — ես կրտամ ձեզանից նրան, ով մի մեծ բարիք կը գործէ: Գնացէք օտար երկրներ և ուղիղ մի տարի յետոյ վերադարձէք տուն. և այն ժամանակ կը պատմէք ինձ, թէ ով ինչ է արել:

Անցաւ մի տարի: Որդիքը վերադարձան և պատմեցին հօրը, ինչ որ անցել էր իրանց գլխովը:

—Մի հարուստ մարդ, — ասաց մեծ որդին, — առանց ստացականի յանձնեց ինձ մի պարկ ոսկի և բացի երկսիցս՝ ուրիշ ոչ ոքի յայտնի չէր այդ: Շուտով այդ հարուստը մեռաւ: Ես այդ փողը վերադարձրի նրա այրիին:

—Իո՞ւ ազնիւ ես գտնել, որդեանկ, — ասաց հայրը:

—Մի օր ես անցնում էի ջրաղացի մօտով, — խօսեց միջնակ որդին, — տեսնեմ՝ մի երեխայ ընկաւ ջուրը և քիչ էր մնում, որ խեղդւէր: Ես ընկայ ջուրը և ազատեցի նրան:

—Իո՞ւ, գաւակս, մեծահոգութիւն ես արել, քո կեանքը՝ ուրիշին ազատելու համար վտանգի ենթարկելով:

—Անտառի միջով անցնելիս, — պատմեց կրտսեր որդին, — տեսայ, որ երկու աւազակ կողոպտում են մի մարդու: այդ մարդը իմ ամենաոխերիմ թշնամին էր: Բայց ես վազեցի նրան օգնութեան և մենք երկսով փախցրինք այն անպիտաններին:

—Ո՞հ, թանկագին գաւակս, եկ, համբուրեմ ճակատդ, — բացազանչեց հայրը. — ահա, վեր առ մատանին, սա քոնն է: Թշնամիներին ծառայելը — ամենամեծ բարիքն է: Վատութեան դէմ բարիք գործելով՝ մարդս Աստծուն է նրմանում:

Ուրեմն ի՞նչն է ամենամեծ առաքինութիւնը:

18. Թռչնակի երգը

Ա.



Մի մեծ քաղաքում, նեղ ու ամուր բանդի մէջ նստած էր մի խեղճ բանդարկեալ: Երկար տարիներ նստած էր նա այնտեղ, հիւանդ ու տրտում: Ամբողջ օրը կանգնում էր նեղլիկ պատուհանի առջև, նայում էր դրսի աշխարհին ու կարօտով մտածում իւր սիրելիների, իւր փոքրիկ զաւակների մասին: Մտածում էր՝ գուցէ վաղուց արդէն ամենքը մոռացել են իրան ու մեռած են համարում:

Մտածում էր՝ արդեօք սր՝ իւր հայրենիքում:

Մի երեկոյ, երբ արևը մայր էր մտնում, նա մօտեցաւ պատուհանին: Պատուհանի դիմաց հանդարտ սաւառնում էր արծիւր:

— Արծիւ, արծիւ, — կանչեց բանդարկեալը: — Արի, նստիր պատուհանիս, պատմիր՝ թէ ինչ է կատարւում աշխարհում, մի երգ երգիր ինձ համար:

— Ոչ, — պատասխանեց արծիւր, — քո պատուհանը շատ նեղ է, նստելու տեղ չկայ ինձ համար: Ես չեմ կարող քեզ պատմել, թէ ինչ է կատարւում աշխարհում: Ես սակաւ եմ իջնում ներքև: Ես իմ բունը շինում եմ բարձր ժայռերի ու դարաւոր կաղնիների վրայ: Ես թռչում եմ բարձր, բարձր և իմ երգը միայն անմահ արևն է լսում:

Ու լայն թևերը թափահարեց, վերացաւ դէպի ամպերը: Բանդարկեալը դարձաւ ծտերին, որոնք իւր պատուհանի շուրջը գնում գալիս էին.

— Ճնճողուկներ, ան ճնճողուկներ, եկէք, նստեցէք պա-

տուհանիս, դուք պատմեցէք՝ ինչ է կատարուում աշխարհում: Մի երգ երգեցէք ինձ համար:

—Միւ, ծիւ, մենք ժամանակ չունինք: Մենք գործ ունինք: Մենք գնում ենք հաւաքելու ջրադադպանի թափած հատիկները, — ծըլւլացին ճնճողուկներն ու փախան:

Բ.

Յանկարծ թուաւ — եկաւ մի գեղեցիկ թռչնակ, պտտուեց բանդի պատուհանի առաջ ու նստեց երկաթէ ձողի վրայ:

— Բարով եկար, իմ սիրուն սոխակ, Շնորհակալ եմ, որ ինձ այցելեցիր: Պատմիր, ի՞նչ է կատարուում աշխարհում, մի երգ երգիր ինձ համար:

— Ես կրպատմեմ քեզ, թէ ինչ է կատարուում աշխարհում. ես կըրգեմ քեզ համար, — պատասխանեց սոխակը:

Եւ այնպէս սրտալի երգեց, որ խեղճ բանդարկեալը ուրախութիւնից լաց եղաւ. Ընկաւ ծղօտի վրայ, անվերջ լաց էր լինում ու լսում:

«Երէկ, լուսադէմին, — երգում էր սոխակը, — այնպէս զով էր ու թարմ: Ես թռայ, իջայ քո տնակի առջև, պարտէզը, նստեցի կանաչ թփին, բաց պատուհանի դէմ ու երգում էի:

«Նոր գարթնել էր քո փոքրիկ տղան ու հարցնում էր՝ «Ուր է հայրիկս, մայրիկ, երբ կըգայ հայրիկս»:

«Քո հարազատները միշտ յիշում են քեզ ու լաց են լինում. քեզ շատ են կարօտել, սպասում են քեզ ամեն օր:

«Մի վհատիր. Աստուած տեսնում է, որ անմեղ ես դու: Կազատես այս բանդից, կըտեսնես քո տունը, քո ընտանիքը և դարձեալ կապրես, ինչպէս ապրում էիր մի ժամանակ:

«Ամառայ խաղաղ երեկոներին քո կնոջ հետ կընստես ձեր դռանը, երեխաներդ աղմուկով շուրջդ կըխաղան, իսկ պարտիզում, կանաչ թփի վրայ կընստեմ ես ու կերգեմ ձեզ համար»...

Սոխակը երգում էր, իսկ բանդարկեայր՝ երեսնիվայր ընկած իւր ծղօտէ անկողնի վրայ լաց էր լինում, լաց էր լինում յուսով ու կարօտով...

Ինչո՞ւ էր լաց լինում՝ բանդարկեայր:

19. Ճնճողուկ

Որսորդութիւնից վերադառնալիս՝ ես անցնում էի պարտիզի միջով: Շունս վազում էր իմ առաջից: Յանկարծ նա իւր քայլերը փոքրացրեց և կամաց ու զգուշութեամբ սկսեց առաջ գնալ, կարծես որսի հոտ էր առել:

Ես նայեցի փոքր ինչ հեռուն, ճանապարհի վրայ, և տեսայ մի փոքրիկ ճնճողուկ, որի կտուցի շուրջը դեռ դեղին էր, իսկ գլուխը աղւամազով ծածկւած: Նա ցած էր ընկել բնից (քամին սաստիկ շարժում էր ճանապարհի երկու կողմի ծառերը) և անշարժ ընկած էր միայնակ և անօգնական, փռած ունենալով դեռ հազիւ դուրս եկած փոքրիկ թևերը:

Երբ իմ շունը ծանրաքայլ մօտենում էր նրան, յանկարծ մօտակայ ծառի վրայից մի պառաւ, սև կուրծքով ճնճողուկ, քարի պէս նետւելով, ընկաւ ուղղակի նրա առաջը և յուսահատ ու սաստիկ ճըճըւոցով մի երկու անգամ թռաւ ուղղակի դէպի շան դունչը: Նա յարձակւեց, որ փրկէ, պաշտպանէ իւր ձագը: Բայց նրա փոքրիկ մարմինը դողում էր երկիւղից, նրա ձայնը կատաղի էր. նա ոյժից ընկնում էր, նա զոհւում էր: Ի՞նչպիսի ահագին հրէշ պէտք է երևար նրան շունը. բայց և այնպէս նա չկարողացաւ հանգիստ նստել բարձր ու անվտանգ ճիւղի վրայ. նրա ոյժն աւելի թոյլ լինելով, քան թէ կամքը, վայր ձգեց նրան այնտեղից:

Շունը կանգ առաւ, յետ քաշւեց... Երևի նա էլ ճանաչեց այդ ոյժը:

Ես շտապեցի շփոթւած շանս յետ կանչել և հեռացայ՝ զգալով իմ մէջ յարգանք դէպի այդ փոքրիկ թռչունը:

20. Ամենապէտքական բանն աշխարհում

Ա.

Ժամանակով հեռաւոր և ոսկի արևելքում մի խելացի և արդարամիտ թագաւոր է եղել: Նա ունեցել է երեք որդի:

Եղաւ՝ որ այդ թագաւորը ծերացաւ և ուղեց կառավարութեան դեկն յանձնել իւր որդիներից նրան, որն աւելի ընդունակ կըլինի այդ գործին:

Եւ դրա համար նա մի օր կանչեց իւր երեք որդիներին և ասաց.

—Սիրելի զաւակներս, տեսնում էք, որ ձեր հայրը ծերացել է և էլ չի կարողանում երկիրը կառավարել: Ես վաղուց իջած կըլինէի իմ գահից, եթէ կատարւած տեսնէի այն մեծ միտքը, որը երկար տարիներ պաշարել էր հոգիս: Եւ այժմ, ով որ ձեզանից իմաստուն կերպով լուծէ իմ այդ միտքը, նա կըստանայ իմ թագաւորութիւնը, նա կըկառավարէ իմ ժողովուրդը:

—Ապրած կենայ մեր սիրելի հայրը, սո՛ւրբ է մեզ համար նրա վեհ կամքը: Այդ ի՞նչ մեծ միտք է, որ չէ կարողացել լուծել նրա իմաստուն հոգին:

—Ահա տեսնում էք այն ահագին և մեծածաւալ շտեմարանը, որ վաղուց շինել եմ տւել: Իմ ցանկութիւնս էր լցնել դա մի այնպիսի բանով, որ ամենապէտքականը լինի աշխարհիս երեսին և որով կարողանամ բաղդաւորացնել իմ ժողովուրդը: Այդ շտեմարանը դեռ դատարկ է մնում: Եւ այժմ ձեզանից ով որ կարողանայ այդ շտեմարանը իւր բոլոր անկիւններով, ծայրէ-ծայր լցնել աշխարհիս ամենապէտքական բանով, նա թող լինի իմ ժառանգը: Առէք գանձերիցս, որքան որ կուզէք, և առանձին-առանձին ճանապարհ ընկէք քաղաքից-քաղաք, երկրից-երկիր, գտէք այդ բանը և լցրէք իմ շտեմարանը: Ձեզ եօթն անգամ քառասուն օր ժամանակ եմ տալիս:

Որդիքը համբուրեցին հօր ձեռքն ու ճանապարհ ընկան:

Բ.

Ամբողջ եօթն անգամ քառասուն օր նրանք շրջեցին քաղաքից-քաղաք, երկրից-երկիր, տեսան ուրիշ-ուրիշ մարդիկ, ուրիշ-ուրիշ սովորութիւններ և որոշեաժ ժամանակին կանգնեցին հօր առաջ:

— Բարո՛վ էք եկել, թանկագին որդիներ: Գտե՛լ էք արդեօք ամենապէտքական բանն աշխարհումս:

— Այո՛, գտել ենք:

Եւ հայրը վեր առաւ որդոցն ու նրանց հետ գնաց շտեմարանի առաջ: Այնտեղ հաւաքեաժ էին բոլոր պալատականներն ու ժողովուրդը:

Թագաւորը մօտեցաւ շտեմարանի դռանը, բաց արաւ և կանչեց մեժ որդուն.

— Ի՞նչո՛վ կըլցնես այս ահագին շտեմարանս, սիրելի որդեակ, ինչ բանով, որ աշխարհումս ամենապէտքական բանը լինի:

Եւ մեժ որդին հանեց գրպանից մի բուռը հացահատիկ և պարզելով դէպի հայրը, ասաց.

— Հացով կըլցնեմ այս ահագին շտեմարանը, թանկագին հայր: Ի՞նչ կայ աշխարհումս աւելի պէտքական, քան հացը: Ո՞վ կարող է առանց հացի ապրել. Շատ թափառեցի, շատ բան տեսայ, սակայն հացից աւելի պէտքական ոչինչ չգտայ:

Այն ժամանակ հայրը կանչեց միջնակ որդուն և նոյն հարցը տւեց, ինչ որ մեժին:

Միջնակ որդին հանեց գրպանից մի բուռը հող և պարզելով դէպի հայրը՝ ասաց.

— Հողո՛վ կըլցնեմ այս ահագին շտեմարանը, թանկագին հայր: Ի՞նչ կայ աշխարհումս աւելի պէտքական, քան հողը: Առանց հողի հաց չի լինի, իսկ առանց հացի ո՛վ կարող է ապրել. Շատ թափառեցի, շատ բան տեսայ, սակայն հողից աւելի պէտքական ոչինչ չգտայ:

Ամենից վերջը հայրը կանչեց կրտսեր որդուն:

— Ինչո՞վ կըլցնես այս ահագին շտեմարանս, սիրելի որդեակ, ի՞նչ բանով, որ աշխարհումս ամենապէտքականը լինի:

Կրտսեր որդին հաստատուն քայլերով մօտեցաւ շտեմարանին, անցաւ շէմքը և զննեց այդ ահագին, մեծածաւալ և մութ ու խաւար շինութիւնը: Բոլորը հետաքրքիր նայում էին նրան:

Ապա նա գրպանից հանեց մի փոքրիկ մոմ, հրահանք խփեց կայծաքարին, կայծ հանեց և վառեց մոմը: Բոլորը կարծում էին, թէ նա ուզում է կրակի լուսով լաւ զննել շտեմարանը:

— Դէհ, ասա՛, որդի, ինչո՞վ կըլցնես, — անհամբեր ձայնով նորից հարցրեց հայրը:

— Լուսով կըլցնեմ այս ահագին շտեմարանը, իմաստուն հայր, լուսով միայն: Շատ թափառեցի, շատ աշխարհներ տեսայ, շատ բան սովորեցի, սակայն լոյսից աւելի պէտքա կան ոչ մի բան չգտայ: Կոյսն է ամենապէտքական բանն աշխարհում: Առանց լոյսի հողը հաց չի ծնի, առանց լոյսի հողի վրայ մարդ չէր լինի: Շատ թափառեցի, շատ երկիրներ տեսայ, շատ բան սովորեցի և գտայ, որ լուսաւորութիւն ու գիտութիւնն է ամենապէտքական բանը աշխարհում: Եւ լուսով կարելի է լցնել ո՛չ միայն այս ահագին շտեմարանը, այլ և ամբողջ աշխարհը իւր բոլոր անկիւններով, ծայրից-ծայր:

— Ապրի՛ս, — գոչեց ուրախացած հայրը. — քեզ է արժանի իմ գահն ու իշխանութիւնը, քանի որ լուսով ու գիտութեամբ պէտք է լցնես թագաւորութիւնդ և մարդկանց հոգիները:

— Ապրած կենայ մեր եղբայր թագաւորը, — գոչեցին միաբերան եղբայրները: Ուղիղ որ՝ նա գտաւ ամենապէտքական բանն աշխարհումս:

— Ապրած կենայ մեր երիտասարդ լուսաւոր թագա-

ւորը, — գոչեցին ուրախացած պալատականներն ու ժողովուրդը:

Եւ հայրը գրկեց կրտսեր որդուն, ձգեց նրա ուսերի վրայ շողշողուն ծիրանին և տարաւ, նստեցրեց իւր գահի վրայ:

Ամբողջ ժողովուրդն ընկաւ մեծ ուրախութեան մէջ, երգեց ու պարեց քառասուն օր, քառասուն գիշեր, որ ունեցաւ նորից մի խելացի ու լուսամիտ թագաւոր:

Ի՞նչն է ամենապէտքաւան ըսնը մարդու համար ևւ ինչո՞ւ:

21. Երգի հրապոյրը

(Հ Է Ք Ի Ա Թ)

1.

Մեզնից հազար-հազար տարի առաջ, մեզնից շատ-շատ հեռու՝ կապոյտ ծովերի միւս ափում կար մի աշխարհ:

Այնտեղ ծաղիկներ կային, նաշխուն ու սիրուն ծաղիկներ, թիթեռների պէս փուլած ժայռերի ու դաշտերի վրայ և նրանց անոյշ հոտով լցել էին այդ աշխարհի սարերն ու ձորերը:

Այնտեղ աղբիւրներ կային, պայծառ ու քչքչան՝ մանուկների պէս, որոնք ուրախ ու դէպրթ թռչկոտում էին քարից քար՝ ծաղիկները համբուրելով:

Բայց այնտեղ մարդիկ չար էին և անգութ:

Մի խեղճ, մի որբ ու աղքատ մանուկ էր ապրում այդ մարդկանց մէջ. նա գիշերը տեղ չունէր գլուխը դնելու, նա չունէր ուտելու և շոր՝ հագնելու:

Նա մենակ էր, ինչպէս մի թռչուն՝ ամայի ժայռերի մէջ:

Եւ նա մեծացաւ բոլորի աչքի առաջ՝ անտես և անյայտ. կերակրւում էր դաշտի բոյսերով և պատսպարւում անտառների ու այրերի մէջ:

Բայց բոլոր մարդկանցից ծածուկ՝ նա զննում էր մարդ-

կանց սրտերը և տեսնում, որ քարից են այդ սրտերը, ժեռ քարից:

Եւ երբ բաւական մեծացաւ ու այդ աշխարհի բոլոր մարդկանց սրտերը զգնեց ու շօշափեց, վշտացած համոզւեց, որ բոլորի սրտերը քար են, իսկական քար:

Այն ժամանակ նա թողեց այդ քարասիրտ աշխարհը և ճամպայ ընկաւ մի ուրիշ, լաւ աշխարհ գտնելու համար:

II.

Շատ գնաց, թէ քիչ, միայն նա հասաւ ծովափին և երբ օփի աւազների վրայ շրջում էր, տեսաւ այնտեղ ընկած մի սիրուն, շողշողուն ձուկը:

Ձուկը նրան որ տեսաւ, դարձաւ, մարդու լեզուով ասաց.

— Բարի տղայ, ծովի ալիքն ինձ դուրս ձգեց աւազների վրայ և ես չեմ կարող գնալ ծովը քոյրերիս մօտ. խղճանք ինձ, վերցրո՛ւ, ծովը ձգիր:

Մանուկը, որ՝ բարի սիրտ ունէր, առանց վախենալու գրկեց ձկանը և զգուշութեամբ տարաւ, ձգեց ծովը:

Եւ երբ ձուկը փաթափւեց առաջին ալիքին, ասաց բարի մանուկին.

— Ինչ որ սիրտդ ուզում է՝ ասանք, կրկատարեմ քո արած լաւութեան փոխարէն:

Մանուկը մի փոքր մտածեց և ասաց.

— Ինձ մի այնպիսի հնար տո՛ւր, որ մարդկանց կրծքի տակ քարն իսկական սիրտ դարձնեմ:

— Դու սէր ես ուզում, հրաշալի տղայ, շատ լաւ: Կրտսերի ծովափի եղեգներից մէկը և սրինգ շինիր, գնանք մարդկանց մէջ և երգիր: Եւ երբ կրտեսնես, որ նրանց աչքերն արցունքով լցւեցին, այն ժամանակ կիմանաս, որ քարը հալւեց, սիրտ դարձաւ...

Այս ասաց ձուկը և իջաւ դէպի ծովի խորքը:

Մանուկն իսկոյն կտրեց եղեգնը, սրինգ շինեց և սկսեց սուլել: Այնպէս քաղցր, այնպէս հոգեգրաւ ու անուշ դուրս հոսեցին հնչիւնները սրնգի միջից, որ բոլոր թռչունները կանգ առան և սկսեցին ականջ դնել:

III.

Մանուկն շտապեց մարդկանց մօտ, մտաւ մարդաշատ քաղաքը, կանգնեց հրապարակի մէջ և սրինգը նւագեց:

Քնքոյշ ու գեղեցիկ՝ ուղղակի մանուկի սրտի խորքից դուրս ցայտեցին երկնային շքեղ երգերը:

Նա երգում էր արցունքով թրջւած հացը աղքատների, ցուրտ, անտուն գիշերները աշնան. նա երգում էր փակ դռներն ու քար սրտերը մարդկանց, անտէր, անտէրունջ մենակութիւնը որբերի:

Մանուկի երգերը տարածեցին հրապարակի մէջ, մտան ամեն խրճիթ և տուն, փշրեցին բոլոր սրտերի քարերը և ծորեցին սրտերի խորքերը:

Եւ այդ մեղմ հնչիւնները լցրին մարդկանց սրտերն անհուն սիրով, որը ծովի պէս յուզւում էր և ափերից դուրս թռչում: Մարդիկ ուզում էին դուրս վազել, սիրով ու կարօտով գրկել, փայփայել մի ուրիշ, անծանօթ մարդու, գգւել, համբուրել նրան ու մեռնել նրա համար:

Եւ ահա մարդիկ դուրս թռան տներից, վազեցին հրապարակ, շրջապատեցին մանուկին, առաջին անգամ նկատեցին, որ աղքատ է նա ու մենակ. գրկեցին և համբուրեցին նրան և իրանց կեանքում առաջին անգամ արտասւտեցին ու վշտահար հեկեկացին:

Մանուկը նւագում էր աւելի քաղցր, աւելի զգայուն և սրտառուչ, իսկ մարդիկ բոլորը, բոլորը լսում էին հոգեզմայլ և լալիս էին ու լալիս:

Ահա այդ օրւանից աշխարհ եկաւ երգը. երգի միջոցով հալեցին քար սրտերը և այդ օրւանից՝ սէրը վշտի հետ անբաժան բուն դրեց մարդկանց սրտերի մէջ:

Ի՞նչպէս ազդեց իրազմարդկանց վրայ:

22. Հաստատուն տուն

I.

Հին ժամանակ մի հայր ունէր երկու որդի. մէկի անունը Սողոմ էր, միւսինը Նաղէմ:

— Գնացէք, շրջեցէք աշխարհը և ամեն տեղ շինեցէք ձեզ համար այնպիսի տներ, որ ոչ քամին կործանէ, ոչ կրակն այրէ, ոչ գողը մտնի և ոչ ժամանակը մաշէ, — ասաց որդիներին մի օր իմաստուն հայրը:

«Քո խօսքը մեզ համար սուրբ է, կրկատարենք, ինչ որ պատւիրեցիր», ասացին որդիները և համբուրեցին իրանց հօր իմաստուն աչքերը:

Ժամանակ անցաւ... Սողոմոն ու Նադէմը շրջում էին աշխարհը: Նրանք իրանց հօր խրատը միտները լաւ պահել էին և երկուսն էլ ճշտութեամբ կատարում էին, ինչ որ նա պատւիրել էր:

Սողոմոն, ամեն տեղ, ուր գնում էր, շինում էր իւր համար տուն, և որպէսզի ոչ քամին կործանէ, ոչ կրակն այրէ, ոչ գողը մտնի և ոչ էլ ժամանակը մաշէ, նա իւր տան պատերը շարում էր ամուր քարերից, կտուրը ծածկում էր երկաթով և դարպասը շինում էր շատ պինդ... Եւ որպէսզի, եթէ մի օր գայ այնտեղ, նեղութիւն չքաշէ, նա պատրաստում էր իւր տան մէջ մահիճ, մահճակալ, ամաններ և վերջապէս բոլորը, ինչ որ հարկաւոր էր ապրելու համար...

Եւ այդպէս նա իւր հարստութիւնը, աշխատանքը և ժամանակը — բոլորը գործադրում էր այդ բաների վրայ և էլ ուրիշ բանի մասին չէր կարողանում մտածել. բայց էլի գոհ և ուրախ էր իւր արածով:

Իսկ Նադէմը, ուր որ գնում էր, իւր եղբօր նման քարէ տներ չէր շինում: Նա միտը լաւ էր պահել հօր ասածը և աշխատում էր այնպիսի տներ շինել, որ ոչ քամին կործանէր, ոչ կրակն այրէր, ոչ գողը մտնէր և ոչ իսկ ժամանակը մաշէր...

Նա դրա համար մտնում էր մարդկանց մէջ, ասում, խօսում, ծիծաղում էր նրանց հետ, երգում էր ուրախութեան երգեր և սովորեցնում էր ուրիշներին: Երբ նա բարձր և ուրախ ձայնով երգում էր իւր երգերը, մարդիկ չորս կողմից խմբերով հաւաքւում էին նրա շուրջը, լսում

էին նրան հիացած և ուրախ ու ժպտալով նայում էին նրա աչքերի մէջ:

Եւ ամենքը նրան սիրում էին այնպէս, ինչպէս իրանց մայրիկին. նրան ոչ ոք չէր մոռանում և բոլորը պինտում էին նրան ամեն տեղ: Նա չէր ուզում հարուստ դառնալ, աշխատում էր, բայց աշխատածը չէր պահում: Ինչ որ ունենում էր, բաժանում էր մարդկանց հետ:

Նա ամեն տեղ էր — աշխատող մարդկանց հետ արհեստանոցներում կամ դաշտերում և ինքն էլ աշխատում էր: Նա լինում էր այրի կանանց խրճիթներում, խօսում, ուրախացնում էր նրանց և խաղացնում ու ծիծաղեցնում էր նրանց որբերին: Նա ճանապարհների վրայ էր՝ յոգնած ու ծանրացած ճանապարհորդների հետ և իւր երգերով, ուրախ զրոյցներով նրանց զլարճացնում և ճանապարհի երկարութեան ճանճրոյթը ցրում էր:

Եւ այսպէս նա ամեն տեղ էր, ամենքի հետ և ուրախ ու երջանիկ՝ իւր արածով:

II.

Տարիներ յետոյ Սողոմն ու Նաղէմը վերադառնում են իրանց հայրական տունը:

Սողոմը ներս մտաւ հայրական դարպասից ծանր բեռներով ու պարծանքով և բարեկամներն ու քոյրերը դիմաւորեցին նրան խոնարհութեամբ ու առանց ժպտի, որովհետև Սողոմն ինքն էլ չէր ժպտում... Իսկ Նաղէմը ներս մտաւ ինքը մենակ, միայն իւր վերարկով ու գաւազանով. նրա զարդարանքն ու հարստութիւնը իւր երգերն էին, զլարթ ծիծաղն ու լայն սիրտը և նրա քոյրերն ու բարեկամները, նաև բոլոր երեխաները ողջունեցին նրան, ճամբուրեցին:

— Կատարեցի՞ք, ինչ որ պատւիրեցի, — դարձաւ հայրը նրանց ուրախ ժպտով:

— Այո՛, կատարեցի ես, — առաջ անցաւ Սողոմը լրջութեամբ. — ես շրջեցի աշխարհը, հաւաքեցի հարստութիւն

և ուր որ եղայ, շինեցի ինձ համար քարից ու երկաթից ամուր տներ, և եթէ ես նորից անցնեմ այն տեղերով, ինձ համար պատրաստ են փափուկ անկողին, կերակուր ու հանգիստ:


—Ես էլ կատարեցի պատւիրանդ, իմաստուն հայր, — ասաց Նադէմը ժպտալով:—Շրջեցի աշխարհը. ուր որ անցայ, մտայ մարդկանց մէջ, ճանաչեցի նրանց վշտերը և ուրախութիւնները, ամեն տեղ ամենքի հետ ես աշխատանքովս ապրեցի և օգնեցի իմ ընկերներին, որբերին ու այրիներին... Ամենքին սիրեցի, ամենքը ինձ սիրեցին. ես երգեր կապեցի ու երգեցի. երգեցի աշխատանքը, ուրախութիւնն ու տխրութիւնը. ամեն տեղ այժմ իմ երգերը երգում են և ամեն տեղ այժմ ինձ ճանաչում են... Եւ եթէ պատահի, որ նորից անցնեմ այն տեղերով, միշտ ինձ համար բաց կըլինի մի դուռ, պատրաստ կըլինի մի անկողին և մի կտոր հաց...

Հսեց հայրը բոլորը և ապա, համբուրելով Նադէմին, ասաց.—«Դու իսկապէս շինել ես քեզ համար ամեն տեղ այնպիսի տներ, որ ոչ կրակը կայրէ, ոչ փոթորիկը կըկործանէ, ոչ գողը կըմտնի և ոչ էլ ժամանակը կըմաշէ: Դու ես իմ իմաստուն որդին»:

Այա ձեռքը դնելով տխուր Սողոմի ուսին, ասաց քաղցրութեամբ.—Դու որդեակ, աշխատասէր. ես, բայց ոչ իմաստուն. երբ նորից կըշրջես աշխարհը, կըտեսնես, որ քո շինած քարէ ու երկաթէ ամուր տներից որք կործանւել է փոթորկից, որք այրւել է կրակից, որք թալանել է գողը և որք մաշւել է ժամանակի հետ. իսկ որ տունդ էլ ողջ լինի մնացած, այնտեղ էլ ցուրտ կըլինի և դու կըմըրսես, որովհետև մենակ կըլինիս նրա մէջ և մօտդ չեն լինի բարեկամներ... Դու իմ աշխատասէր որդին ես, ուղղիւր սխալդ:

Հայրը օրհնեց իւր որդիներին և ասաց. «Ամեն տեղ շինեցէք ձեզ համար տներ մարդկանց սրտերում»...

Նորայրներից ո՞րն էր հասկացել հօր միտքը:
Ուրեմն ո՞րն է ամենահաստատուն տունը:



Շ Ր Կ Ր Ո Ր Դ Բ Ա Ժ Ի Ն

23. Առաւօտ

Առաւօտ է: Ամենքը շարժողութեան մէջ են: Գիւղացիներն արդէն զարթնել են այն փոքրիկ թռչնիկի ձայնից, որ գալիս, նստում է երդիքների վրայ ու կանչում. «Լծէ, լծէ»: Նրանք արդէն լծել են իրանց եզներն ու գոմէշները և բաւական վարել են գետինը: Տների մէջ մատակներն ու կովերը կթել են: Ոչխարների հօտն էլ դաշտումը մատղաշ արօտներից արդէն մի քաղցր նախաճաշ է արել: Տանտէկինն էլ կովերն ու հորթուկներն է դուրս անում:

Գիւղի աղջկէրքը խումբ-խումբ գնում են դէպի կանաչ մարգագետինը, ծաղիկները կոխելով, ծաղիկներ քաղելով և իրար վրայ ածելով, ծիծաղելով, խայտալով: Նրանք հանդիպում են կաքաւների երամին, լորին, արտուտիկին, որոնք խոտերի տակից թռչկոտում են թփից թուփ, ուզենալով իրար նմանելի. դու ասա՛ աղջկէրքը թեւաւոր թռչուններին, թէ՛ թռչունները ոտաթուիկ աղջկանց: Նրանք անցնում, գնում են առաջ բանջարներ ժողովելու և կանչելու, աղջկէրքը՝ «քան, քան», կաքաւները՝ «գան, գան»:

Կռուկներ երամով կարաւան է կազմել սլաքաձև, օղի բարձր տեղերովն անցնելով «կռու-կռու» է կանչում: Ծառայ եմ ձայնին:

Երկարասրունք արագիլը, կտուցը սրած՝ բնից դուրս է եկել, «հօդ-հօդ» ձայնելով դէպի դաշտն է վազում ջրի ու ցամաքի օձերը բռնելու և սպանելու:

Ձկնկուլը գետերի ափերն է վազում ու «ձր՛կ-ձր՛կ» կանչելով՝ ձուկ-մուկ է որսում կուլ տալու:

Բաղն ու սագը ջրերի վրայ նստած՝ կայտառ նաւա-վարների պէս թրուրում են ու երգում:

Սանրակատար յուպոպն անհանգիստ ոստոստում է և անդադար աղաղակում՝ «յոպ-յոպ»:

Դեղնապորտիկը փափուկ ու մաքուր, ճերմակ ու դեղին շորեր հագած՝ փոքրիկ մացառների ու թանձր խոտերի միջից գլխիկը ցոյց տալով ու թագցնելով՝ իւր ձայնն է լսեցնում:

Սոխակի ձայնն էլ լսում է բոլոր երգողների ձայների հետ և ամեն խողի ուշքն ու միտքը վերացնում:

Բարբարոս բազէն որոտացող ձայնով վեր ու վայր է սլանում՝ մի անմեղ ու անզգոյշ աղաւնի կամ տատրակ պատառոտելու:

Անգղները, ձրի ապրող աւազակների պէս, մի սպան-լածի հոտ առել, գնում են նրա դիակի մսերը կողոպտելու: Ահա արծիւն էլ երևում է. նրա հզօր թևերի բախումից օդը շառաչելով պատուում է. բոլոր թռչունները միանգամից լռում են, մինչև անցնի, հեռանայ այդ ահեղ ու փառահեղ թագաւորը:

24. Գարնան սկիզբը

Գարուն է. կեռների ձիւնն սկսեց հալել. դաշտերը վաղուց ժպտում են գեղեցիկ կանաչով: Օդը՝ լցւած անուշահոտ ջերմութեամբ, կեանք է սփռում ամեն կողմ: Սպրիլ ամիսը բերել է իւր հետ աւելի տաք ու պայծառ օրեր: Կեռների վրայ կարմիր, դեղին ու սպիտակ շուշանները վաղուց արդէն ծաղկել են և հայ աղջիկները նրան-

ցից փնջեր են կազմում. Սուենկը, բոխին, ծնեբեկը, սի-
պեխը և լեռնային զանազան բանջարեղէններն առատու-
թեամբ աճում. Չորերի միջից վազում են հարիւրաւոր
աղմկալի վտակներ և օձապտոյտ ընթացքով տարածւում
են հովտի մէջ. Նորեկ ծիծեռնակը հրաւիրում է մշակին
դէպի դաշտ:

Հայ գիւղացիք արդէն սկսել են դաշտում իրանց վա-
րը վարել: Աշխատութիւնն սկսել է ամեն տեղ: Գիւղե-
րում մի անգործ մարդ չի կարելի գտնել. Ամեն ոք զբաղ-
ւած է իւր մշակութիւններով:

25. Գարնանը

Ա.

Մայիս ամիսն է. գարունը իւր բոլոր փառահեղու-
թեամբ ամեն շնչաւորի վրայ իւր տպաւորութիւնն է ներ-
շնչել: Վարդահոտը՝ բարակ գեփիւռի շնորհիւ՝ ամեն կողմ
հետդ ման է գալիս. լեռ ու դաշտ կանաչներով, սէզերով
զարդարւել են. հազարաւոր գոյնգգոյն ծաղիկներ երեսիդ
ծիծաղում, խնդում են և առհասարակ մի բուռը հող եղած
տեղ բուսական թագաւորութիւնը իւր գահն է դրել:

Գարափնների ծերպերիցն էլ կեանք է արտադրւում.
մի կտոր կոշտ ընկած տեղն էլ կանաչի գլուխ է դուրս
ցցւել. էլ ապառաժ ու մերկ գետին չէ մնացել: Սքանչելի
է մայիսը: Թռչուններն իրանց աղւամազ ձագերի համար
կերակուր են տանում: Ո՞ւր է վազվզում օդի մէջ ծըլծը-
լալով ծիծեռնակը: Նայիր այն ճնճղուկի, փայտափորի
բներին. ինչպէս քնքուշիկ ձագուկները՝ դեղին երիզը կը-
տուցի չորս կողմը, բաց են անում իրանց բերանները և,
լեզուիկները հանած, ճիչ ու ծըլոց բարձրացրած՝ կերա-
կուր են խնդրում իրանց մօրից, ինչ քաղցր ճուղիւն են
բարձրացրել:

Սակայն այնպէս չէ կարգադրել բնութեան ամենագէտ

Սրարիչը. թող ինչքան ուզում են՝ սիրուն ճուտիկները միմեանց առաջը կտրեն. մայրը իւր կարգը լաւ գիտէ. նա հերթը չի կորցնում, իւր հաշւի մէջ չի սխալւում. նա լաւ գիտէ, թէ առաջ կերակուրը որի բերանն է դրել. նա դեռ այն էլ է հասկանում, թէ իւր ընկեր արուն որին է կերակրել: Նա ուրախանում է իւր նաշխունիկների վրայ. մի ըսպէ էլ կանգ է առնում բնի մօտ, քրքրում է կտուցիկով ձագերի դեղին, փափուկ բուրդը, փափկացնում է նրանց անկողինն ու թռչում կրկին դէպի դաշտ:

Բ.

Ի՞նչ ախորժալուր է հովաւկան սրնդի ձայնը մայիս ամսին, երբ նա մի քարի վրայ նստած, կամ լեռան գլխին թեկնած՝ սուլում է ինքնագոհ: Դուք չկարծէք, թէ նա միայն իւր սրտի ուրախութեան համար է ածում. ո՛չ, նա դրանով հասկացնում է իւր սիրելի հօտին, թէ ժամանակ է ժողովել իւր չորս կողմը և գնացքն ուղղել դէպի փարախը, ուր սիրունիկ գառներն սպասում են լսելու իրանց մայրիկների մայունը:

Ո՛հ, ի՞նչ հրաշալի տեսարան է, ի՞նչ քաղցր ըսպէ: Գառները լսում են հեռւից մօր ձայնը և անհամբերութիւնից ուզում են կոտրատել գըլուկի (ցանկապատ փարախ) դուռը, դուրս թափւել՝ դիմաւորելու ամենաթանկագին մօրը, որ իրանց համար կուրծը լի ախորժահամ կաթն է բերում: Մինչև հովիւր բաց կանէ գըլուկի դուռը, ուլերը՝ այդ ճարպիկ պստիկ սատանաները, քիչ է մնում, որ բարձրանան նրա ուսերը:

Նախանձելի է հովւի դրութիւնը հօտի վերադառնալու ժամանակ: Ուլերի ու գառների մկրկոցը, այժ ու ոչխարի հարայ-հրոցը նրա սրտի վրայ անպատմելի տպաւորութիւն են գործում: Ոչ ոք չի կարող բոլոր ցաւերը չմոռանալ այն միջոցին, երբ գառնուկներն իրանց փափիկ դրմակները շարժելով և ուլերն իրանց անհանգիստ պոչիկները խաղացնելով՝ իրար գլխով են դիպչում:

Գառն ու ոչխարը իրար են խառնւում և նրանցից իւ-

բաքանչիւրն աշխատում է գտնել իւր մօրը կամ ձագին: Բաւական է, որ մաքին մի փոքր հոտոտէ, իսկոյն յետ է խփում իրան մօտեցող օտար գառանը և հոտոտելիքը դէպի վեր բռնած՝ ցատկում է դէպի այն կողմը, ուր իւր սիրելի հարազատն է: Մօր անոյշ մայիւնը և խանդախատական ակնարկը թափանցում է անմեղ գառնուկի սիրտը և վատահուլթիւն է տալիս նրան վազելու դէպի ինքը եկող ոչխարի կուրծքը. իսկ վերջինս իսկոյն ոտքերը յետ է բաց անում և թոյլ է տալիս ամենասիրելի գառակին փշփշալով ծծել մօր, պտուկները: Եւ սրտի ուրախութիւնն ու մայրական քաղցր գգւանքն աւելացնելու համար՝ նա անդադար լիզում է փոքրիկ գառնուկի թաւշանման մորթը:

Անխիղճ են այդ միջոցին մարդիկ. նրանք, իրանց կենսական պիտոյքը հայթայթելու համար, խլում են խեղճ գառան բերանից նրա մօր պտուկը և կաթի մեծ մասը իրանք են կթում: Անբան անասունն, իհարկէ, լաւ գիտէ մարդկանց անիրաւութիւնը. ինչքան էլ նրանք կթեն, նա իւր գառակի բաժինը թագցնում է կուրծքի մէջ:

Ուշադրութեան արժանի է նաև կթողների իրարանցումը: Գալիս են մանկահաս հարսները և մատաղահաս աղջիկները. նրանք լաւ գիտեն ճաշայ կթի ժամանակը: Գիւղական փարախներն առհասարակ շինւած են լինում գիւղին մօտիկ, մի ձորամիջում կամ: Բլրի ստորոտում, քամուց և տօթակէզ արեգակից ապահով: Եւ անհմեր ամօթխածներն ուսում են կամ շալակում կովկիթն ու կրճուճը, գլուխներին են դնում կաթ-քամիչն ու մաղը և գիւղից միասին դուրս գալիս՝ երեք-երեք, չորս-չորս խումբ-խումբ բաժանւած՝ խնդալով, կատակներ անելով գալիս են փարախը և սպասում հօտի վերադառնալուն արօտից:

26. Գիւղական ընտանիքի պարապմունքը

Առաւօտ է: Ծերունի Խաչօյի տան թոնիրները վառւում են: Մէկի վրայ դրւած են պղնձէ ահագին կաթսա-

ներ և կաւէ մեծ-մեծ պտուկներ ու կերակուր են եփում, միւսի մէջ հաց են թխում: Հարսները, աղախինները՝ հաւաքւած թոնիրների շուրջը, ընդհանուր շարժողութեան մէջ են: Տունը՝ լցւած կերակուրների անուշահոտ շոգիով, ներկայացնում է մի ահագին խոհանոց, որտեղ, տեսնողը կրկարծէր, թէ ճաշ է պատրաստւում մի ամբողջ բանակ կերակրելու համար: Եւ իրաւ. բացի ծերունու ահագին գերդաստանից, նրա սեղանից կերակրւում են բազմաթիւ հովիւներ, մշակներ իրանց ընտանիքներով, որոնք ծառայում են նրա տանը: Ամեն օր վառւում են նոյն թոնիրները, ամեն օր պատրաստւում է կերակուրների նոյն քանակութիւնը: Եւ ծերունու ժրաջան հարսները մի ընդհանրապէս հանգստութիւն չունին:

Բացի դրանից՝ կային տնտեսական և ուրիշ շատ հոգսեր: Ահա այնտեղ, բազում, հարսներից մէկը կովերն ու ոչխարներն է կթում. միւսը օջախի վրայ կաթ է տաքացրնում՝ մածուն շինելու համար. երրորդը պանիր է մակարդում. չորրորդը հարում է խնոցին՝ կարագ պատրաստելու համար: Նրանց շուրջը վազվզում են բազմաթիւ երեխաներ և խաղում են նորածին գառների ու հորթների հետ: Քաղցր է նայել այդ գիւղական բաղդաւորութեան վրայ: Մանուկ և գառնուկ՝ երկուսն էլ աճում են միասին. դրանք են այն երկու հարսութիւնը, որոնցով ուրախանում, պարծենում է գիւղացին:

Բազի արեահայեաց կողմում, պատի տակ, մէկը միւսի վրայ կարգով շարւած են միքանի հարիւր փեթակ: Ապրիլի արեգակը թափում է այնտեղ իւր ջերմ ճառագայթները: Մինչդեռ հարսները միւս կողմում զբաղւած են իրանց գործով, ծերունի Պաշօն այստեղ բաց է անում փեթակների դնակները: Ճանճերն ուրախ-զւարթ դուրս են թափւում ծակերից, սաւառնում են նրա ալևոր գլխի շուրջը, բրզբրզում, վրժլրժում, թրթրոում են և օդը թնդում է միլիոնաւոր միջատների ձայնից: Գտնւում են նրանց մէջ և այնպիսի շարաճճիներ, որ կծու համբոյրներ են տալիս ծերունու խորշոմած երեսին: Բայց նա ամե-

նւին ցաւ չէ զգում, միայն ձեռքով քշելով ասում է. —
«Ա՛յ չար սատանայ, ի՞նչ վատութիւն է արել քեզ Խա-
չօն»:

27. Գեպի քաղաք

Ա.

Մեծ պատի վերջին շաբաթեայ օրերից մէկն էր: Այս շաբաթում գիւղացիներն իրանց բոլոր բարին կրում են քաղաք, որ ծախեն:

Աւետ ապերն էլ, աքաղաղը կանչելուն պէս, վեր կացաւ կէս գիշերին, ճրագը վառեց, լացեց, երեսը խաչ հանեց ու սկսեց իւր էջերը համետել:

Ամբողջ ընտանիքը դեռ քնած էր, միայն Եղիսարէթը օգնում էր ամուսնուն: Նա դեռ մի օր առաջ պատրաստել էր երկու տիկ իւղ, մի բեռ նոր պանիր, երկու կթոց ձու և միքանի հատ հաւ, որ մարդը քաղաք էր տանելու:

Աւետը բեռները կապելու վրայ էր, որ մութ անկիւնում, անկողինների միջից բարձրացրաւ մի փոքրիկ գլուխ, ճրագի պէս վառող աչքերը լայն բաց արած:

Նայեց, իսկոյն գլխի ընկաւ ու ասաց.

— Հօրեղբայր, ինձ էլ պիտի տանես. ես էլ կրգամ:

— Ձէնդ կտրի, վէր ընկի, քաղաք գնալդ էր պակաս, — պատասխանեց Աւետը իւր գործը շարունակելով:

Տղան լռեց, գլուխը դրեց բարձին, երեսը թաքցրեց վերմակի տակ ու սկսեց խուլ ձայնով լաց լինել: Լացի ձայնից զարթնեց պառաւ Շուշանը, որ պարկած էր միւսնոյն անկողնում իւր թոռնիկի հետ:

— Ա՛յ տղայ, Կալօ, ի՞նչ կայ, ինչո՞ւ ես լաց լինում, — հարցրեց նա:

Կալօն լացուկամած յայտնեց պատճառը:

Նոյն միջոցին խրճիթ մտաւ Աւետ ապերը, վերջին բեռը դուրս տանելու:

—Աւետ, որդի, ինչի՞ ես լացացնում խեղճ տղին, —
միջամտեց պառաւը: Ուզում է քեզ հետ դալ, դու էլ տար.
էլ ինչո՞ւ ես սիրտը կոտրում:

—Ախար, նրա ի՞նչ քաղաք գնալու ժամանակն է, —
պատասխանեց Աւետը աւելի մեղմ ձայնով:

—Հրէ՛ն, Պետրոսանց Գիւքին էլ է գնում. նա ինձանից
խօ մեծ չէ՞...—լսելի եղաւ վերմակի տակից Կալօի լալա-
զին ձայնը:

—Տար քեզ հետ, որդի, —կրկնեց պառաւը համոզելով:
—Տար, թող աշխարհ տեսնի. խօ աղջիկ չէ, որ միշտ առի-
քի տակը մնայ, տնից դուրս չգայ, տղայ է՝ սիրտը ուզում
է, բան կըսովորի, աչքը կըբացւի:

Պառաւի խօսքերը առանց հետեւանքի չմնացին:

—Դէ, վեր կաց, գնանք, մի՛ ուշանայ, —վճռեց վերջա-
պէս Աւետ ապերը:

Բ.

Առաջին անգամն էր, որ Կալօն քաղաք պիտի տեսնէր.
Նրա ուրախութեանը չափ չկար: Ծտի պէս դուրս թռաւ
քնաշորերի միջից, միքանի ըռպէ այս ու այն կողմ վազեց,
ինքն էլ չիմանալով ինչ բանի համար և յետոյ սկսեց իւր
երկար ցուպը փնտռել: Կալօի համար երկար պատրաս-
տութիւն պէտք չէր. իւր սովորութեան համեմատ առանց
հանւելու էր քնել. պէտք է միայն տրեխները հագնէր ու
ամեն ինչ վերջացած էր: Արագութեամբ կատարւեց բո-
լորը, մօտեցաւ պառաւ տատին ու փաթաթեց վզովը.

—Քեզ համար ի՞նչ բերեմ քաղաքից:

Պառաւը ոչինչ չպատասխանեց, միայն ժպտաց ու
համբուրեց նրան:

Աւանակները արդէն բեռնած պատրաստ էին բակումը:

Եղիսաբէթը ճրագը ձեռին կանգնած էր այնտեղ, իսկ
Աւետը մտել էր ոչխարների գոմը: Նա շուտով դուրս ե-
կաւ, բերելով երկու ամսական մի շաղ գառը ու կապեց
բեռան վրայ:

Դեռ բաւական ժամանակ կար մինչև լուսանայր, երբ փոքրիկ քարաւանը ճամպայ ընկաւ:

Շուտով նրանց միացան միջանի ուրիշ գիւղացիներ, որոնք նոյնպէս ծախելու բան էին տանում քաղաք:

Գ.

Եղանակը հանդարտ էր: Աստղերը անուշ ժպիտով փայլում էին պարզ երկնքին: Օդի մէջ տիրում էր գարնանային թարմութիւն: Միջանի օր առաջ եկած անձրևը բոլորովին ցամաքել էր, և աւանակները իրանց ծանր բեռերի տակ կարողանում էին առանց խրելու առաջ գնալ:

Կալօն միջանի հասակակից և իրանից մեծ տղաների հետ քշում էր աւանակները: Նրանց յետևից կամաց-կամաց գալիս էին մեծերը, գալիս էին ու խօսում իրանց ցաւերից, իրանց հոգսերից, իրանց պարտքերից:

Բայց Կալօի ուրախ խումբը առաջ ընկած քշում էր աւերակների կարաւանը՝ զբաղւած իւր խօսակցութեամբ:

—Սաքի,—հարցնում էր Կալօն,—դու քաղաք տեսե՞լ ես. ասա տեսնեմ, էնտեղ գառները ճրտեղ են արածում:

Սաքին, որ տարիքով իւր ընկերներից մեծ էր ու միջանի տարի մնացել էր քաղաքում, պատասխանեց.

—Քաղաքացիք ոչխար չունեն, գառներ չեն պահում:

—Բա՛ նրանց տղերքը ի՞նչ են շինում, որ գառներ չեն արածացնում,—կրկին հարցրեց Կալօն.

—Կարդում են.

—Նրանց տէրտէրը ինչո՞վ է ծեծում, երբ դասը չեն իմանում:

—Նրանք տէրտէրից դաս չեն առնում, դպրոցումն են կարդում:

—Դպրոցն ինչ է:

Սաքին չգիտէր՝ ինչ պատասխանէ և ասաւ.

—Դպրոցը դպրոց է, չե՞ս իմանում:

Մի ուրիշ երեխայ հարցրեց.

—Քաղաքի տղերքը, ո՞վ գիտի, ինչ լաւ տրեխներ կունենան, չէ՞:

—Նրանք տրեխներ չեն հագնում, կօշիկ են հագնում,
—պատասխանեց Սաքին:

—Կօշիկն ինչ է:

—Էն էլ քաղաքի տրեխ է:

—Էնտեղ մօշ կամյ, զկեռ կամյ, —հարցրեց մի ուրիշը:

—Չկայ, ծմակը հեռու է քաղաքից:

—Բն քաղաքի տղերքը ի՞նչ են ուտում:

Սաքին չէր իմանում, ինչպէս գոհացնէ ընկերների հետաքրքրութիւնը: Նա կարճ նկարագրեց քաղաքի կեանքը, ասաւ՝ թէ այնտեղ մեծ-մեծ տներ կան, շուկայ կայ, թէ եզան ու գոմէշի տեղ ձի են լծում, սայլերը ուրիշ տեսակ են, կառք են ասում ու բանեցնում են միայն նստելու համար: Յետոյ էլ աւելացրեց, թէ քաղաքի տղաները գիւղացի տղաներին ծաղրում են և սլատահած ժամանակ էլ ծեծում:

Վերջին խօսքերը դրգուեց Կալօի բարկութիւնը և նա իւր երկայն ցուպը բարձրացնելով՝ սպառնաց.

—Տեսնում ես մահակա. էնպէս կըչափեմ նրանց բարակ մէջքին, որ «վայ, նանի» կանչեն:

Իսկ հեռուն նրանց առաջ երևում էին արդէն կանաչների միջից եկեղեցիների գմբէթներն ու մինարէների սուր ծայրերը:

Մօտենում էին քաղաքին:

28. Ծոցանուկի

Ա.

Գարունը բացւել էր, աշխարհը կենդանացել: Արևը ծիծաղում էր սար ու դաշտի երեսին և ամենքին տանից դուրս հանում, ուղարկում էր բան ու գործի:

Գիւղում մնացել էին մէրն ու մանկիկը, հարսն ու սկեսուրը, մէկ էլ փոքրիկ գեղջուկները. բայց սրանք էլ

անգործ չէին. իւրաքանչիւրը իւր իմացած գործով զբաղ-
ւած՝ յետ չէր մնում աշխատանքից:

Ահա այդ քաղցր օրերից մի առաւօտ, Փարնանց Սօ-
նին պատահելով իւր ընկնկերուհուն՝ ասաց նրան.

— Սղջի Հուռի, էսօր մեր թաղի աղջիկները Հէքրմանց
դուռն են հաւաքւելու, «պառաւր ծոցը» տալու. կուժդ
տուն տար, դու էլ արի՛ գնանք:

— Ղորթ ես ասում, Սօնիկ, — հետաքրքրւեց Հուռին:

— Իմ ախպօր արևը. հրէս տուն գնամ թէ չէ, թելիս
կծիկն առնելու եմ ու պնկ, որ խաղին հասնեմ:

— Բաս ես էլ կրգամ, — համաձայնւեց Հուռին և կուժն
ուսելով՝ շտապեց դէպի տուն, որ ձեռագործը վերցնի և
Հէքրմանց դուռը հասնի:

Հուռին քրտնամխած տուն հասաւ, կուժը դրաւ դռան
քամակին՝ իւր սովորական տեղը, շտապով հաւաքեց իւր
բուրդն ու սանդերքը, փաթաթեց գոգնոցի մէջ, մի կտոր
հաց էլ գրպանը դրաւ ու մօտեցաւ թելլու հարսին, որ նրա-
նից թոյլտուութիւն խնդրի.

— Հարսի ջան, գլխովդ պտուտ գամ, աղջկերքը Հէքր-
մանց դուռն են հաւաքւել, «ծոցանուկի» են տալիս, ես էլ
եմ գնում:

— Գնա՛, — կամաց փրսփրսաց թելլու հարսը. — համա
իրիկնադէմը շուտ արի, որ ջուր տաքացնես՝ մեր հանդուոր-
ների ոտները լւալու:

— Էն կանաչ-կարմիրը, շուտ կը տամ, — ասաւ Հուռին
և վազեց դէպի Հէքրմանց կալը:

Բ.

«Պառաւր ծոցի» ձայնը լսելուն պէս՝ վերի թաղի գրե-
թէ բոլոր փոքրիկ գեղջուկները, մօտ տաս-տասնըհինգ հո-
գի, շտապել էին Հէքրմանց դուռը, կալապանի տակ մի կար-
պետ փռել, վրան ծալապատիկ նստոտել և առանձին եռան-
դով աշխատում էին:

Իրար հետ մրցելով որը գուլպայ էր գործում, որը գուլ-
պան ասղարուր նաշխում, մի երկուսը սանդերքով բուրդ

էին գգում, միւսներն էլ ճախարակով թել մանում:

Մի խօսքով՝ բոլորն էլ թեք ու փէշարած աշխատում էին և մէկ-մէկու հետ զրոյց անում:

—Անո՛ւշ ջան, Անո՛ւշ, արի ես ու դու «ծոցանուկի» տանք. տեսնենք՝ ով շուտ կը պրծնի իւր բանը, — ոգևորւած առաջարկութիւն արաւ չալտիկ Մանուշը:

—Աչքիս վրայ, — պատասխանեց Անուշը նրան, — դու նարգօից շուտալիկ չես, որ քեզանից քաշեմ. էս մի ժամումը չորս անգամ նրան «պառաւր ծոցն» եմ արել, երեւի մի երկու անգամ էլ քեզ կանեմ:

—Իէ, գուլպիդ նշան արան, հրէս ես թելս կապ տւի, տեսնենք՝ ով շուտ կը հասնի գուլպի թաթին:

—Շատ լաւ, թող էս կարմիր ծաղիկն էլ իմ նշանը լինի, — ցոյց տալով իւր գուլպի նկարը, համաձայնեց Անուշը:

Նրանք երկուսով պայմանաւորուեցին և սկսեցին մէկ-մէկու հետ ձեռագործով մրցել. երկուսն էլ ճիգ էին թափում, որ միմիանցից առաջ վերջացնեն գործը. ով շուտ կը հասնի պայմանաւորւած նշանին՝ նա էլ կը լինի յաղթողը և յաղթւածին կասի.

«Գառնուկ ջան, գառնուկ, պառաւր ծոցդ, պառաւր ծոցդ», այսինքն թէ՛ «Արդէն պառաւել ես ու անշնորքութիւնը ծոցդ է թափել ու թուլացրել քեզ»:

Այնուհետև ընկերակիցները միասին ծափ կը տան ու կասեն.

«Իսկ որ դու պառաւել ես,
Մեր պառաւից առաւել ես»:

Անուշի ու Մանուշի պայմանաւորումից խրատւած՝ շէկլիկ Շուշիկն էլ գրազ եկաւ Նուշիկի հետ.

—Աղջի Նուշիկ, արի ես մանեմ, դու ինձ համար փաթիլներ գգի, տեսնենք՝ կարճս ինձ հետ լուծը քաշես:

—Օ՛հօ, ի՛նչ մի դօշաղն ես դու. ես որ չկարենամ քեզ փաթիլ հասցնել, — պատասխանեց Նուշիկը և սանդերքը առաջը քաշելով, մի գունդ բուրդ դրեց կողքին և սկսեց ամենայն արագութեամբ գգել: Նա գգում էր, Շուշիկը նրա փաթիլները ճախարակով մանում. երկուսն էլ այն-

պիսի արագութեամբ էին գործում, որ շատ դժւար էր
իմանալ՝ թէ ո՞վ ումնից առաջ կանցնի:

Բոլորն էլ ոգևորւած գրադւած էին և աշխատում էին
մեքենայի պէս. աշխատելու ժամանակ էլ շուտ-շուտ կըրկ-
նում էին:

«Ով շուտ ու շուտիկ,
Նա կուշտ ու կուշտլիկ.
Ով կամաց-թամբալ,
Նա պառաւ-համբալ»:

Գ.

Երկար ժամանակ գգեցին ու մանեցին, գործեցին ու
կարեցին, և մէկ էլ յանկարծ Մանուշը նշանին հասնելով
ոգևորւած ճչաց.

—Մնձր, Մնձր, պառաւը ծոցդ, քոռ պառաւը ծոցդ,
ես պրծայ:

—Ես էլ պրծայ, ան, պրծնում եմ,—կարմրած պա-
տասխանեց Մնուշը:

Բայց ընկերներն էլ էդ էին ուզում. դէհ, ծափ տւին
ու ասին. «Մնուշը պառաւել է, մեր պառաւից առաւել է»:

Ասին ու կրկնեցին և կուշտ-կուշտ ծիծաղելով՝ այնու-
հետեւ սպասում էին ուրիշի յաղթւելուն:

30. Սերմնացան

Գիւղացին բերը շալակած գնաց դաշտ, կանգնեց իւր
ցելի մօտ, ծանր բերը ցած դրեց, գոգնոցը կապեց, եր-
կնքին նայեց. «Կապոյտ երկինք, ուղիղ սրտով քեզ եմ կան-
չում, միայն քեզ, որ դու արև, անձրև շատ տաս իմ այս
սերմին՝ սրբի պէս. Դու լաւ գիտես, թէ քանի մարդ աչք
կըղնի ցանածիս, քանի պարտքեր ու պատուհաս միշտ
կըսպասեն սերմածիս»: Այսպէս ասաց ու երեսը խաչա-
կնքեց դողալով, սերմը լցրեց գոգնոցի մէջ՝ սկսեց ցանել
իւր բռով:

Յանկարծ մի մուկը վաղեց, թուաւ, նրա առջև ծրածր վաց. «Մեզ համար էլ սերմ ցանիր, որ չկտրենք ողջ սերմած»։—«Ահա, այս ձեր ցեղին լինի, պտղաբերւի ձեզ համար. միայն ցանքիս ձեռք չտաք, մեղք եմ, մուկիկ, ու անճար»։ Երկրորդ բուռը դեռ չէր ցանել, մի մեծ մորեկ երևաց. —«Մեզ էլ մաս տուր քո սերմից, որ չլափենք կահաչած»։—«Այս էլ ահա ձեզ եմ տալիս, թող շատանա ձեզ համար. կանաչ արտիս վնաս չտաք, խեղճ եմ, աղքատ ու անճար»։ Երրորդ բուռը դեռ չէր ցանել, մէկ էլ տեսնես՝ մի մրջիւն. —«Մեզ էլ մաս տուր, թէ չես ուզուած սերմդ կրենք մի անկիւն»։—«Ձեզ շատ լաւ եմ ետ ճանաչում, այ մրջիւններ, անկուշտ էք. ահա այս էլ թող ձեզ լինի, ողջ սերմածս չկրէք»։ Յետոյ յանկարծ կաշաղակը թուաւ, եկաւ նրա մօտ. —«Պարոն, մեզ էլ մարդատեղ դիր. մենք գողեր ենք, չենք երկչոտ»։—«Ահա այս էլ թռչնոց դասին, դուք չունենաք քէն ու ոխ, իմ ցանածը չժողովէք, մեղք եմ, խեղճ եմ, պարտքակոխ»։

Վերջին անգամ խեղճը յիշեց աղքատներին լալ աչքով և տէրտէրի, օտարների մասը սերմեց սուրբ սրտով։ Ապա կանգնեց ակօսի մէջ, աչքը գցեց երկնքին. —«Ինչ էլ մնաց, այն ինձ տուր, Տէր, հնձեմ, կալսեմ, տամ պարտքին»...

31. Սար գնալը

Երբ գարունը բացւում է, գիւղացիք սարն են տանում տաւարը։ Աղբիւրների գլխին, ծառերի մէջ վրաններ են տնկում և տաւարը ներս անում այս անմահական դրախտը։ Առաւօտը, երբ անկողնուցդ վեր ես կենում, հազար սարի ծայրի ամպն ու ծուխը միմիանց խառնւած՝ երկինք են բարձրանում ու ցօղն անձրևի հետ նստում է մարդկանց շորերի և երեսների վրայ։ Կանայք կթի տաւարի հետ են—կաթն են ժողովում, իւր ու պանիր շինում. տղամարդիկ տաւարն արօտ են քշում, բուրդն ու գործւածքը, իւրն ու պանիրը տանում են փողոց, ծա-

խում, իրանց պակասը լրացնում:

Էլ ի՞նչ ասել կուզէ, որ հարս ու աղջիկ այստեղ կուշ ու ձիգ անելով չեն ման գալիս կամ երեսները ծածկում, ինչպէս տանը: Այստեղ բոլորը մի ընտանիքի պէս են և ունի վրանը մտնես, ամենքը առողջ, ուրախ ու զւարթ են. այն օդի ու ջրի մէջ, այն ծաղկի ու կանաչի հոտն ու համն առնողի հոգին ու գոյնը ի՞նչ կըլինի հապա: Երբ սարումը հիւր է պատահում, էլ շաբաթով ու ամսով չեն թողնում, որ հեռանայ. աղբիւրների քըչքըչոցը, ջրերի խըշխըշոցը, ծառերի սըլւոցը, թռչունների ծըլւոցը, հովւի սրինգը, գառան, ոչխարի և տաւարի բառաչը,—այս բոլորը կարծես ասում են քեզ. «Դրախտ ես ուզում՝ այստեղ կանց, այսպէս կանց,—սիրտդ անմեղ, միտքդ իստակ»:

32. Մայիսւայ փոթորիկը

I.

Կէսօրն անցաւ:

Սարի գլխին երկար ժամանակ անշարժացած ամպը, լայնանալով, հետզհետէ սկսեց բռնել երկնքի արևմտեան մասը. նրա հսկայական սուներն ընկել էր ամեհի սարերի և դաշտերի վրայ. Յանկարծ հեռւից մի թոյլ դղրդիւնի ձայն լսեց. Շուտով տեսանելի եղաւ նաև կայծակի թոյլ լոյսը:

Սկսւում էր մայիսւայ փոթորիկը:

Փչեց մի հանդարտ, բայց ցուրտ քամի: Դաշտային ծիծեռնակները բոլորովին գետնի վրայով էին թռչում. Դիմացի սարը ծածկւեց մի բարակ մառախուղով, որ՝ արագ-արագ ցած իջնելով՝ տարածւեց ամեն կողմ: Երկինքը բոլորովին սևացաւ. որոտն աւելի և աւելի մօտենում էր. կայծակի կումաններն այժմ աւելի երկար էին և պայծառ. Բայց այդ իսկ ըոպէին երկնքի արևելեան մասը բոլորովին պարզ էր և գեղեցիկ ժպտում էր:

Յանկարծ անձրևի խոշոր կաթիլներն սկսեցին մինը միւսի յետևից սաստիկ արագութեամբ թմբկահարել ծառերի տերևներին. Ապա մի ըրպէ բոլորովին դադարեց անձրևը, մինչև անգամ ամպերի մէջ երևեցաւ մի փայլուն շերտ, կարծես շուտով այդտեղից պիտի նայէր արեգակը: Բարակ մառախուղն արդէն հասել էր բլրի ստորոտներին: Միևնոյն ժամանակ հեռւից աւելի և աւելի պարզ էր լսուում անձրևի աղմուկը: Մի ըրպէ չանցած՝ սկսեցին փայլել ահուելի կայծակներ: Օդն աւելի և աւելի թանձրանում էր, դժւարանում էր շնչառութիւնը: Որոտոցները, մինը միւսից սարսափելի, սկսեցին այնպէս յաճախ կրկնել, որ այլևս անկարելի էր որոշել, թէ երբ էր մէկը վերջանում և երբ միւսն սկսւում: Մառախուղի բարակ քօղը պատեց ծմակն ու արօտատեղին, ամենայորդ անձրևն սկսեց շրջառաւ: Մի ըրպէում գոյացան փոքրիկ գետակներ, որոնք աղմուկով վազում էին դէպի ձորից անցնող գետակը:

II.

Պայծառ արևը ծագեց մեծ, սևաթոյր ամպի յետևից: Երկիրը զարդարեց բիւրաւոր գոյնզգոյն գոհարներով: Այդ գոհարները կազմւել էին այն ջրերի կաթիլներից, որոնք կախւել էին ամեն մի տերևից, ամեն մի խոտից: Մրսացրնող հողմիկը կարծես թէ չէր եղել ամենևին. նրա տեղօղի մէջ տիրեց մի սքանչելի զովութիւն: Ամեն ինչ կեանք առաւ. ծմակի միջից լսելի եղան մենաւոր թրուշնակի դայլայլիկները, որոնցով կարծես փառաբանում էր արեգակի կրկին երևալը:

Ո՛րքան սիրուն, գեղեցիկ էր աշխարհը: Երկինքը դարձեալ կապոյտ, արեգակը նոյնպէս գեղաժպիտ: Մի կտոր ամպ մնացել էր արևելքում և այդ կտորի վրայ կամարած և ոլորւել էր գեղեցիկ ծիածանը...



32. Անտառի գեղեցկուքիւնը

Որքան հրաշալի է խիտ անտառի տեսքը կէսօրին, որքան գոլ է նրա մաքուր օդը և հաճելի տերևների սօսափիւնը, երբ մեղմ գեփիւնը հանդարտ շոյում է ծառերի գազաթները... Խորհրդաւոր մութը պատել է ներսը:

Ծառերի ճղներին, կանաչ տերևների հովանու տակ, ապրում են տեսակ-տեսակ նաշխուն, գեղեցիկ թռչուններ և այս փոքրիկ թևաւոր երգիչները թնդացնում են օդը իրանց ձայներով և խանդարում անտառի լուսթիւնը: Ծառերի վրայ և փչակներում նրանք իրանց համար բներ են հիւսում, ձևաններ ածում և ձագուկներ հանում. նրանց հանգիստ, ուրախ կեանքը խանդարում են երբեմն գիշատիչ գազաններն ու թռչունները, որոնք՝ գաղտնագողի յարձակելով նրանց վրայ, տանում, լափում են խեղճերին...

Մեծ, խիտ անտառներում խոտն ու ծաղիկները առատ չեն լինում. ծառերի մշտական ստերը թոյլ չի տալիս աճելու, զօրանալու այդ բոյսերին, որոնց անհրաժեշտ են լոյսը և արեգակի ջերմութիւնը: Ամենից շատ աչքի են դիպչում վայրի շուշանի կանաչ տերևները և անտառային շահապրակի բարձր ցօղունները. սունկերի խոնաւ հոտը բռնել է օդը:

Այցելեցէք այդ դրախտանման անտառը. նրա տեսքից հրճւում է այցելուի սիրտը, ուրախութեամբ լցւում է նրա հոգին. Ո՞ւմ ասես, որ չի գրաւիլ այդ գեղեցկութիւնը:

Մանուկը պատրաստ է այստեղ ամբողջ օրը խաղալ, վազվզել թիթեռնիկների, բզէզների և այլ հազար ու մի տեսակ միջատների յետևից: Այստեղ ծերունին կրմոռանայ իւր ծերութիւնը, հիւանդը կեանք կըստանայ, կամրապնդւի և շուտափոյթ կըբժշկւի իւր մաշող ցաւերից... Այստեղ աշխատանքից յոգնած, վաստակած մարդը իւր ոյժերը նորոգող հանգստութիւն կըգտնի:

33. Անտառում

Ա.

Եղնիկները մրսում էին, Երկուսն էին, սեղմել էին իրար մի ահագին եղևնու տակ:

Ցուրտ ու մութ գիշեր էր ու ձիւնը գալիս էր անդադար, գալիս ու իւր թաւ սաւանը փռում անտառի ծառերին, գետնին ու եղնիկների վրայ:

Եղնիկները սեղմել էին իրար, պարկել էին ու դունչ դնչի տւել:

Ի՞նչ սև գիշեր էր, ի՞նչ անախորժ ձայներ էր հանում սանձարձակ քամին. ծառերի մերկ գագաթները շփւում էին իրար և օձի նման սրւարւում, ու երկուսի կուրծքն էլ մի անորոշ երկիւղ էր մտել:

Հաւեց բւի ձայնը. խուլ անտառը մի այլանդակ արձականք տւեց. Եղնիկները սրեցին ականջները: Բւի ձայնը կրկնւեց և ձիգ տարածւեց սառած օդի մէջ:

Ի՞նչ վատ գիշեր էր... Քամին փչում էր, բռներով ձիւն էր լցնում եղնիկների ականջը ու ոռնում:

Եւ հեռւից քամու հետ յանկարծ լսեց մի ուրիշ ոռնոց. — «Ու՛՛՛՛՛, ու՛՛՛՛՛, ու՛՛՛՛՛»...

Եղնիկների շունչը կտրեց ու նրանք վախից քարացան:

— Ու՛՛՛՛՛, ու՛՛՛՛՛, — լսեց հակառակ կողմի սարերից, իբրև պատասխան առաջին ոռնոցին:

Ձիւնի ծանրութեան տակ ահա՛ կոտրւեց մի շոր ճիւղ ու ճրոճրոպով ընկաւ գետին: Եղնիկները ցնցւեցին սարսափահար ու ոտքի թռան:

— Ու՛՛՛՛՛, ու՛՛՛՛՛, — կրկնւում էր զարհուրելի ոռնոցը միշտ աւելի ու աւելի մօտիկ:

Մի անսանձ երկիւղ տիրեց եղնիկներին. խելագար նայեցին դէս ու դէն և յանկարծ երկուսը միասին մի անգամից առաջ նետւեցին ու սկսեցին փախչել: Փախչում էին նետի պէս, ծառերի բների արանքով, ընկած կոճղերի վրայով, փախչում էին դէպի ցած, դէպի ձորը...

Բ.

Իսկ վերևը, ծառերի մէջ, փայլեցին շարժուն կայծեր, առաջ մէկը, երկուսը, բայց շուտով շատացան ու մօտեցան:

Եւ այնտեղ, ահագին եղևնու տակ, ուր քիչ առաջ պարկել էին եղնիկները, կանգ առաւ քաղցած գայլերի խումբը:

Նրանք անհանգիստ փնտռել սկսեցին. առել էին եղնիկների հոտը...

Մէկը վազեց աջ ու ձախ ծառերի մէջ, իսկ միւսները վրայ ընկան ձիւնին, յետևի և առջևի ոտներով սկսեցին փորել ձիւնն ու յետ ածել: Ոչինչ չկար: Կանգ առան բոլորը միասին, ձայն ձայնի տւին. «Ու՛՛՛՛՛, ու՛՛՛՛՛»...

Նրանցից մէկը լռեց աւելի շուտ, վեր բարձրացրեց իւր սուր քիթը, սկսեց սառն օդը ներս ծծել, կարծես իւր քիթին հարցնելիս լինէր, թէ ուր են գնացել եղնիկները: Բայց օդից ոչինչ չհասկանալով՝ նորից կոխեց քիթը ձիւնի մէջ, քիչ էլ փորվրեց ու գտաւ եղնիկների բռնած ճամպան:

Ընկերները հետևեցին ու անդադար հոտոտելով գնացին եղնիկների հետքով, մինչև նորից կանգ առան:


Կատաղի քամին աւելել էր ձիւնը, տարել, դիզել էր ով գիտէ՝ ուր. սրբել էր և եղնիկների հետքն ու հոտը: Փչում էր ու փչում և ոռնում մերկ ծառերի տակ...

Ոռնում էին և գայլերը իրար կողքի պրպրզած, դրնչերը քամուն, քաղցած ու խաբւած:

Եւ հեռւից բարձր սարերի վրայից գալիս էր նրանց պատասխանը.

«Ու՛՛՛՛՛, ու՛՛՛՛՛»... ձիգ, երկար ու չարագուշակ:

Սարսափելի գիշեր էր...



34. Ամս

Ը.

Յուլիսի տօթային օրերից մէկն էր: Արեգակն անխնայ կերպով այրում էր: Հրաբորբոք օրն անտանելի էր: ամեն առարկայի վրայ տիրում էր թմրութիւն և տաղաղկութիւն: Թռչունները լռել էին: ծառերը ցած էին թողել իրանց ոստերը. թառամել էին սիրուն խոտերը և կպել էին գետնին: Այլևս լսելի չէր լինում դաշտային ծաղիկների ուրախ շշնջիւնը. նրանք խոնարհեցրել էին իրանց գլխիկները և կամաց կամաց մեռնում էին ծարաւից: Կովերը, ձիանները, այծերը հազիւ-հազ շարժւում էին: Չորս կողմում ամեն ինչ լռութեան մէջ էր. ոչ մի ձայն չէր լսւում... Մի կողմում (օդի ջերմութեամբ լցւած տարածութեան վրայ) երևում էին խրճիթներ. այնտեղ մարդիկ տխրութեամբ նայում էին դէպի ժլատ երկինքը, որ նրանց անձրև չի տալիս: Այդ (սգաւոր) դիւղերի մէջ այլևս լսելի չեն լինում ոչ ծիծաղ, ոչ հանաքներ և ոչ ուրախ երգեր: Մինչև անգամ երեխաները, թուլացած օրւայ տապից, մոռացել էին իրանց խաղը և սիրելի փողոցները, սուս էին կացել և թագնւել էին մարագներում:

Բ.

Երաշտութիւնը սարսափելի դժբաղդութիւն է շինականի համար, որն ապրում է միայն դաշտային դառն աշխատանքով: Երաշտութիւն, — դա մի դանդաղ մահ է հազարաւորների համար, մահ աղետալի և սովատանջ: Նա աղքատացնում է մինչև անգամ նրանց, որոնց մօտ փոքրիշատէ պահւել էր ուտեստի հին պաշարից... Շինականները հասկանում են այդ և տրտմութեամբ նայում են դէպի երկինք:

Ամբողջ երկու ամիս նրանք ողորմութեան են սպասում երկնքից, բայց դեռ ոչ մի կաթիլ անձրև չկայ: Այլևս խոտը, այրւեցան անտառները, նիհարեցին, լղարեցան

տաւարները: Մարդիկ յուսահատուած թափառում են՝ ինչպէս ուրականներ...

Արդէն միջանի անգամ բարի քահանան՝ սուրբ մասունքներ, խաչ ու պատկեր իւր հետ առնելով, անդաստան կատարեց անտառների և դաշտերի շուրջը, Աստուծոց անձրև խնդրելով: Շինականների ջերմեռանդ բազմութիւնը հաստատ հաւատով և արտասուախառն աղօթքներով շրջապատել էր նրան: Զօրաւոր է հաւատը այդ խեղճ, համբերող մարդկանց մէջ:

9.

Ահա՛ բաց կապտագոյն երկնքի վրայ երևաց ամպի մի փոքրիկ, թափանցիկ պատառ: Նա նմանւում էր մի սպիտակ թաշկինակի, որ հազիւ է նշմարւում: Նա կամացկամաց լողում է, կարծես վախենալիս լինի... Տառապեալ շինականները տեսան նրան և նրանց վշտալի սրտերում ծագեց յոյսի մի պայծառ նշոյլ... Մօտ էր փրկութիւնը սովատանջ մահից... Բայց փոքրիկ է ամպիկը, մի գուցէ մի ըռպէից յետոյ նա անհետանայ երկնքի անսահման կապուտակութեան մէջ... Ո՛չ, նա չի դաւաճանիլ, նա կըցօղէ երկիրը բարեբեր անձրևով:

Սպիտակ ամպիկը մեղմ սիրով նայում է անբաղդ գիւղերի, տխուր խրճիթների վրայ և հետզհետէ աճում, հաւաքում է իւր ոյժերը, որ փրկէ սովատանջներին:

—Իզուր ես աշխատում,— փաղաքշելով ասում է նրան արեգակի կիզող ճառագայթը:— Թող նրանք տանջւեն. դու ինչո՞ւ ես հոգ տանում նրանց կեանքի համար: Ի՞նչ կանգնած ես բարձրում, փայլում ես ոսկու մէջ, իսկ նրանք այնտեղ, ներքևում, թաւալւում են փոշու մէջ: Քեզ ի՞նչ պէտք են նրանք: Ի՞նչ կըրոջնչանաս, կըմեռնես՝ նրանց ազատելով: Մի՞թէ աւելի լաւ չէ քեզ համար լողալ երկնքի կապուտակութեան մէջ, խաղալ մեզ հետ, սլանալ հողմի թևերի վրայ և զւարճանալ կեանքով:

—Թող այդ մտադրութիւնդ,— թոթովեց թեթև հողմի—

կը,—Թող նրանք մեռնեն սովից, դու ինչո՞ւ ես հոգում
 նրանց մասին. եկ, ուրախ լողանք արեգակի հրապուրիչ
 ճառագայթների մէջ.

Դ.

Սպիտակ ամպիկը դէմքը խոժոռեց և դժգոհութեամբ
 երեսը շուռ տւեց թէ ուրախ ճառագայթից և թէ դրօսա-
 սէր հողմիկից. նա սկսեց աճել և մթին գոյն ստանալ:
 Վերջապէս բոլորովին ծածկեց արեգակի շողշողուն ճառա-
 գայթները և ականջ չդրեց նրանց ձանձրալի խրատին, թէ՛
 «կըմեռնես, կըռչնչանաս... ինչո՞ւ ես դու հոգ տանում ու-
 ըիշների համար. մտածիր միայն քո մասին, ապրիր մի-
 այն քեզ համար»:

Շուտով նա այնքան աճեց, որ դարձաւ մի ահագին
 սև մէգ, որը սիրալիբ կերպով ցած էր իջնում թշուառ-
 ցած դաշտերի և տխուր ծառերի վրայ: Լսելի եղաւ մի
 խուլ դղրդիւն, որը հետզհետէ սաստկանալով, սկսեց որոտ-
 ման մի հարւածը միւսի յետևից աւելի բարձրաձայն
 տարածել նիհար անտառների, հեռաւոր լեռների մէջ,—և
 օձի նման գալարւելով՝ նշմարւեց կայծակը... մի անգամ
 ևս... մի անգամ ևս... Տեղաց առատ, գովացուցիչ անձրև:
 Երկար թափւում էր նա, ուռգելով ամեն մի արմատը տո-
 չորւած խոտերի, տխուր խնձորենու, համբերատար ըն-
 կուզենու, սգաւոր ուռենու, և նրանք ազահութեամբ ծը-
 ծում էին նրա գովացուցիչ կաթիլները: Ծառերն սկսեցին
 ազատ շունչ առնել, խոտերը կանաչ գոյն ստացան, ծա-
 դիկները վեր բարձրացրին իրանց գլխիկները, թռչուններն
 սկսեցին ծըլւել, երեխաները դուրս թափւեցան դէպի
 փողոցները և սկսեցին լճակներ կազմել ջրերից. Շատ հեռ-
 ւից լսելի էր լինում նրանց ուրախաձայն ծիծաղը: Կեանք
 ստացան գիւղերն ու դաշտերը:...

Ե.

Ամպը՝ կատարելով իւր բարի գործը, ճշմարիտ է մե-
 ռաւ, ցած թափւելով փրկարար անձրևի ձևով, բայց մե-

ուաւ հաճելի մահով: Նրա կեանքը սպառուում էր ժպտալով, երբ նայում էր զւարթացած ծառերին, պայծառ խոտաբոյսերին, ուրախ ծաղիկներին: Եւ նա, կորչելով երկնքի ընդարձակ տարածութեան մէջ, զգում էր, որ մեռնում է ոչ առանց օգուտ բերելու: Կանաչած խոտը, յարութիւն առած բնութիւնը, շինականների ուրախ դէմքերը—նրա գործն էր: Այնուհետեւ ամպը բարակ շերտով սկսեց առաջ լողալ: Թռչունների ուրախ ձայները, ծաղիկների և դաշտային խոտաբոյսերի սօսափման անոյշ մեղեդին առաջնորդում էին նրան, մինչև նա աննկատելի կերպով անհետացաւ երկնքի անսահման կապուտակութեան մէջ: Շա կորաւ այնտեղ, վերևում, իսկ կաթիլների ձևով սկսեց ապրել այստեղ, ներքևում, ամեն մի թփի, ամեն մի բոյսի, ամեն մի մեծ ու փոքր կենդանու մէջ:

36. Արտը

Ա.

Անիից էի վերադառնում և անցնում էի մի հայ գիւղի միջով:

Գիշերը օսաստիկ անձրև էր եկել, այնքան սաստիկ, որ շատ պատեր ու խրճիթներ փլցրել էր: Փողոցներից հեղեղներ էին վազում կշկշալով: Երկինքը ծածկւած էր միաձոյլ կապարագոյն ամպերով. դեռ էլի մէկ-մէկ անձրեւում էր:

Գիւղի վերջին խրճիթին էի հասել, երբ նրա դուռը ճռնչաց, միքանի մանուկների ճիչերը ականջիս հասան և առաջս դուրս ելաւ մի ալեզարդ ծերունի՝ բահը ուսին: Մի վայրկեան ինձ նայեց, յետոյ պատերի տակով անցք փնտրեց քայլելու: Նրա հնամաշ տրեխներից ջուրը հասում էր գուլպաների մէջ: Խոնաւութիւնը թափանցում էր բաց կուրծքը:

Գիւղից դուրս էինք եկել:

Անցնելով մի առ մի դիտում էի երկու կողքի արտերը: Շատերի միայն միջանի ակօսներն էին աւերւել և մէջ տեղերում լճակներ գոյացել: Միջանիսը լիովին ողողւել էին: Ջրի հոսանքներն արմատախիլ էին արել, քշել, տարել ցորենի դալար ծիլերը և հաւաքել ակօսների մէջ: Ցեխ էր գոյացել ամեն մի շաւղի վրայ, ամեն մի փոսի մէջ պղտոր կարմրագոյն ջուր էր կիտւել և շատ հասկեր լողում էին նրանց երեսին, որպէս խեղդածներ: «Վանխ, վանխ», արաւ ծերունին:

Բայց վնասը ընդհանրապէս շատ էլ մեծ չէր երևում: Հողը դիմացել էր, երևում էին բոլորովին չփչացած արտեր անգամ. ծիլերը դիմացել էին և այժմ զւարթ ցցել էին սկսում իրանց գլուխները, թէև կային այնպիսիները, որոնց արմատները մերկացել էին ու դառել էին ոտաբորիկ:

— Է՛, փանք Աստրծու, — խօսեց ծերունին՝ տեսնելով դրանց, — շատ էլ վնաս չի եղել:

— Բո արտն էլ էդպէս կըլինի, ծերուկ, — արտասանեցի նրան:

Անխօս գլուխը երերցրեց: Կասկածում էր և հայեացքը միշտ հեռուններն էին:

Բ.

Այդպէս քայլելով մենք հեռացանք գիւղից և յետոյ ծուկեցինք դէպի լեռները: Ծուկելիս ծերունին մի բոպէ կանգ առաւ և աշխատում էր հեռւից նշմարել իւր արտի դրութիւնը:

— Ո՞րն է արտդ:

— Է՛ն, բարձրը:

Ջրի հեղեղներ էին հոսում այնտեղ, ջրակոյտեր էին փայլում:

Ծերունին գունատեց:

— Տունս քանդւել է...

— Մի՞թէ վնասւել է:

—Չգիտեմ դեռ...—ասաց նա խեղդաժ ձայնով.—գուցէ աչքերս չեն շոկում... ծերացել եմ...

Առաջ գնացինք: Մօտենում էինք: Քայլերն աւելի դժւարանում էր. վերևից գրեթէ ցեխի հեղեղ էր, որ իջնում էր ցած՝ ծիլերի խառն, ցօղունների հետ:

Հետո էր ծերունին, շունչը կտրւել էր: Քիչ էլ քայլեցինք: Էլ կանաչ չէր երևում. ցեխի հեղեղ և շուր էր, որ տեսնում էինք, աւերիչ, ապականիչ հեղեղ...

Միքանի՛ քայլ յետոյ կանգ առաւ ծերունին և բահը ուսից ցած թողեց: Իւր արտի կողքին էր: Թշւառ արտ...

Վերևից, փոսերի մէջ գոյացած ջրերը պատուել էին իրանց թումբերը, ուժգնութեամբ ցած հոսել և գրեթէ սրբել էին արտը: Տեղ տեղ օվազիսների պէս մնացել, իրանց մերկ արմատներն էին ցոյց տալիս ցորենի ծիլի կղզեակները: Երկար, կանաչ շերտեր իրար վրայ, արմատախիլ, ջարդաժ, հոգեվարք, սահել էին ամեն ուղղութեամբ և թաթախւել ցեխով: Ոմանք մինչև վիզը խրւել, ուրիշները հագիւ իրանց մէջքն էին երևցնում. Հողը ամբողջ կանաչել էր նրանց դիակներով...

Եւ անձրևը տեղում էր ու իւր մեծ կաթիլներով ճրդփացնում լճացած ջրերը:

Ընկաւ բահը ծերունու ձեռքից, աչքերը մթնեցին, ծնկները ծալեցին և նա նստեց տեղն ու տեղը, իւր ընտանիքը կերակրող ցորենի դիակների կողքին ու գլուխը թաղեց ձեռքերի մէջ...

Ձին քշեցի: Միրտ չունեցայ մխիթարական ոչ մի խօսք ասելու: Աւելորդ էր:

Եւ երբ հեռուից յետ նայեցի, տեսայ՝ թշւառ ծերունին, միշտ նոյն դիրքի մէջ նստած իւր աւեր արտի կողքին, գլուխը ձեռքերի մէջ և ալեգարդ մազերը տեղացող անձրևի տակ...



37. Կարկուտ

Ա.

Անցել էր գարուն, ամառը եկել, բիւր անթիւ բարիք զիւրացուն բերել. կանաչ արտերի ցորենն ու գարին, կորեկն ու հաճար ուռել ու լցել, ոսկեգոյն ներկել և այգիների խնձորն ու տանձը, դամբուլն ու ծիրան հասել, կարմրել, ծառերը բռնել. իսկ սեխաստանի սեխն ու ձմերուկ, դդումն ու գազար փորերն ուռցրել, մեղրի համ առել...

Գետը պարզել էր, խոտը երկարել, հօտեր, նախիրներ դաշտերը փռել, ծառերի գլխին և կամ արտերում թռչունք բոյն դրել, ձագուկներ հանել.

Սողում էր օձը խոտերի միջից, մեղուն թռչկոսում ծաղկից դէպ ծաղիկ. կրիան էլ՝ վիզը հանած պատեանից՝ քաշում, քաշկրտում թփերի տակից:

Պայծառ էր օրը, պայծառ էր երկինք. ուրախ են թռչունք, անասունք, մարդիկ.

Բ.

Բայց այն ի՞նչ ամպ է, որ սարի գլխից կամաց գալիս է և իրան յետքից՝ կարծես շղթայած՝ քաշում է, բերում մեծ ու սև ամպեր, ամեն տեղ փռում...

Մի բոպէ ևս — խորին մթուժիւն ամեն ինչ պատեց. որոտաց երկինք, երկիր դղրդաց, փայլակն ու կայծակ իրար հետ խառնւած՝ մարդկանց սրտերն ահ ու դող զցեց: Մռնչաց քամին, շարժւեցին ծառեր. կաթեց, կաթկթեց, յորդ անձրև թափեց. անձրևի յետքից սառցէ գնտակներ, չրրճիկ ու շրրճիկ, երկիր զլորւեց: Թափւում է, թափւում, սար ու ձոր ծածկում, ո՛չ դաշտ է հարցնում, ո՛չ այգի սառում: «Ա՛խ, կարկո՛ւտ, կարկո՛ւտ, — կանչում են մարդիկ, — այս ի՞նչ պատիժ է, խնայէ, երկինք»...

Գ.

Ծերը ծնկաչոք, արտասուքն աչքին, Աստուած է կանչում խնայել երկրին. պառաւր հանած երկթէ կասկարան,

բակն է շարտում և նզովք կարդում. հարս ու աղջիկներ,
պատի տակ շարւած՝ սուր դանակներով կարկուտ են
կտրում, երկնքին նայում. իսկ նրանց մօտ մշակ երկրա-
գործն յուսահատ կանգնած, ձեռը իւր ծոցում, անխ-վանխ
է քաշում, գլուխը շարժում...

Բայց հանդերի մէջ այս ի՞նչ շփոթ է և իրարանցում...
Հօտը ցրւել է, նախիրը փախել, ձիերը խրտնել, դէսուղէն
ընկել. թռչուններ թռել, բնի մէջ պահւել, հովիւ, հորթա-
րած, փայտհատ, կովարած,—ամենքն էլ իրանց գործերը
թողած՝ թփերի տակին մնացել են սառած...

Դ.

Դադարեց կարկուտը, որոտը լռեց. ամպերի ճեղքից
արևը նայեց. երկիրը ժպտաց, նորից փայլ առաւ, բայց
տխուր փայլ էր, որ նա ստացաւ:

Այգեպանը վազեց, իւր այգին մտաւ, դէսուղէն նա-
յեց, մնաց քարացած,—ծառեր տերեթափ, ճիւղեր կոտրը-
տւած, բոլոր պտուղներ կարկտահար եղած. «Վայ իմ աշ-
խատանք, ավսո՞ս իմ այգի», — ասաց ու գնաց՝ աչքերը
լցւած...

Արտատէրը գնաց, իւր արտը հասաւ. թուլացան ոտ-
ները, սևացան աչքեր, երբ տեսաւ հասկը ջարդւած, փը-
շրւած, հողին հաւսարած, անգութ հեղեղից աւազով
ծածկւած. «Կորա՛ւ իմ յոյսը, փշացաւ իմ արտ», — ասաց
ու գնաց՝ սիրտը մորմոքած...

Դրսում մնացած թռչունքն էլ թռան, գտան իրանց
բուն, բայց, անխ, ի՞նչ տեսան. բունը աւերւած, ձագուկ-
ներն ընկած, չորսից միայն մէկն ողջ էր մնացած. իսկ
այն միւսները, թափւած ցեխի մէջ, անշունչ ընկել են,
աչքերը փակել, որի գլուխը, որի թևիկը կարկտից ջարդ-
ւել...



38. Ամառն անտառում

Տիրում է լռութիւն: Անտառի մէջ մի տերև անգամ չի շարժւում: Կէսօրւայ տօթը բոլոր արարածներին հալածել է դէպի ծմակների. խորքը, դէպի քարանձաւների մթութիւնը: Թռչուններն անգամ չեն երգում: Ամեն ինչ նիհրում է, ամեն ինչ հանգստանում է:

Ինչ որ մի բան խշխշում է, կարծես ուղևորի ականջներին դիպչում է թփերի մեղմ սօսափիւնը: Նայում ես շուրջդ, — և անսպասելի պտուղներով բեռաւորւած շրթներու ճիւղերից քաշ է ընկած մի էակ: Ծառերի խտութիւնը թոյլ չի տալիս պարզ նշմարել նրան: Երևում է մի կարմիր շապիկ, որ իջել է մինչև մերկ սրունգները: Հետաքրքրութիւնդ վառւում է: Նայում ես, նայում, — այժմ նկատւում են կնոջ ծամերի երկար հիւսեր, որ ծածանւում են ճիւղերի հետ...

Դա մի շինական հայ աղջիկ է, որ հեռաւոր գիւղերից եկել է անտառային պտուղներ քաղելու: Նա քաղում է կարմիր, հասունացած պտուղներ և զգուշութեամբ լցնում զամբիւղի մէջ, որը քարշ է ընկած նրա թևից: Նա մենակ է: Փոքր ինչ հեռու, գլուխն առջևի թաթերի վրայ դրած՝ պարկել է նրա մտերիմ ընկերը, — մի անագին շուն: Փորձիր մօտենալ այդ աղջկան, — և այդ գազանը կրպատառօտ է քեզ...

Աղջիկը յետ նայեց: Անցորդը կասկածաւոր երկաց նրան. Չարմանալի արագութեամբ ցած ցատկեց նա շրթներուց և մի ականթարթում անյայտացաւ անտառի մթութեան մէջ:

Միքանի քայլ ևս, — և անցորդը նկատում է այդ անտառային կոյսերի երկրորդը, երրորդը... Դրանք չեն փախչում. դրանք ճանաչեցին, որ դու էլ իրանց նման հայ ես: Նայում են քեզ և խորամանկութեամբ ժպտում: Ինչո՞ւ, ի՞նչն է շարժում այդ միամիտ շինական աղջիկների ծիծաղը:

Նրանք նկատեցին քո դողդոջիւն քայլերը. նրանք տե-
սան, թէ ինչպէս դու երկչուս կերպով մագլցում ես ժայ-
ռերի վրայ և կրիայի նման առաջ ես սողում: Այդ արդէն
բաւական էր նրանց ծիծաղն առաջացնելու համար: Կար-
ծես մարդ լսում է նրանց ուրախ հանաքները.

«Այ փափկամորթ, սովորե՛լ ես կառքերի վրայ թեք
ընկնել կամ թաւշապատ դիւանների վրայ ծուլանալ. դէհ,
փորձիր մեր սարերի վրայ ման դալ, այն ժամանակ կա-
սենք, թէ դու էլ տղամարդ ես»...

39. Հունձ

Հնձի ամենաթոււնդ ժամանակն էր:

Ընդարձակ ու ոսկեփայլ դաշտի երեսին հացահատիկ-
ների բարդեր են երևում: Տեղ-տեղ, ցորենի խիտ և մար-
դաչափ բարձրացած արտերում, հնձած ալօսների խորքե-
րից, նկատւում են հնձողների կռացած մէջքերը. մի կող-
մից հնձում են նրանք արտը, իսկ միւս կողմից հաւաքում
բարդեր, դէզեր կազմում... Հասկերի խշխշոցը աշխարհք
բռնել: Աչքդ հեռուն դարձր՛ու. ահա կիսամերկ գեղջուկ-
ները, մի շապիկ միայն հագերին, կանգնել են, սայլերի
վրայ օրան են բարձում. սայլերի փոշին ամպանման
բարձրացել է շորացած ու խանձած դաշտի երեսին:

Ամբոխի բարձրացրած աղաղակը, եզների և ձիերի
տնաձայնը, սայլերի ճրճուոցը, լորերի ուրախ ճրճրտո-
ւոր, օդի մէջ խառնւած անթիւ (ու անհամար) միջատների
ըրժւրժոցը, — այս ամենը նայողի հոգին են փառաւորում
և սիրտը լցնում բերկրութեամբ:



40. Այգեքսաղ

Առաւօտը վաղ-վաղ հասանք այգի: Ոչխարները մորթեցին, կրակ արին, պղնձները վրան դրին, շամփուրները շարեցին, որ նախաճաշի համար խորոված անեն: Յետոյ մի-մի թաս օղի խմեցին, մի-մի պատառ խորոված, մի-մի պատառ էլ կաթնահաց կերան և սկսեցին իրանց գործը:

Մեծերը, մի-մի քաղալակ վազի տակ դրած, սուր դանակները ձեռքերին՝ կտրում էին խաղողի հասած ճուղիները և ձգում մէջը, փոքրերը այդ քաղալակները տանում էին, մեծ կթոցներն ածում, իսկ երիտասարդները կթոցները շալակում էին և տանում, ածում կիսատակառի վրայի շանը:

Ամբողջ այգին իւր կեանքից զրկելիս մի նոր կեանք էր ստացել: Չայն էր, որ լսում էր ամեն մի թփի տակից, ամեն մի ծառի վրայից: Մէկը կանչում էր. «Կթոցը լցւել է, եկէք, տարէք»: — Միւսը բղաւում էր. «Քաղալակները լցւել են, շուտ արէք, կթոց բերէք»:

Մանր երեխայքը, փոքրիկ թռչունների պէս, անդադար դէսուդէն էին ընկնում, ամեն ճուղից մի-մի հատիկ պոկում, համը տեսնում, և որովհետեւ էլ ոչ ախորժակ ունէին և ոչ փորներումը տեղ, ուստի միւս մրգեղէնների ծառերի վրայ էին մագլցում, կերածը մարսում, նրանց համն էլ տեսնում:

Ճաշի ժամանակը հասաւ: Ամենքն էլ հաւաքւեցան մեծ ընկուզենու տակ. հացը, խաշլաման փռեցին կանաչ խոտի վրայ և բոլորւեցան նրա շուրջը: Բայց ով ախորժակ ունէր հաց ուտելու: Միծաղ, խնդութիւն, գլարճութիւն, կատակներ անել—այս էր նրանց ճաշը: Ճաշից յետոյ էլ մի քիչ քաղեցին և երեկոյին բոլոր քաղողները մի-մի քաղալակ խաղողով լցրին, իրանց հետ տարան: Այսպէս շարունակւեց երեք-չորս օր և իւրաքանչիւր օր մի նոր ուրախութիւն, մի նոր գլարճութիւն էին սարքում:

41. Չմեռը հայ գիւղերում

Բարիկենդան էր: Ձիւնը եկել, դիզւել, սար ու ձոր բռնել էր: Պարզկայ գիշերն այնպէս էր գետինը սառցրել, որ ամեն մի ոտը կոխելիս՝ տրաք-տրաքում, ճոճում, ճքճքում էր ու մարդի մարմինը սրսռացնում:

Ամեն մի ծառի ճղքից, ամեն մի տան կտրից հազար տեսակ սառցի լուլայ, հազար տեսակ ձնի քուլայ կախ էր ընկել ու բիզ-բիզ իրար վրայ սառել:

Հէնց գիտենաս՝ սար ու ձոր կամ նոր էր ծաղկել, կամ նոր ծերացել, մահւան դուռն ընկել, շունչն էր մնացել, որ տայ ու աշխարհքին մնաս բարով ասի:

Թռչուն, գազան, անասուն, սողուն՝ որը փետացել, այստեղ այնտեղ վայր է ընկել, որն էլ վաղուց, ամսով առաջ, բունը մտել, ձայնը կտրել, պաշարը վայելում, գարնան գալուն էր սպասում:

Գետերի, առուների երեսները սառոյցի մի գազ եկել, հաստացել, իրար վրայ դիզւել, այնպէս էր ջրի, աղբիւրի բերնին հուփ տւել, որ մօտների կանգնողը միմիայն նրանց խուլ ձայնն էր լսում, որ սառցի տակին տխուր, տրտում քլքում էր ու էլ յետ: այստեղ այնտեղ կամաց-կամաց ձայնը կտրում, պապանձւում, սառչում:

Այս առաւօտ արեգակը որ իւր գլուխը բարձրացրեց ու աչքն աշխարհի վրայ գցեց, շողքը սարերի գագաթին, դաշտերի երեսին այնպէս էր պէծին-պէծին տալիս, պրս-պրդում, փայլում ու սառցի, ձնի հետ խաղում, ծիծաղում, կանաչ ու կարմրին տալիս, որ հէնց իմանաս, թէ արմաստ, զմրուխտ, եաղութ ու հազար տեսակ անգին քարեր լինէին դաշտերի, սարերի գլխին, երեսին, լանջին փռւած:

Սարերի սառը բուքը, ձորերի դառնաշունչ քամին այնպէս էր մէյդան բաց արել, գոռում, փչում, հոսան անում, ձնի թեփը իրար գլխով տալիս, որ ճամպորդի քիթ ու պոռնկը կպցնում, ճաքացնում էր, երեսը պատում, գլխին, երեսին հազար անգամ խփում, աչք ու բերան

լցնում, շատին կամ ձորերն էր գցում, խեղդում, կամ ճնումը թաղում, շունչը կտրում, կամ ոտ ու գլուխը փետացրած՝ ճամպից խոկում, սար ու ձոր գցում, կամ քարէքար տալիս:

Այսպէս մի խիստ ձմրան օրւայ լոյսն ու մութը որ բաժանւեց, աղօթարանը բացւեց, մեր զիւղացիք քնից վեր կացան, տան երթիկները բաց ւարին, երեսները լացին, մէկ երկու խաչ հանեցին, բարի լոյս ասացին իրար, մանր երեխանցը ծածկեցին, ու ամեն մարդ գնաց իւր բանին:

Մեծ մարդիկ մօրուքները սանդրելով, պառաւ կնանիքը չարսաւը կոնատակերին՝ կամաց-կամաց դուրս եկան, գնացին ժամ:

Երիտասարդներն էլ՝ ամառւայ պէս խոտ հնձելու, կալ կալսելու, այգի փորելու, թաղելու, դարման կրելու հոգս չունենալով՝ աչքերը ճմռեցին, ճլրմկոտալով ու քնաթաթախ մտան գոմ, որ տաւարին, ձիանոցը խոտ տան, տակները սրբեն, ջուրը տանեն, ձիանը թիմարեն ու հետը խաղ ասելով՝ էլ յետ կապեն ու գնան տուն:

Յարգևոր հարսները՝ ասղարոյր, ոսկեկար օշմաղը մինչև քթների կէսը խոր գցած, քօղ ու լաչակի ծայրը մինչև աչքների տակը խոր քաշած, որ էլ երեսները չէր երևում, մի դարայի կամ դադակ միթանայ հազներին՝ մովի կամ կտաւի շապկով զարդարած, մի մեծ գօտկով մէջքերը չորս տակ, հինգ տակ կապած, թռչնիկի պէս կուփ-կուփ վեր թռան, երեսներին մի քիչ ջուր քսեցին, փէշով սրբեցին, ու որն սկսեց տունն աւելել, որը դուռը սրբել, որն էլ չախմախին տւաւ, կրակ արաւ, որ թոնիը վառի, կերակուր պատրաստի:

Տան նորահաս աղջկերքն էլ գլխները սանդրեցին, մազերը հիւսած, քամակներին գցած, կարմրագագաթ մորթէ գդակը գլխներին՝ ականջները կապեցին, դաստամալն ուսերին գցեցին, կուժը վրան դրին, բերանը կալան ու գնացին, որ տան համար ջուր բերեն. ջրի վրայ էլ երկար

ժամանակ իրար հետ խօսելով, ծիծաղելով, մէկն իրանց տուն գնաց, միւսն իրանց:

Արեգակի շողքն ընկաւ տունը: Բորեազը մի կողմից էր շլատցնում,—բզզում, հոսանք միւս կողմից վզզում, ձիւնը պատուհաններովն ու երդկովը հերս ածում, աչք ու ականջ լցնում: Երեխէքն էլ քնաթաթախ վեր կացած, թոնրի չորս կողմովը բոլորւած, շարւած ու ըռելաները անլայ, ոտքերը քարին, գետնին էին ծեծում, մօրները խփում, որ հաց առնեն, ուտեն: Աթարի սև, թանձր ծուխը դուռն ու երդիկը կալել, տունը միտի ծով էր շինել, այնպէս որ մարդի աչքը առաջը չէր կարում ջուկի:

Երեխաների սուգն ու շիւանը գլուխ էր տանում: Որն օրօրոցումն էր լալիս, որը դեռ վերմակի տակին աչք ու բերան ծխով լիքը՝ գոռում, հարայ տալիս, հաց ուզում, որն էլ տւած հացովը հերիք չէր, էլի ժնգժնգում, ուզում էր, որ էլի տան, որ ձայնը կարի:

Խեղճ տանտիկինը չէր իմանում, թէ ձեռը որի բերնին դնի, որի աչքը կշտացնի, ու իւր բերանն ու աչքը հօշատ բաց ու խուփ անելով, համարեա թէ մեռել էր:

Վերջապէս Աստծու ողորմութիւնը հասաւ, ծուխը յետ քաշւեց, քամին դադարեց, ջրի գնացողները եկան, տղէրքն էլ հաւաքւեցին: Արեգակը մի նիզակաչափ ելաւ, բարձրացաւ, բայց դեռ ժամաւորները չեկած, «ողորմի Աստուած» չլսած, ո՞վ կարող էր բերանը նշխարք դնել...

42. Դրրնդեգ

Տեառնընդառաջի երկուշաբթին էր. մինչև չորեքշաբթին կըլուսանար, գիւղի շօրօր-մօրօլ նորահարսների և մանաւանդ աղջիկների սիրտը ոլոր-մոլորն էր ընկել: Նախ եկեղեցու գաւթում, ապա իրանց կտուրներին վառելիք դրրնդէզի սուր ճրութ-ճրութոցը, նրա հրաշէկ բոցի ալւէալ թռիչքն ու կապտագոյն ծխի քուլա-քուլա վազքը, մանաւանդ էն բարեմիտ փոքրիկների յիշողութեան մէջ թար-

մացել էին և նրանց անհանգստացրել: Մինչ այս, մինչ այն, ազիզ չորեքշաբթին էլ լուսացաւ: Հէքրմանց դռանը հաւաքւած չալուչալտիկ աղջիկների մի խումբ, առանձին խորհրդածութեան մէջ էին այդ օրը: Թամփլիկ Թամօն, մարալ Մարօն, անուշ Անօն ու ջանիկ Զաւօն, էդ խմբի գլուխն անցած՝ մտածում էին, թէ՛ ինչպէս անեն, որ իրանց վառելիք դրնդէզի համար ցրուտենի ձեռք բերեն:

— Զաւօ, Զաւօ, հրէն մերոնց Օվակն եկաւ, դնա, պը-լուխը թըլըսորի, բայքի եկեղեցու դռնից մի խելի (բաւա-կանին) ցրուտենի բերի, — խորհուրդ տւեց Մարօն Զաւօին:

— Հա՛, հա՛, Մարօն լաւ տսեց, — հաւանութիւն տւեցին ընկերուհիները և Զաւօին դրկեցին, որ գնայ և Օվակին համոզի:

— Էս սհաթիս, — համաձայնեց Զաւօն և վազեց դէպի Օվակը, որը դարի տակից բարձրանում էր դէպի տուն: Բայց դեռ նա կալին չհասած, Զաւօն նրա առաջը կտրեց:

— Օվակ ջան, Օվակ, գլխովդ պտոյտ գամ, էս իրիկուն մեզ համար մի քիչ ցրուտենի ճարի, աղջկէրքս դրնդէզ ենք վառելու:

— Ինչո՞ւ, ես ձեր հօր ծառան եմ, որ զուր տեղը գնամ, դէսուդէն ընկնեմ, — դիտմամբ դժկամեց Օվակը:

— Քեզ մատանդ, Օվակ ջան: Խաթրներս մի կտորիլ, մեր տղէրքն առաւօտւանից պարբնոցումը փուքս են փը-չում, դեռ տուն չեն եկել, որ նրանց ուղարկենք. ի՞նչ կըլի, ա՛յ տղայ, դու էլ մերը չես, մեր մօրաքրոջ տղէն:

Բայց դեռ Զաւօն Օվակին հաւանութեան չբերած, աղջկերքն՝ ամօթխածութիւնը մի կողմ թողած, գնացին ու շրջապատեցին նրանց:

— Հրէս, սրանք էլ են աղաչանք անում, — աւելացրեց Զաւօն:

Օվակը, որ մօտ տասնևութը տարեկան պատանի էր և դեռ տղայական ուրախութեան սիրահար, աղջկերանց խմբի մէջ մի տեսակ փառաւորած զգաց իրան և ասաց.

—Բաս որ էտենց է, ձեզ համար որ մի մեծ կապուկ փուշ բերեմ՝ ինձ ի՞նչ կըտաք:

—Ես մի ջուխտ ասխարուր գուլպայ կանեմ, — խոստացաւ Ջաւօն:

—Ես էլ մի ջուխտ կազի պաճիճ կըգործեմ, — վրայ բերեց Անօն:

—Խաս թարգերից կարած քիսէն էլ իմ պարտքը, — մէջ ընկաւ Թամօն:

—Մի ջուխտ կոնակապ էլ ես կըկարեմ, — յետ չմնաց իւր ընկերուհիներից Մարօն:

Ու դեռ էլի ուրիշ-ուրիշ պարզեներ էլ ասպարէզ կըգային, եթէ Օվակը՝ էդ խոստումների տարափի տակ չըփափկէր:

—Լա՛ւ, լա՛ւ, հերիք նիսիա խօսէք. որ էդքան խնդրում էք, էս սահաթիս գնամ, ցրուտենի ստեղծեմ ձեզ համար:

—Եւ նա շտապով ներս մտաւ սրահը, թոկի փաթաթակը վերցրեց ու ցած իջաւ գիւղամէջ:

Աղջկերքը Օվակին համաձայնութեան բերելուց յետոյ, ուրախ սրտով ցրւեցին իրանց տները՝ երեկոյեան նորից հաւաքւելու:

Երեկոն էլ հեռու չէր: Էդ խօսակցութիւնից հազիւ միքանի ժամ անցած, արդէն եկեղեցու զանգերը «վո՛ւր հա վո՛ւր» դողանջում էին: Գիւղի մեծն ու փոքրը շտապում էին տեառնընդառաջի տօնին հասնելու: Նորապսակ փեսաները՝ մի-մի կապուկ ցրուտենի շալակած՝ բերում, դիզում էին եկեղեցու դռանը: Փափախներով քրտինքը սրբելուց յետոյ, պատահած ձեռքով երեսներին աջ ու ձախ էին անում, — խաչակնքում, — ապա եկեղեցու դուռը համբուրում և մի կողմը քաշւում:

Մինչ էսպէս՝ ամեն ինչ պատրաստւում էր դուրսը, եկեղեցու ներսի արարողութիւնը վերջացաւ: Հանդիսականները դուրս եկան, հաւաքւեցին դէզի շուրջը, քահանան օրհնած մոմով վառեց դէզը, միքանի բարեմաղթութիւններ արաւ ու հեռացաւ: Խարոյկը միքանի ըոպէից յետոյ՝ բոցավառւեց. նրա սուր ճրճընթոցն ու խնկան

բոյրը, զանգերի մելամաղձոտ «տանդօն», երիտասարդների բացագանչութիւնները, մեծերի օրհնանքի ձայնն ու ջահիլների աղմուկը իրար խառնւած՝ մի դրաւիչ ազդեցութիւն էին թողնում ամենքի վրայ:


Երբ մեծերն հեռացան դէպի տները, ասպարէզը մնաց ջահիլներին: Նորահարսներն էլ իրանց ծիսական պահանջի համաձայն միքանի անգամ թռչելուց յետոյ, հերթը հասաւ աղջիկներին: Սրանք էլ խուճիկ-մուճիկ դալով, դընջ-դընջօցով բոլ-բոլ ցատկելուց յետոյ, շտապեցին տուն՝ իրանց կտուրների դըրնդէզը չաղ անելու, վառելու, որպէսզի այնտեղ աւելի ազատ թռչկոտան ու ցատկոտեն:

Մերոնք՝ Անուշը, Թամօն, Զաւօն ու Մարօն, Օվակի բերած բոլ-բոլ ցըռտնին արդէն Հէքըմանց կտերը կիտուկ էին արել, տուն հասնելուն պէս կրակ տւեցին ու անչքդ բարին տեսնի, նրանց անմեղ խինդն ու խուճուղը, ճիչն ու աղաղակը, երգն ու պարը մէկ-մէկու սիրտ ու հոգի տւած՝ ասպարէզ էին քաշել ամենքին մի բիչ ազատ զւարճանալու:

—Ա՛, դօչաղ Սօնի, հլա մի տես, ցնց է թռչում կրակի մէջ, կասես հրեղէն ըլի, հրեղէն, — քաջալերում էին ընկերուհիները Սօնիկին:

—Անուշն ինչո՞վ է պակաս, կրակիցը մի թիզ էլ աւել է թռչում, — խօսում էին միւսները:

—Զաւօ, Զաւօ, հերթով թռէք, հերթով, — կարգադրում էր Անուշը: Եւ նրանք՝ մինչև բոցի իջնելը, էնքան թռան ու ցատկոտեցին, էնքան ծուլ-ծուլ եղան ու լօք տւին, խնդացին և ուրախացան, որ թշերը վարդ կտրած՝ յոգնեցին: Այնուհետև բաւականութեամբ լի, մէկ-մէկու գլուխ գովարանելով՝ շտապեցին տուն: Աւելի մնալ անկարող էին, որովհետև մութը տարածւում էր և տանիցը ահ ունէին:





Ե Ր Ր Ո Ր Դ Բ Ա Ժ Ի Ն

43. Հաւատարիմ շուներ

Շուներ պատկանում է օգտակար ընտանի կենդանիների թւին. նա պահպանում է տիրոջ ստացւածքը գողերից, նրա երկիւղից վայրենի գազանները չեն մօտենում մեր ընտանի անասուններին, իսկ թէ որքան օգնում է նա որսորդին որսի ժամանակ,—ասելն աւելորդ է: Ատամների կազմութեամբ շուներ մսակեր կենդանիների դասակարգին է պատկանում: Կան շների բազմաթիւ ցեղեր, սակայն բոլոր ցեղերն էլ յայտնի են, իբրև խելացի, հասկացող կենդանիներ և սերտ կապով կապւած են լինում իրանց տէրերի հետ. իզուր չէ, որ նրանց մարդու ընդեկաններ են անւանում: Իբրև ապացոյց շների սրամտութեան և հաւատարմութեան՝ պատմում են հետևեալը.

Մի վաճառական ձիով ճանապարհորդելու դուրս եկաւ. նրա յետևից վազում էր նրա հաւատարիմ շուներ: Վաճառականը գնում էր մի մեծ դումար ստանալու: Փողերն ստացաւ, ոսկով լիք քսակը կապեց թամբի յետևը և ճանապարհ ընկաւ դէպի տուն: Ճանապարհին քսակի կապը կտրւեց, պարկը վայր ընկաւ, իսկ վաճառականն այդ քանը չնկատեց: Սրատես շուներ տեսաւ այդ և փորձեց

վերցնել քսակը իւր աստամներով, բայց զգաց, որ դա ուժից բարձր է: Այն ժամանակ քսակը թողնելով, վազեց, հասաւ տիրոջը, առաջ անցաւ, սկսեց յարձակել ձիու վրայ և կատաղութեամբ ու յամառութեամբ հաչելով, աշխատում էր նրան կանգնեցնել: Պատճառը չիմանալով, վաճառականը բարկանում էր շան վրայ, հայհոյում նրան, խփում էր մտրակով, — բայց ոչ մի բան չէր օգնում: Հաւատարիմ կենդանին շարունակում էր յարձակել ձիու վրայ այնպիսի կատաղութեամբ, որ կարծես կամենում էր ցած քաշել տիրոջը: Տեսնելով որ ոչինչ չի օգնում և որ վաճառականը հետզհետէ հեռանում է, շունն սկսեց կծոտել ձիու ոտները, որ գոնէ դրանով հարկադրէ իւր տիրոջը յետ դառնալ: Վաճառականը վախեցաւ. նա մտածեց, թէ մի գուցէ շունը կատաղել է և գիտենալով, թէ որքան վտանգաւոր են կատաղած շները, նա վճռեց սպանել իւր հաւատարիմ ծառային:

Այնուամենայնիւ դեռ երկար ժամանակ վաճառականըն աշխատում էր ազատել շանից մերթ փայփայանքներով, մերթ սպառնալիքներով, մերթ մտրակի հարւածներով, բայց տեսնելով որ այդ չի օգնում, հանեց ատրրճանակը և սրտամորմոք արձակեց հաւատարիմ շան վրայ: Խեղճ կենդանին վայր ընկաւ, բայց մի բոպէից յետոյ վեր կացաւ և ցաւալի ճչիւնով ու արիւնաթաթախ աշխատում էր հետևել իւր տիրոջը: Վաճառականը շատ էր սիրում իւր շանը. նրա համար ծանր էր տեսնել կենդանու տանջանքը, ուստի և խթեց ձիուն և առաջ արշաւեց: Մի քիչ հեռանալով, նա կամեցաւ տեսնել, թէ ինչ եղաւ խեղճ կենդանին, և այստեղ միայն՝ յետ նայելիս՝ նա նկատեց, որ փողի քսակը չկայ: Նոր հասկացաւ վաճառականը, թէ ինչո՞ւ էր այդպէս կատաղաբար հաչում և յարձակւում իրան վրայ հաւատարիմ շունը, և նա աւելի ցաւեցաւ շան, քան թէ փողերի վրայ: Նա իսկոյն յետ դարձրեց ձիու գլուխը, բայց շանն այնտեղ չգտաւ, ուր թողել էր: Արիւնի հետքը ցոյց էր տալիս, որ շունն յետ է դարձել: Ո՞րքան ցաւեց բարի վաճառականը, երբ արիւնի հետքը

բունած գնալով նա գտաւ հաւատարիմ կենդանուն փողերի քսակի վրայ ընկած: Գիտակցաբար նա յուժ էր շունը իւր տիրոջը և փաղաքշանքով լիզում նրա ձեռքերը: Մի քանի րոպէից յետոյ շունը սատակեց, իսկ վաճառականը տխուր-տրտում վերադարձաւ տունը:

Թւեցէք այն քոյր օգուտները, որ ստանում ենք շանից:
Պատմեցէք ղեպքեր շան հաւատարմութեան և խելքի մասին:



44. Բօբը

և.

Բօբը այն շների ազնիւ ցեղիցն էր, որոնց հայրենիքը իւֆաունդլենդ կղզին է: Այդ շների գլուխը լայն է, պոչը՝ կարճ, մազերը երկար. մատների արանքները պատած են փաղանդով, այդ պատճառով էլ հրաշալի լող են տալիս:

Բօբը ծնւել է մի անգլիական նաւի վրայ, որ Հիւսիսային Ամերիկայի արևելեան ափի մօտ խարիսխ էր գցել:

Բօբը երբեմն օրերով լող էր տալիս և առանձին հա-

ճուրթեամբ սուղուում ու հանում էր ջրի տակից դանազան
 իրեր, որ գցում էին ջրի մէջ իւր տէրը կամ ուրիշները:
 Մանաւանդ շատ էր ուրախանում, նրբ իւր տէրը, մի երի-
 տասարդ նաւաստի, առաջարկում էր նրան գնալ միասին
 լողալու: Այն ժամանակ նա թաւալում էր ջրի մէջ,
 ամից հեռանում էր, կրկին վերագառնում, սուղուում էր,
 անցնում տիրոջ տակով և հազար ու մի կատակներ էր
 անում: Բօքը շատ էր սիրում իւր տիրոջը, որ մի շիտակ
 ու բարի մարդ էր:

Բ.

Մի գիշեր, երբ նաւը մօտենում էր Անգլիայի ափե-
 րին, սարսափելի փոթորիկ բարձրացաւ և նաւը փշրեց:
 Բոլոր ճամպորդները և ծառայողները խեղդեցին, Բօքը
 իսկոյն և եթ ջուրն ընկաւ, հրաւիրելով իւր տիրոջն էլ հե-
 տեւել իւր օրինակին: Նրանք լողում էին դէպի ափը, որ
 հազիւ էր նշմարւում: Այսպէս մօտ երեք վերստ լող տա-
 լով մարդն ու շունը հասան միջանի ժայռերի, որոնք դուրս
 էին ցցած ջրի միջից և ուժասպառ ընկան: Բայց այդ
 քարերը չէին կարող իբրև հաստատ ապաստան ծառայել,
 որովհետև մօտ էր մակընթացութեան ժամանակը, ժայ-
 ուերը ծածկւելու էին և ալիքները խեղճերին կրկին պիտի
 քաշէին դէպի ծովը:

Նաւաստին փորձում էր գոռալ, կանչել, բայց բացի
 ծովից ոչ ոք ձայն չէր տալիս նրա կանչին: Բօքը պար-
 կել էր և փաղաքշանքով նայում էր տիրոջը, կարծես ասել
 էր ուզում: «Ինչո՞ւ ես յուսահատւում. դու գիտես, որ ես
 լաւ եմ լող տալիս, մի՞թէ ես քո ազատութեանդ համար
 ոչինչ չեմ կարող անել»:

Տէրը կարդաց իւր շան մեծ աչքերի մէջ նրա միտքը
 և սիրտ առաւ: Գրպանից հանեց մի բանալի, դրեց շան
 բերանը և ցոյց տալով ափը՝ ասաւ. «Լող տո՛ւր»: Բօքը
 նետուեց ջուրը, հասաւ ափը և հաչելով սկսեց օգնութեան
 կանչել: Բայց ալիքները նրա ձայնը խլացնում էին: Այն
 ժամանակ Բօքը աւելի առաջ վազեց և իւր ոռնոցով զար-

Թեցրեց մօտիկ ազարակում ապրող մարդկանց: Նրանցից միքանիսը դուրս թռան. Բօբը արտասուլից աչքերով մօտեցաւ և լիզեց նրանց ձեռքերը: Յետոյ պարկեց նրանց ոտքերի տակ և կրկին ողբալի ձայնով ոռնաց:

Տեսնելով բանալին՝ կալածատէրը հասկացաւ, որ իւր տանից ոչ հեռու մէկը օգնութեան է կանչում: Բօբը խնայուն վեր կացաւ գետնից և արագ վազեց դէպի ծովափը:

Մարդիկ հետևեցին նրան, վերցնելով հետները մի երկար պարան: Ծովափին Բօբը կանգնեց ու բարձր ոռնաց, կարծես ուզում էր յայտնել իւր խեղդւող տիրոջը, թէ գալիս են օգնելու: Տիրոջ յուսահատ աղաղակը պատասխանեց հաւատարիմ ընկերոջ անհանգիստ ոռնոցին:

Մինչդեռ մարդիկ դատում էին, ինչպէս օգնել խեղդւողին, Բօբը բռնեց պարանի ծայրից և նետուեց ծովը: Մարդիկ ապշեցին շան հնարագիտութեան վրայ. սկսեցին ապ թողնել պարանը, պահելով միւս ծայրը իրանց ձեռքում: Բօբը մէկ սուզւում, մէկ նորից երևում էր ջրի մակերեսին, բայց տիրոջ աղիողորմ ձայնը նրան նոր ուժ էր տալիս և ստիպում էր դիմադրել ամեն արգելքների: Եւ վերջապէս հասաւ ճիշտ ժամանակին. եթէ մի քիչ էլ ուշանար, արդէն ուշ կըլինէր:

Նաւաստին բռնեց պարանը, կապեց իւր մէջքին և իմաց տալով գիւղացիներին, որ քաշեն: Նաւաստին հազիւ հազ ար կտրողանում լող տալ թուլացած ձեռքերով: Բօբը նրա ողբից չէր հեռանում և իւր հաջոցով սիրտ էր տալիս թուլացող ընկերոջը: Այսպէս քառորդ ժամ ալիքների դէմ ուռնելուց յետոյ, տէրն ու շունը վերջապէս հասան ափը: Շունը ուժից ընկած անզգայ ընկաւ գետին. շատ կարելի ուշաթափուեց ուրախութիւնից, որ իւր տիրոջն ազատել էր: Նրանց երկուսին էլ տեղափոխեցին ազարակը, այնտեղից էլ Լոնդոն հիւանդանոցը: Բայց տէրը երկար չապրեց և մեռաւ:

Գ.

Տիրոջ մահից յետոյ Բօբը ընկաւ մի քաղաքապահի ձեռքը, որը իւր հերթին գիշերները հսկում էր փողոցում:

Նոր տէրը, գիշերւայ մենակութեան մէջ ընկեր ունենալու համար, շունն էլ իւր հետն էր առնում: Մի անգամ խաւարի միջից լսեց մի ճիչ, օգնութեան մի կոչ: Բօքը մի ակնթարթում տեղից վեր ցատկեց ու առաջ սլացաւ: Քաղաքապահը հազիւ էր նրան նշմարում մթի մէջ: Բայց անի լսեց մի այլ ճիչ. այս անգամ մէկ ուրիշն էր կանչում: Քաղաքապահը, մօտ վազելով՝ տեսաւ, որ Բօքը իւր սուր ատամներով բռնել է մի մարդու ոտից, իսկ միւսը սարսափահար դեռ շարունակում է կանչել օգնութեան:

Բանից երևաց, որ մի չարագործ էր, որ յարձակւել էր անցորդի վրայ և կամեցել էր նրան կողոպել, երբ շունը վրայ էր հասել:

Քաղաքապահը ազատեց չարագործին Բօքի ատամներից ու քաշ տւեց թաղի ոստիկանատունը:

Միքանի օրից յետոյ Բօքը ջրից հանեց մի երեխայ, որ ընկել էր գետը: Յետոյ ազատեց մի կին, որ վշտից ուզում էր գետում խեղդւել. Բօքը սկսեց երևալ հրդէհներին և այնտեղ էլ ցոյց էր տալիս իւր քաջութիւնն ու անձնագոհութիւնը, փրկելով բոցերից փոքրիկ երեխաներին, դուրս քաշելով ախոռներից ձիերին...

Եթէ ցանկանայինք թւել Բօքի անձնւիրութեան բոլոր գործերը, դեռ շատ բան պիտի պատմէինք: Նրա անունը հռչակւեց: Մի յայտնի նկարիչ նկարեց նրա պատկերը, որը և տպւեց թերթերում: Բօքը պարգև ստացաւ մի արծաթէ մեդալ՝ մարդկանց փրկելու համար, յետոյ էլ պատւաւոր ոսկէ մեդալ:

45. Վանայ կատուն

Շատերն են լսել Վանայ կատուի մասին, բայց քչերն են տեսել և շատ քչերն ուսումնասիրել նրան. Այդ կատուն սիրուն է, բրդոտ, գեղեցիկ, կլոր գլխով ու փայլուն, սիրուն աչքերով. նրա բուրդը փուլում է մինչև ոտները և մարդս ախորժանքով է շոյում այդ խիտ, մետաքսա-

Նման մագերը: Իմ հօրեղբայրս մի այդպիսի կատու ու-
նէր և այդ կատուն մի օր երկու ձագ բերաւ:

Մենք նրան գտանք պարկած և ձագերը գրկի մէջ
ամփոփած: Շատ սիրուն էին այդ ձագերը, բայց այդ օրը
նրանք չէին շարժուում և մայրը լիզում էր նրանց: Ես
կամեցայ խաղալ նրանց հետ. հեռացրի մօրը և ձեռքս
առայ միայն երկու խեղդած կատուի ձագեր... Ո՛րքան
ցաւեցինք... Մայրը մօտեցաւ ձագերին, լիզեց, շարժեց
նրանց և երբ տեսաւ, որ չէին շարժուում, մի քայլ հեռու
գնաց, մեզ նայեց: Մենք շոյեցինք նրան: Նա կրկին մօ-
տեցաւ, լիզեց ձագերին և ես նկատեցի կատուի աչքերում
արտասուքի կաթիլներ... Խեղճ ձագուկներ, արու կատուն
էր խեղդել նրանց: Մայրը հանդարտութեամբ նայեց մեզ
և դուրս գալով անհետացաւ:

Հօրաքրոջս մանուկները մի փոս փորեցին և ձագուկ-
ները թաղեցին:

Այդ օրը կատուն չերևեց այլևս. ես շատ փնտրեցի,
բայց չգտայ: Միւս օրն առաւօտեան նկատեցի, որ մի
մոխրագոյն, գզգզած կատու կանգնել է այնտեղ, որտեղ
թաղեցին խեղդած ձագերին. Չա՛ր, անգնլթ կատու: Դա
էր ձագուկներին խեղդողը: Աչքս դարձրի և միքանի քայլ
հեռու ծառի տակը կծկւած տեսայ ձագերի մօրը, որ
սարսափելի աչքերով արուին էր նայում: Արուն նկատեց
այդ, երկու ոստիւն գործեց և յետ փախաւ: Էզը վազեց
նրա յետևից և երկուսն էլ անհետացան: Ես յետ դարձայ,
բայց լսելով կատուների մլաւոցը, բարձր նայեցի և տե-
սայ, որ արուն ու էզը՝ միմեանց դէմ կանգնած, մլաւում
էին—խօսում էին: Նրանք առաջ մեղմօրէն էին մլաւում,
երևի էզը հաշիւ էր պահանջում արուից նրա արած ան-
գթութեան համար: Արուն արդարանալ աշխատեց: «Ո՛չ»,
—գոռաց էզը կատաղի մլաւիւնով:—«Դու անգնլթ ես»,—
ասում էր այդ մլաւոցը: «Էլ չեմ անիլ», — գոչում էր
արուն յանցաւորի ձայնով և պոչը շարժելով... Էզը մեղ-
մացաւ, մլաւիւններն էլ մեղմացան և երկուսն էլ ցած
իջնելով բաժանւեցին:

Շատ տխուր էր փիսօն իւր ձագուկներինց զրկելու համար և երբէք հաց չէր ուտում: Ես խնդրեցի մեր դրացուն և նա տւաւ ինձ իւր կատուի ձագերինց մէկը, որին ես դրի մեր կատուի առջևը. նա նայեց ձագուկին տխուր աչքերով, միքանի ըռպէ մտածեց, և յետոյ, զրեթէ աւամայ, բերնով վերցրեց նրան և, տանելով բնակարանը, սկսեց թոյլ-թոյլ լիզել նրան. նա թէև հասկացել էր, որ իւր ձագուկը չէ այդ, բայց որդեգրեց նրան:

Մեր փիսօյի կաթը կտրւել էր և մենք ձագուկին ոչխարի կաթն էինք տալիս:

Հօրաքրոջս մօտ նստած՝ մի կիւրակէ օր խօսում էինք, երբ նրա որդին իմաց տւաւ, որ արուն կրկին ձագուկին խեղդել է: Մենք դուրս վազեցինք և մտանք կատուի մօտ... Փիսօն այս անգամ լաց չէր լինում. նա կատաղի աչքերով չորս կողմը նայեց և դուրս թռաւ սենեակից: Այս անգամ անգուլթ արուն ուղղակի ձագուկի գլուխը բաժանել էր մարմնից. Մենք դուրս գնացինք և այնտեղ մի սարսափելի տեսարան ներկայացաւ մեր առջև: Մեր փիսօն բռնել էր արուի կոկորդից և խփում էր նրան պատէպատ՝ խռպոտ մռնչիւն արձակելով... Մի կատարեալ փոքրիկ առիւծ էր դարձել... Չար արուն ոտներով աշխատում էր վիրաւորել մեր փիսօին, բայց նա սաստիկ արագութեամբ նրան պատէպատ խփեց, մինչև որ արուն շունչը փչեց. յետոյ էզը թող տւաւ նրան, մի բաւականութիւն արտայայտող աչքերով մեզ նայեց և սուր ճանկերը կրկին միսեց արուի կոկորդի մէջ. ապա յետ քաշւելով կանգնեց ու սկսեց նայել, թէ ինչպէս արուն կրում էր իւր արժանի պատիժը...

Նատուից էլ մարդը օգուտներ ստանում է եւ լինչալիսի:

Հաւատարմութեան կողմից նա հասնում է շանը:



46. Անփորձ փիսիկը

Մայիսեան առաւօտ էր: Արևն իւր ջերմ, բայց ախորժեյի ճառագայթները սփռել էր նոր արթնացած երկրի վրայ: Առաւօտեան օդի մէջ մի զովարար թարմութիւն կար: Պարտիզի դալար ծառերից մեղմ հովիկը բերում էր անուշահոտութիւնն ու թարմութիւնը:

Ես նստած էի մեր բնակարանի սանդուխների վրայ, որ դէպի բակն էր տանում:

Մօտս պարկած էր մեր կատուն և քաղցր քնած էր: Նա դեռ ձագուկ էր, սիրուն, սպիտակ դնչով: Կարմիր բուրդը սև-սև բծերով՝ վագրի նմանութիւն էր տալիս նրան: Զգիտեմ՝ ինչո՞ւ, նա զարթնեց: Սիրուն գլխիկը բարձրացրեց, նշածև, լայն կոպերը ծոյլ-ծոյլ բաց արեց, ոտքի ելաւ, թաւամագ պոչը ոլորեց, առջևի երկու թաթիկները ձգեց ու մէջքը ուռցրեց: Որտեղից-որտեղ, մի չարածճի ճանճ սկսեց անհանգիստ պտտւել մեր քնատ փիսիկի շուրջը և սուր բզզոցով նրա գլուխը տանել: Սկզբում կատուն նրա վրայ ուշք չէր դարձնում: Բայց ճանճի անընդհատ բզզոցը վերջապէս ճանճրացրեց փիսիկին: Նա պարզեց իւր փափլիկ թաթիկը և փորձեց խփել ճանճին, բայց իզուր: Փորձեց երկրորդ, երրորդ անգամ: Դարձեալ իզուր: Ճանճը ձեռք չէր վերցնում: Կատուն մոմռաց, կատաղեց և՛ միքանի ուժեղ ոստիւններ անելով, դած թռաւ սանդուխներից դէպի բակը:

Այդ միջոցին պարտիզի կանաչ խորութիւնից դուրս նետւեցին երկու թիթեռնիկ, բամբակի նման սպիտակ: Անշան, բարձրացան և իրար հալածելով նորից իջան դէպի կատուն, միքանի անգամ նրա շուրջը պտտւեցին և յանկարծ կայծակի արագութեամբ ընկան նրա վրայ ու՛ նորից նրա մէջքին քսւելով, կարծես նրա ականջին մի բան փսփսացին ու սլացան հեռու, հեռու դէպի վեր: Սիրուն թիթեռնիկների աշխոյժ խաղիցն էր, թէ՛ նրանց նրմանւելու ցանկութիւնից, կամ թէ՛ զարնան առաւօտի թարմութիւնից, մեր կատուն յանկարծ կենդանացաւ: Մի

քանի ոստիւններ անելուց յետոյ՝ նա առաջ ցատկեց և սուր չանչերի օգնութեամբ սկսեց մազլցել շարժական սանդուխի վրայով:

Սանդուխը փայտից էր և երկար: Նա դէմ էր տւած հարեան երկյարկանի շինութեան. ծայրը հասնում էր տանիքին: Ամբողջ բարձրութիւնը կատուն մէկ անգամից չանցաւ. նա դեռ փոքր էր և թոյլ: Առաջին անգամ նա դեռ մազլցեց սանդուխի ստորին մասին, ապա միջին և վերջը հասաւ վեր, տանիքը: Ես դմայլւած նայում էի կատուի ուրախութեանը: Նա հէնց որ տեղն էր հասնում, կանգ էր առնում, աստիճանների վրայ նայ անելով յետ ու առաջ էր գնում, հոտհոտում, հանում էր իւր կարմիր լեզուն և խնամքով իւր քնքուշ թաթիկներն էր լիզում. նա ուժ էր տալիս իւր մազիկներին վեր բարձրանալու:

Նա առաջին անգամն էր բարձր սանդուխի վրայ գտնւում, առաջին անգամն էր բարձրից նայում երկրին, բարձրից տեսնում էր իւր նման արարածներին և սքանչանում, երբ իրան տեսնում էր այնքան բարձրացած: Նա առաջին անգամն էր զգում, որ բարձրում օդը աւելի մաքուր է, աւելի թարմ և քանի վեր էր բարձրանում, այնքան աւելի զգում էր իրան համարձակ, զօրեղ և ազատ:

Ահա էլի մի ոստիւն, և սիրուն փիսիկը արդէն տանիքի վրայ էր: Բայց հէնց որ տանիքի վրայ ոտք դրեց, յանկարծ լսեցի նրա անասելի սուր ճիչը: Նա լեղապատառ տանիքի եզրին կծկւեց: Ի՞նչ տեսնեմ: Միւս կողմից գոռոզաբար և ծանրաքայլ, կատաղի դէմքով մի մեծ կատու էր նրան մօտենում:

Իմ անփորձ փիսիկը զարհուրելի ձայնից բոլորովին իրան կորցրեց. պոչը հաւաքած՝ նա կարծես ներողութիւն էր խնդրում ուժեղ գազանից:

Նորից սիրտ կտրատող ձայներ լսեցի տանիքի վրայ: Իմ յուսահատ փիսիկի ձայնն էր: Նա չգիտէր, թէ ինչ անի: Ցած թռչէր — մահ էր նրա համար: Անցած ճանապարհը

յետ դառնալ — նոյնպէս անկարող էր: Մինչ տեղիցս կը-
բարձրանայի այն անիրաւ կատուին մի կերպ քշելու, յան-
կարծ նա սաստիկ մլաւոցով փխտիկիս վրայ պրծաւ և ու-
զում էր խեղճուկին գզգզել: Փխտիկս վախից քաշւեց և
յանկարծ տանիքի ահագին բարձրութիւնից ներքե գլոր-
ւեց: Միքանի անգամ օդի մէջ ոլորւելով՝ նա ամուր
զրրիկաց սալայատակին և այնտեղից էլ գլորւեց նկուղը:

Իսկոյն նկուղ վազեցի: Փոքրիկ փխտիկս յատակի վրայ
ձգւած էր անշարժ: Նրա լայնացած բիբերի մէջ սարսափ
էր երևում: Միրուն դնչիկից արիւն էր հոսում: Աչքերս
ակամայ արցունքով լցւեցին: Առայ փխտիկիս, շոյեցի,
փաղաքշեցի և խնամքս հազար անգամ կրկնապատկեցի,
որ նրանից չզրկւեմ:

Շարաթներ անցած՝ կատուիկս նոյն կայտառ, աշխոյժ
կենդանին էր: Իարձեալ բախում ցատկոտում էր, դարձեալ
նոյն փորձերն էր անում նոյն սանդուխով վեր բարձրա-
նալու: Ժամանակը ցաւի կսկիծը մոռացրել էր:

— Զգո՛յշ, — ասում էի նրան, — նորից քիթդ չարնոտեն:
Իսկ նա իւր վստահ շարժումներով կարծես ինձ պա-
տասխանում էր.

— Ոչինչ, ես այժմ աւելի վարժ եմ, փորձւած և հա-
մարձակ. ո՞վ է այն համարձակը, որք դունչը արիւնոտւած
չլինի:


Եւ նա շարունակեց իւր ճանապարհը՝ այս անգամ
աւելի վստահ, աւելի համարձակ:

47. Ընտանի ձիւն

Ձին ամենաօգտակար ընտանի կենդանիներից մէկն է:
Դ՛ւմ ասես, որ նա հարկաւոր չէ: Ձին իւր ամբողջ կեան-
քում ծառայում է մարդուն և մա՛րից յ'տոյ էլ բաւական
օգուտներ է տալիս նրան — կաշուց սանամանների համար
աւ ապրանք են պատրաստում, մա՛րից զանազան բաներ
են շինում, սմբակներից եփում և շատ բան: Իսկ կան ազ-

գեր էլ, որոնք ձիու միսը գործ են անում՝ իբրև կերակուր:

Ձին լաւ յիշողութիւն ունի: Մանաւանդ նա լաւ միտն է պահում ճանապարհը. բաւական է, որ մի անգամ անցնի որևէ ճանապարհով, — և այլևս չի մոռանալ այն: Ուստի պատահում է, որ նա շատ դէպքերում դժւարութիւ-



ԱՐԱՐԱԿԱՆ ՆԺՈՅԿ

նից հանում է մինչև անգամ և մարդուն: Նա ընտելանում է իւր տիրոջը և տարիների ընթացքում շտեմնելուց յետոյ՝ մի անգամից ճանաչում է նրան:

Ձին շատ խելացի կենդանի է: Նա հասկանում է տիրոջ հրամանները և կատարում դրանք: Ձինւորական ձիերին վարժեցնում են ուղիղ շարքով կանգնել, որոշել նշանները և կատարել, ինչ որ պահանջւում է. նրանք մինչև անգամ վարժւում են թնդանօթների և հրացանների ձայնին, այնպէս որ՝ պատերազմների ժամանակ չեն վախեցնում:

Ձիերը լինում են զանազան ցեղի, որոնք բաւական տարբերւում են միմեանցից թէ՛ իրանց ուժի, թէ՛ տոկունութեան և թէ՛ գնացքի արագութեան կողմից: Նրանց մէջ

ամենալաւերը համարուում են արարական ձիերը. այս բանը բացատրուում են նրանով, որ արարները շատ լաւ են կրթութում իրանց ձիերին, պահպանում և խնամում են նրանց, ինչպէս իրանց հարազատ զաւակներին:

Ինչ օգուտներ է տալիս ձին մարդուն.

48. Նարէկի նժոյգը

Արաբ Նարէկը մի այնպիսի հազաւագիւտ և գեղեցիկ նժոյգ ունէր, որ ամենքը նախանձում էին նրա տիրոջը: Մի արաբ ուրիշ ցեղից, անունը Դագեր, կամենում էր ձեռք բերել այդ նժոյգը: Իզուր էր նա առաջարկում Նարէկին նժոյգի փոխարէն անհամար ուղտեր և անթիւ գանձեր: Նարէկը ոչ մի կերպով չէր համաձայնուում տալ իւր սիրելի նժոյգը:

Այն ժամանակ Դագերը խորամանկութիւն բանեցրեց: Մի օր նա իւր երեսը խոտի հիւթով ներկեց, ցնցոտիներ հագաւ, վիզն ու ոտները փաթաթեց, իբրև մի ցաւազար մուրացկան, ու գնաց նստեց մեծ ճանապարհի վրայ, որով պիտի անցնէր Նարէկը: Երբ Նարէկը մօտեցաւ Դագերին, Դագերը ասաց կեղծ, նւաղած ձայնով.

— Ես մի աղքատ օտարական եմ: Երեք օր է, որ այստեղ նստած եմ ու չեմ կարողանում տեղիցս շարժել, որ գնամ, մի կտոր հաց ճարեմ: Ցաւից մեռնում եմ, օգնիր ինձ: Աստուած քո վարձքը չի մոռանայ:

Նարէկը առաջարկեց ծպտեալ աղքատին նստել իւր ձիու քամակին և միասին գնալ իրանց տուն: Բայց խաբերան պատասխանեց.

— Ես չեմ կարող ոտքի կանգնել, ուժ. չունիմ:

Գթասիրտ Նարէկը ձիուց վայր թռաւ, մօտեցրեց ձին Դագերին և մեծ դժւարութեամբ նստեցրեց նրան: Երբ Դագերը իրան թամքի վրայ զգաց, նա զարկեց նժոյգին ասպանդակներով և առաջ սլացաւ, ասելով.

—Այս ես եմ, Դազերը. ահա վերցնում եմ նժոյգդ և տանում եմ իմ տուն:

Նաբէկը յետևից կանչեց, որ գոնէ իւր մի խօսքը լսէ:

Դազերը համողած էր, որ ոչ ոք իրան չի համնի, ուստի շուռ տւեց ձիու դուռին ու կանդ առաւ, միայն թէ Նաբէկից բաւականին հեռու, որովհետև նրա ձեռքին նիզակ կար:

Եւ Նաբէկն ասաց.

—Դու խլեցիր իմ նժոյգս. եթէ այդպէս էր Ալլահի կամքը, բարի վայելես. բայց միայն մի բանի մասին եմ ես քեզ աղաչում.—խոստացիր ոչ ոքի չասել, թէ ինչ հնարով տիրացար ձիուն:

—Ինչո՞ւ,—հարցրեց Դազերը:

—Նրա համար,—շարունակեց Նաբէկը,—որ մի ուրիշ մարդ կարիքի ժամանակ կարող է օգնութիւն խնդրել, և կրկասկածեն՝ չլինի թէ խաբոււմ է: Ես կրչիսիմ այն ժամանակ պատճառ, որ մարդիկ այլ ևս միմեանց ոչ մի բարերարութիւն չեն անի, որովհետև ամենքն էլ կրվախենան ինձպէս խաբւելուց:

Դազերը, այս խօսքերից ապշած՝ մտածմունքի մէջ ընկաւ. յետոյ նա իջաւ ձիուց և ասաց.

—Ես մոլորւեցի, որովհետև նախանձը կուրացրել էր ինձ. դու ինձ ճշմարտութեան ճանապարհը ցոյց տւիր: Ներիր ինձ:

Եւ նա գրկեց Նաբէկին ու վերադարձրեց նրան նժոյգը:

Սրանից յետոյ Դազերը ճանապարհ ձգեց Նաբէկին մինչև նրա վրանը և մնաց նրա մօտ երեք օր ու եղբայրացաւ նրա հետ:

Ինչո՞ւ վերադարձրեց Դազերը ձիւն իւր տիրոջը:



49. Ուղտ

Շատերը ձեզանից տեսած կըլինին ուղտ: Ուղտերը պատկանում են որոճող կենդանիների կարգին: Իրանք՝ մեծ, բարձր սրունքներով, երկար ու ծուռ վզով կենդանիներ են. ոտքերին ունին փոքրիկ կճղակներ, իսկ մեջքին մսէ սապատ, որ լցւած է լինում ճարպով: Այդ ճարպը միևնոյն ժամանակ ծառայում է սնունդի տեղ, երբ ուղտը ստիպւած է լինում միջանի օր առանց սնունդի մնալ:



ՈՒՂՏԵՐԻ ԿԱՐԱԻԱՆՆ ԱՆԱՊԱՏՈՒՄ

Ուղտերն ապրում են Ասիայում: Անապատներում նրանք ապրանքատար նաւերի դեր են կատարում: Իրահամար էլ շատ անգամ նրանց կոչում են «անապատի նաւեր»:

Պարսկաստանում նոյնպէս ուղտ շատ կայ. տէրերը նրանց գործադրում են՝ նրանց միջոցով ապրանք փոխադրելով մի քաղաքից միւսը:

Ուղտը շատ սակաւապէտ կենդանի է—բշով բաւակաւացող:

Բաւական է իւրաքանչիւր ուղտի օրական տալ միքանի գրկանքայ հասարակ խոտ կամ դարման և մի գունդ էլ գարու ալիւրից պատրաստած հասարակ խմոր, որ աւելի ուժ և սնունդ է տալիս նրան:

Ուղտերը շատ շուտով հնազանդւում են իրանց տիրոջը, ճանաչում են իրանց պահողին և ամենայն հաճութեամբ թոյլ են տալիս, որ իրանց վրայ բեռը բարձեն կամ նստեն:

Լաւ ուղտը թանկ է գնահատւում՝ 200—400 ըւրբլի և էլ աւելի. դրանք շատ ուժեղ են լինում և կարողանում են տասնևհինգ փուլից էլ աւելի վերցնել: Իսկ հասարակ ուղտերը վեցից մինչև ութ փուլ հազիւ են վերցնում և շատ անգամ էլ ճանապարհին յոգնում են ու բեռները թափում:

Երբ ուղտը ծնում է, այնքան փոքր է լինում ուղտիկը, որ մայրը ստիպւած է լինում չոքել ու այնպէս կերակրել, որովհետև ուղտիկը շատ թոյլ է լինում և չէ կարողանում կանգնել: Իսկ միքանի շաբաթից նա արդէն կարողանում է ցատկոտել մօր շուրջը:

Հետաքրքիր է ուղտերի խաղը և կռիւր:

Երկու-երկու՝ իրար վզից, պոչից բռնած՝ վեր-վեր են ցատկոտում, չոքում, բարձրանում, պտտւում և միքանի տեսակ խաղեր են անում: Մարդ ակամայ կանգնում՝ առանց ձանձրանալու նայում է դրանց խաղին:

Կռիւր շատ սարսափելի է՝ մանաւանդ ձմեռը:

Ձմեռ ժամանակ ուղտերը երբեմն կատաղում են. այդ շատ է պատահում արու ուղտերին: Նրանք ամբողջ օրերով բռնում են, բերանից մի տեսակ թանձր լորձուկ են թափում, բլի միջից հանում են մի պարկած և մսի կտոր, որ բռնալու ժամանակ ուռցնում են և կրկին ներս են

քաշուամ: Կատաղած ժամանակ շատ անգամ տրամադիր չեն լինում բեռ վերցնելու, չեն հնազանդում իրանց տէրերին և շատ սակաւ են ուտում: Երբեմն կատաղութիւնը այն աստիճանի է հասնում, որ շատ անգամ բեռ բարձելու ժամանակ բռնում են իրանց պահողին, գցում ոտքերի տակ և կրծքով տրորում, սպանում են: Այդպիսի դէպքեր շատ են պատահել. հազիւ թակելով կարողացել են ձեռքից ազատել կիսամեռ մարդուն:

Շատ անգամ էլ կատաղած ժամանակները երկու ուղտ իրար բռնում են և աշխատում են միմեանց վայր ձգել ու սպանել: Վայն եկել ու տարել է այն խեղճ ուղտին, որ պատահամբ ընկնում է կատաղի ուղտի ձեռքը:

Տեսնել էք արդեօք, թէ ինչպէս են ուղտերին կերակրում:


Առաւօտները և երեկոները ուղտերին տանում են դուրս ջրելու. դրանց բացակայութեան ժամանակ ծառայողները պատրաստում են նրանց ուտելիքը: Պատրաստում են գարու ալիւրից խմորի գնդեր իւրաքանչիւր ուղտի համար երկուսը, յետոյ նաև խոտ կամ դարման են պատրաստում: Երբ ուղտերը վերադառնում են ջրից, ամեն բան պատրաստ են գտնում. նրանք գնում են, իրանց տեղը նստում: Բերում են այդ խմորի գնդերը և հերթով իւրաքանչիւր ուղտին տալիս: Պէտք է տեսնել, թէ ինչպէս, փոքրիկ երեխաների նման, անհանգիստ կերպով բաց են անում բերանները և ընդունում տւածը:

50. Գ ա յ Ղ

I.

Գայլն արիւնարբու կենդանի է: Նրան կարելի է գրտնել անտառներում, դաշտերում, ձորերում և քարքարոտ լեռներում: Շատ է սիրում նաև այնպիսի ճահճային տեղեր, որոնց ափերը ծածկւած են եղեգներով: Իւր որջը սովորաբար գայլը շինում է կարճիկ թփերով ծածկւած

բլուրների վրայ: Գարունն ու ամառը գայլերն առանձին-
առանձին կամ զոյգ-զոյգ են ապրում, իսկ ձմեռը հաս-
նում է թէ չէ՝ սկսում են հալաքել միասին, կազմում
են մեծ-մեծ խմբեր և այդպէս միացած ուժերով աշխա-
տում են իրանց կեանքն ապահովել և կերակուր գտնել:



Գ Ա Յ Լ

Յայտնի է, որ գայլը մսակեր կենդանի է և միշտ աշ-
խատում է ձեռք գցել վայրենի ու ընտանի կենդանիներ
և թռչուններ բռնել: Բայց պատահում է՝ որ մսեղէն կե-
րակուր օրերով նա չի տեսնում, և այդ ժամանակ գայլը
ստիպւած է լինում կերակրել ծառերի պտուղներով և
այլ բուսեղէն կերակուրով. օրինակ, նա շատ ուրախ է լի-
նում, եթէ գտնում է եգիպտացորեն, սեխ, դդում, վա-
րունգ կամ գետնախնձոր: Գիւղացիք իզուր չեն ասում,
որ գայլն ագահ և արիւնարբու կենդանի է: Երբեմն նա
անխնայ կերպով կոտորում է մի ամբողջ հօտ, չնայելով
որ կարողանում է լափել միայն մի կամ երկու ոչխար:
Բայց ագահութիւնը և սովածութիւնը կարծես թունաւո-
րում և կատաղեցնում են նրան. կատաղած գայլը մոռա-
նում է ամեն մի բան և գլուխը կորցնելով՝ դէս ու դէն է
ընկնում. այդ ժամանակ նրա համար այլ ևս չկայ եր-
կիւղ: Նոյն իսկ գիւղը կամ քաղաքը չեն կանգնեցնում
նրան, և նա աներկիւղ մտնում է փողոցները, տները...
Սոված ժամանակ նա արիւն է փնտրում և ահագին վնաս-

ներ է տալիս խեղճ գիւղացիներին: Այդ ազահուլթիւնն է պատճառը, որ գիւղացիք ատելով ատում են գայլին:

II.

Ամառ ժամանակ գայլն այնքան էլ վնասակար չէ գիւղացիների համար, որովհետեւ գրեթէ ամեն տեղ նա կարողանում է գտնել մի բան ուտելու. չէ՞ որ անտառներում, բացի զանազան մանր-մուշկ կենդանիներից, շատ է պատահում բուսեղէն կերակուր: Անտառներում, սար ու ձորերում գայլերը յարձակւում են աղւէսների և ոգնիների վրայ, բռնում են դաշտային մկներին, արձակ-համարձակ նետւում են ոչխանների և եղջերուների հօտի վրայ: Չնայած՝ որ նապաստակը շատ արագավագ ոտներ ունի, բայց դժբաղդաբար նա էլ շատ շուտ գայլի կերակուր է դառնում: Բայց պատահում է, որ գայլն այդ կենդանիներից ոչ մէկին չի տեսնում. և այդ դէպքում նա ստիպւած անխնայ կոտորում է խլէզներին, գորտերին և բզէզներին: Իսկ սատակած անասունների փտած միսը գայլն այնպէս է սիրում, որ հոգին կըտայ, միայն թէ գտնի այն տեղը, որտեղ ընկած է մեռելոտին: Գիւղացիք լաւ գիտեն գայլի այդ բնաւորութիւնը: Եթէ գիւղացու անասուններից մէկը սատկում է, նա կաշին քերթում է և մնացածը քաշ տալիս, տանում գիւղից դուրս և ընտրելով մի յարմար տեղ, գցում է գետնի վրայ և հեռւից ըստապատում է գայլերին. հէնց նոյն գիշերն և եթ գայլը մօտենում է փթած մսին: Գիւղացին, տեսնելով նրան, վայր է ձգում հրացանի դնդակով: Տաւարի վրայ գայլ երբէք չի համարձակւում մեն-մենակ յարձակել և սպասում է ընկերներին, որ միացած ուժերով գզգզեն տաւարից մէկն ու մէկին:

Չմեռ ժամանակ անտանելի է դառնում գայլերի կեանքը: Անտառը դատարկւում է կենդանիներից, որովհետեւ ամեն մէկն աշխատում է թաք կենալ մօտեցող ցըրտից և մտնում է նախօրոք պատրաստւած փոսի մէջ: Ոչ մի պտուղ չի տեսնում մերկացած անտառում և կա-

մաց-կամաց ստիպւած է լինում մօտենալ գիւղերին և քաղաքներին: Բայց աչքի առաջ ունենալով այն վտանգը, որն սպասւում է մարդկանցից, գայլերն ստիպւած են լինում խմբել և միասին մտածել կերակուր ճարելու մասին:

Հետաքրքիր է գայլերի ճանապարհորդութիւնը. — գայլերից մէկը՝ ինչպէս պարագլուխ, վազում է առաջից և նրան հետևում են միւսները, բայց այնպէս, որ ամեն մէկն աշխատում է դնել իւր ոտները առաջից վազող գայլի ոտների հետքի վրայ: Այս սովորութիւնը ցոյց է տալիս մեզ գայլերի խորամանկութիւնը. աշխատեցէք համրել, այդ հետքերին նայելով, թէ քանի գայլ է անցել: Այդ երբէք չի յաջողւիլ ձեզ: Փորձւած որսորդներն էլ հազիւ հազ են կարողանում ասել՝ մի գայլ է անցել, թէ գայլերի մի ամբողջ վոհմակ:

Այս խմբւած գայլերը մի մեծ չարիք են մարդկանց գլխին: Սոված և կատաղած, թափառում են նրանք այս ու այն կողմ և վնայ այն մարդուն, որ կրհանդիպի նրանց: Սոված գազանները նրա ոսկորներն էլ չեն թողնի, այնպէս կըլափեն:

III.

Իւր խորամանկ բնաւորութեամբ գայլը ոչնչով պակաս չէ աղւէսից:

Մեծ զգուշութեամբ նա մօտենում է իւր ընտրած զոհին և մի ակնթարթում յարձակւում է նրա վրայ, բռնում կոկորդից և խեղդում: Տեսնենք, օրինակ, թէ ինչպէս է գայլը խաբում եղջերուներին: Գայլը նկատեց թէ չէ, որ այդ գեղեցիկ եղջերուները հանդարտ նստած են անտառի մօտ գտնւող կանաչ խոտի վրայ, իսկոյն վազում, կանչում է ընկերներին և միասին վճռում են բաց չթողնել համեղ որսը: Գայլերի մի մասը վազում է առաջ, որ ճանապարհը կտրի, իսկ մնացած գայլերն յարձակւում են եղջերուների վրայ հակառակ կողմից: Եղջերուները փորձում են փախչել, բայց շուտով տեսնում են, որ երկու

կրակի մէջ տեղ են ընկել. գլուխները կորցնում են և գայ-
լերը, շրջապատելով նրանց՝ սկսում են կոտորել:

Նոյն խորամանկութիւնը մենք տեսնում ենք, երբ
գայլերը յարձակւում են ոչխարների վրայ: Լաւ գիտենա-
լով, որ շներն են ոչխարների պահապանները, գայլերն
աշխատում են նրանց մի կերպ հեռացնել ոչխարներից և
ահա տեսէք՝ ինչ են հնարում: Գայլերի մի մասը փոր-
ձում է գրգռել և դուրս կանչել շներին և վազելով նրանց
էլ քաշ տալ իրանց յետևից և հեռացնել ոչխարներից: Այդ
ժամանակ գայլերի միւս մասը յարձակւում է ոչխարնե-
րի վրայ, բռնում մէկին կամ միւսին, և թրևելով տա-
նում, լափում է:

Գայլն զգոյշ կենդանի է և այդ պատճառով նրան
դժւար է լինում ձեռք գցել: Նա երբէք դուրս չի գալ իւր
բնից, մինչև չհամոզւի, որ իրան ոչ մի վտանգ չի սպառ-
նում: Նա կասկածանքով է վերաբերւում ամեն մի պա-
րանի, ամեն մի ծակի, առհասարակ ամեն մի անծանօթ
առարկայի: Նա համոզւած է, որ աշխարհիս երեսին ոչ մի
բարեկամ չունի և որ ամենքն աշխատում են մի կերպ
վրէժ հանել նրանից, մանաւանդ գիւղացին, որի կեանքը
նա գրեթէ թունաւորել է: Եթէ գայլը հարկադրւած է լի-
նում մտնել գիւղացու բակը, երբէք չի մտնի ուղիղ դռ-
նից, այլ կաշխատի մի ճեղք կամ մի ծակ գտնել ցանկա-
պատի մէջ և նրա միջով կանցնի: Բայց ընկաւ թէ
չէ թակարդ, գայլն այլ ևս չի կարողանում մի բան հնա-
րել մահից ազատւելու համար և կուչ եկած, ահ ու դողով
սպասում է իւր դատավճռին: Այդ կողմից աղէտը շատ
աւելի սառնասիրտ է և գիտէ ամեն նեղութիւնից դուրս
պրծնել:




51. Ա. Բ. Զ

11.

Արջերը նոյնպէս մի ընտանիք են կազմում կենդանիների շարքում, և այդ ընտանիքն ունի բազմաթիւ տեսակներ: Սովորական արջը, որ յաճախ պատահում է մեր երկրում, — դա մոխրագոյն արջն է, որ միշտ սովորութիւն ունի իւր բունը հաստատելու խիտ անտառներում: Պատահում են նոյնպէս արջեր, որոնք սիրում են աւելի խոնաւ տեղեր, գետի և ծովի ափ և մանաւանդ ճահճային տեղեր:

Գիւղացիք հեշտութեամբ են գտնում արջի բունը, լաւ գիտենալով, որ նա սովորութիւն ունի գետինը փորել,



Ա. Բ. Զ

մտնել նրա մէջ և վերևից ծածկել ծառի շորացած տերևներով:

Արջերի մեծ մասը սիրում է մեն-մենակ ապրել և շատ քիչ են այն տեսակ արջերը, որոնք երամակով են կեանք վարում:

Օրը ցերեկով արջերը խոր քնի մէջ են անցկացնում և արևը մայր մտնելուց յետոյ թողնում են իրանց բունը և գնում որսի:

Գիտնականներն ասում են մեզ, որ բաւական է զննել այս կամ այն գազանի ատամները, և մարդս իսկոյն և եթ կրկարողանայ որոշել, թէ այդ գազանը մսակեր, խոտա-

կեր կամ ամենակեր կենդանի է: Արջի ատամներն այնպէս են կազմւած, որ նա կարող է ուտել ամեն բան, բայց արջը գրեթէ միշտ բաւականանում է բուսեղէն կերակուրներով, որ մեծ քանակութեամբ նա կարողանում է զրտնել անտառներում: Ծառերի կոկոնները, պտուղները, արմատները, նոյն իսկ հացաբոյսերի հատիկները համեղ կերակուր են արջի համար:

Ծայրայեղ դէպքում սոված արջը նոյն իսկ յարձակւում է տաւարի և մարդու վրայ: Մարդը միշտ վախենում է արջից, որովհետև գազանը կարող է զայրացած լինել և սոված և այդ ժամանակ նա չափազանց վտանգաւոր է: Թէ ինչ ուժ ունի այդ գազանը, բաւական է ասել՝ որ նա կարողանում է մեծ տարածութեան վրայ գնդակի արագութեամբ փախցնել իւր ձագին:

Իուր պէտք է գիտենաք, որ կենդանիների մի մասը սովորութիւն ունի ձմեռը քնի մէջ անցկացնել: Ամիսներով նրանք քնած են մնում, ոչ մի կերակուր չեն ընդունում և՛ օրերը տաքացան թէ չէ, գազանները զարթնում են և նորից շարունակում իրանց կեանքը: Արջն այդ տեսակ կենդանիներից է և ձմեռը հասաւ թէ չէ, նա մտնում է նախօրօք պատրաստւած որջը և մնում է այնտեղ մինչև գարուն:

Արջը արիւնարբու կենդանի չէ, ինչպէս գայլը և ոչ էլ խորամանկ կամ հնարագէտ, ինչպէս աղւեսը: Երբէք նա ժամերով չի սպասիլ իւր որսին՝ մի տեղ թաք կացած և չի աշխատիլ յետևից յարձակել և նոյն իսկ ճարպիկ կերպով խաբել:

Արջը իւր արտաքինով և շարժւածքներով ազնիւ և վստահելի կենդանի է և ներշնչում է մեզ աւելի շուտ մտերմութիւն: Նա առհասարակ հրաժարւում է կերակրել որևէ կենդանու լէշով, մանաւանդ արջի լէշով: Երբէք սովորութիւն չունի գիւղերից փախցնել մանուկներին, ընդհակառակը՝ արջը աշխատում է չհեռանալ իւր սիրած խիտ անտառներից, բաւականանալով այնտեղ գտնւող կերակուրով: Միայն վտանգի առաջ այդ գազանը մոռանում է

իւր բարի յատկութիւնները և սկսում բարկանալ ու կատաղել: Ինքն իրան արջը երբէք չի յարձակել մարդու վրայ, մինչև որ մարդը մի որևէ առիթ չտայ յարձակելու: Այնուամենայնիւ չպէտք է բոլորովին վատահանալ նրան:

Աւելի շուտ կարելի է ասել, որ արջը վախկոտ կենդանի է և կասկածանքով է վերաբերւում ամեն մի շուրջը կատարւած շփոթութեան և անմիջապէս փախչում է հեռու, եթէ զգում է մի որևէ կասկածելի բան:

Յաճախ պատահում է, որ գիւղացիք գնում են անտառ պտուղներ հաւաքելու և ճանապարհին հանդիպում են արջին: Այդ հանդիպումը մեծ մասամբ վերջանում է խաղաղ և բարեկամական կերպով—արջը հանգիստ շարունակում է իւր ճանապարհը: Բայց տեսնելով, որ գիւղացիք մի շար մտքով են եկել անտառ և ուղում են մի կերպ ձեռք գցել իրան, մանաւանդ որ նրանք որսորդական շներ են առաջ գցել, արջի այդ ոխերիմ թշնամիներին, այդ դէպքում նա արձակ-համարձակ առաջ է քայլում թշնամիների վրայ և յարձակում գործում: Վայ գիւղացուն, եթէ չկարողացաւ մի կերպ սպանել կամ մահացու վէրք հասցնել զայրացած արջին: Արջը առջևի թաթերով գետին է փռում որսորդին և յետոյ իւր սուր և ուժեղ ճանկերով սկսում է կտոր-կտոր անել խեղճին: Սակայն այդպիսի դէպքեր շատ չեն լինում արջի կեանքում, և իւր սուր ճանկերը նա գործ է ածում աւելի յաճախ գետինը փորելու համար, որ այնտեղ մրջիւնների բունը գտնի: Մրջիւններն ու նրանց թրթուներն արջի սիրած կերակուրն են: Իսկ մեղր նա այնպէս է սիրում, որ հոգին կըտայ՝ միայն թէ գտնի մեղրաճանճերի փեթակներ և այնպէս լաւ է ուսումնասիրել, որ ուղղակի կարող է իմանալ՝ թէ ո՞ր փեթակի մէջ աւելի մեղր կայ:

Սրանից միքանի ժամանակ առաջ արջը մի տեղ 100-ի չափ փեթակ էր գողացել և բոլոր մեղրը կերել: Գիւղացիք մտածեցին մի կերպ ազատել այդ անամօթ հիւրից և սկսեցին փեթակները սարքել ծառերի վրայ: Բայդ այդ

էլ շօգնեց, որովհետև արջը հեշտութեամբ բարձրանում էր ծառերի վրայ և դատարկում փեթակները: Իսկ եթէ ծառը բարակ էր լինում, արջը կռացնում էր այդ ծառը և ջարդում փեթակը: Տեսնելով՝ որ այդ չէ՛ օգնում, գիւղացիք սկսեցին ուրիշ միջոցներ հնարել. օրինակ՝ նրանք սկսեցին կտրատել ծառերի ստորին ճիւղերը, փշոտ ցանկապատ քաշել ծառի շուրջը, բայց և այնպէս արջը, երբ ուզում էր հասնել փեթակին, ճարպիկութեամբ քանդում էր այդ ծակող ցանկապատը:

Մեղրաճանճերն էլ մի որոշ օգնութիւն են հասցնում գիւղացուն, կծելով անշնորհք արջին անխնայ կերպով: Ինչ ծիծաղելի պատկեր է, երբ նայում ես, ինչպէս այդ գազանը ճանճերի անտանելի խայթոցներից փրկւելու համար սկսում է գետնի վրայ դէս ու դէն թաւալել կամ թաթերով ուժեղ հարւածներ հասցնել իւր երեսին նստած մեղրաճանճերին: Եթէ հարւածներն էլ չեն օգնում, զայրացած արջը սկսում է փախչել առանց յետ նայելու, բայց մի կարճ ժամանակից յետոյ նորից վերադառնում է փեթակների մօտ, և նորից սկսում է այդ կռիւր: Վերջ ի վերջոյ արջին յաջողւում է կամ փախցնել փեթակը, կամ բաւականանալ մեղրի գոնէ չնչին մասով:

Արջը սիրում է նաև երբեմն յարձակւել եղջերուների վրայ: Այդ նպատակով մտնում է մի փոսի մէջ և ծածկւում է տերևներով: Այդ դրութեան մէջ նա սպասում է եղջերուներին, որոնք անզգուշութեամբ մօտենում, ընկնեն փոսը և անմիջապէս նրա գոհը դառնում:

Կան մի տեսակ մոխրագոյն արջեր, որոնք աւելի մսակեր են. դրանք չեն բաւականանում նոր սպանւած անասուններով, այլ սովորութիւն ունին գետնից փորելու թաղած կենդանիների լէշեր:

Բ.

Բացի մոխրագոյն արջերից աշխարհիս երեսին ապրում են և սպիտակ արջեր: Այդ կենդանիների բնակավայ-

ըր ցուրտ երկրներն են, ինչպէս են Հիւսիսային Ովկիանոսը և հիւսիսային ծովեզրները:

Արջի սպիտակ գոյնը կարծես դիտմամբ նմանութիւն ունի այդ կողմերի բնութեան հետ, որն ամբողջապէս սպիտակագոյն է. ձիւնն ու սառոյցը պատում է այդ ամբողջ տարածութիւնը: Ընտրելով այդ ցուրտ տեղերը բնակութեան տեղ, սպիտակ արջն, իհարկէ, սնունդի մասին էլ պէտք է մտածէր: Այդտեղ նա երբէք չի գտնիլ մի հատ բոյս, որի պտուղներով նա կարողանար իւր ստամոքսին բաւարարութիւն տալ: Այդտեղ միայն կարելի է գտնել ձկներ, ծովացուլեր և փոկեր:


Ուրեմն սրտեղից արջը կարող էր գտնել իւր կերակուրը, եթէ ոչ ծովի միջից, որ լիքն է ձկներով, ծովացուլերով և այլ ծովային կենդանիներով. իսկ դրա համար հարկաւոր է լաւ լող տալ ջրի մէջ, ճարպիկ լինել և չվախենալ սառնամանիքից: Բոլոր այդ յատկութիւնները մենք կարող ենք տեսնել սպիտակ արջի մէջ: Նա շատ գեր է և այդ գիրութիւնն օգնում է նրան մի կողմից հաւասարակշռութիւն պահպանելու, իսկ միւս կողմից՝ պահում է ցրտից: Ջրի մէջ նա կարող է ազատ հեռանալ մեծ տարածութեան վրայ ծովի ափից, իսկ եթէ ճանապարհին գտնում է սառցային դաշտեր և սարեր, նա բարձրանում է սառոյցի վրայ և հանդարտ շարունակում ճանապարհորդութիւնը: Ջրի մէջ լողալով նա հետևում է ձկներին և ծովացուլերին, բռնում, լափում է նրանց:

Պատմում են նոյնպէս, ինչպէս այդ սպիտակ արջերը մի անգամ նաւակ են խլել ձկնորսներից և նստելով նրա մէջ՝ քշել են նրան առաջ, նաւատորմի փորձաւոր զինւորների պէս:

52. Առիւծ եւ վագր

Առիւծը իւր զարհուրելի ոյժի և վսեմ տեսքի համար զազանների թագաւոր է կոչւում: Նրա ոյժը ցոյց տալու համար բաւական է ասել, որ նա երկու տարեկան եզր բերանն առած՝ կարող է ցատկել մի սաժենաչափ պարսպի

վրայով: Առիւծի տեսքին աւելի գեղեցկութիւն է տալիս նրա ջքեղ բաշը, որ ծածկում է կենդանու պարանոցն ու կուրծքը: Էգ առիւծը բաշ չունի: Առիւծի զարհուրելի մոնչիւնը սարսափ է ազդում բոլոր թէ մեծ և թէ փոքր կենդանիներին. այդ մոնչիւնը լսելով՝ բեռնաւորւած ուղտը վայր է թափում վրայից թէ բեռը և թէ տիրոջը և




ԱՌԻԻԾ

սարսափահար փախչում. ձին կատաղութեամբ ծառս է լինում յետին ոտների վրայ, մեծամեծ շները կաղկանձումով շտապում են իրանց տէրերի մօտ պաշտպանութիւն գտնելու...

Առիւծը մօտ մի սաժեն երկարութիւն և մի արշինից աւելի բարձրութիւն ունի. մարմինը ծածկւած է կարճ, կոկիկ, դեղնագոյն մազերով. համարեան նոյն գոյնին է լինում նաև նրա երկար, թաւամազ բաշը: Ազին երկար է, ծայրը փնջամազ: Առիւծը կերակրւում է խոտակեր կենդանիներով, որոնց վրայ սովորաբար գիշերն է յարձակւում: Կուշտ առիւծը, եթէ նրան չզայրացնեն, չի դիպչում ո՛չ մարդկանց և ո՛չ կենդանիներին: Առիւծի որսը շատ վտանգաւոր է, որովհետև նա փախուստ տալու սովորութիւն չունի և վերաւորւած կենդանին անշուշտ կը յարձակւի որսորդի վրայ:

Շատ փոքր հասակում բռնած առիւծին կարելի է ընտելացնել, սակայն ձեռնասուեն առիւծն ևս վտանգաւոր է: Մի նշանաւոր ֆրանսիացի որսորդ առիւծի կորիւնին մեծացրեց այծի կաթնով: Հինգ ամսական դարձած կորիւնը պատառոտեց իւր ստնտուին: Երկու տարեկան հասակում, մի անգամ շղթան կտրելով՝ նա սպանեց մի ձի և մի մարդու էլ վիրաւորեց: Իւր տիրոջը նա չափազանց սիրում էր և անպայման հնազանդւում նրան: Սակայն մի անգամ, նրա հետ խաղալիս՝ առիւծը քիչ մնաց խեղդէր իւր ուժեղ թաթերի մէջ: Տարիներ անցած՝ այդ առիւծը գազանանոց ընկաւ: Եւ երբ միքանի տարի յետոյ որսորդն այցելեց այդ գազանանոցը, առիւծը ճանաչեց իւր նախկին տիրոջը. այդ օրից նա նրա կարօտն էր քաջում և մի ամիս չանցած՝ վշտից սատակեց:



ԱՐԲԱՅԱԿԱՆ ՎԱԳՐ

Վագրն առիւծից աւելի վտանգաւոր է մանաւանդ նրանով, որ իւր որսի վրայ յարձակւում է ոչ թէ յայտնապէս, ինչպէս առիւծը, այլ կատուի նման՝ թազնւելով ու գաղտագողի: Վագրը մեծութեամբ պակաս չէ առիւծից: Նրա մարմինը ծածկւած է գեղեցիկ մազերով, որոնք դեղին գոյն ունին՝ սև շերտերով:

53. Երախտագետ առիւծը

Մի անգամ հռովմայեցի իշխաններից մէկի ծառան՝ Անդրոկլէս անուկով՝ մի մեծ յանցանք գործեց և պատժից



ազատելու համար փախաւ Աֆրիկա և թագնրեց մի քարանձաւում: Քիչ ժամանակ յետոյ նոյն քարանձաւը մտաւ և մի ահուկի առիւծ. խեղճ Անդրոկլէսը սարսափից քարացաւ: Առիւծը, տեսնելով նրան, կամացուկ մօտեցաւ և իւր ահագին թաթը դրեց նրա գիրկը: Անդրոկլէսն իսկոյն հասկացաւ, թէ բանն

ինչումն է. ուշադրութեամբ զննելով թաթը, նա տեսաւ, որ մի մեծ փուշ է խրել նրա մատների արանքը և զգուշութեամբ դուրս քաշեց այն: Առիւծը թեթևութիւն զգալով, սկսեց լիզել նրա ձեռքերը և ապա թողեց, կաղալով հեռացաւ դէպի անտառի խորքը:


Ժամանակ անցաւ: Անդրոկլէսը բռնեց և մահւան դատապարտեց: Այն ժամանակները Հռոմում այդպիսիներին ձգում էին կրկէսի գազանների առաջ: Պատժի օրը մեծ բազմութիւն էր հաւաքել կրկէսը, որի հրապարակում արդէն ման էին գալիս երկու քաղցած առիւծ, որոնք նոր էին բերւած Աֆրիկայից կրկէսի համար: Եւ ահա յանցաւորին ձգեցին առիւծների առաջ: Նրանցից մէկն արդէն պատրաստուում էր մի ցատկով յարձակել Անդրոկլէսի վրայ, երբ միւսն իսկոյն ճանաչեց իւր բարերարին և մօտենալով նրան, սկսեց լիզել ձեռները... Ապա նա այնպիսի բարկութեամբ մռնչաց միւսի վրայ, որ սայետ քաշեց և մտաւ վանդակը:

Բոլորն էլ զգացեցան: Անդրոկլէսին ներեցին և ար-

ձակեցին կրկէսից. նրա հետ բաց թողին նաև առիւծին, որն այնուհետև իւր բարերարի մօտ էր ապրում: Հոովմի բնակիչները, նրանց հանդիպելիս, ծաղիկներ էին թափում առիւծի գլխին, իսկ Անդրոկլէսին ապրելու միջոցներ էին տալիս:

54. Կ ե տ

Թէպէտ կէտը իւր տեսքով ձկան նման է, սակայն նա ձուկ չէ, այլ ծովային գազան: Իւր մեծութեամբ նա գերազանցում է աշխարհիս բոլոր կենդանիներին. կան կե-



Կ Ե Տ


տեր, որոնց երկարութիւնը հասնում է մինչև 10 սաժե-
նի, իսկ քաշը մինչև 7 հազար փթի: Ոտների տեղ նա ունի
երկու ձկան լողնակներ, իսկ յետին կողմից ձկան պոչի
նման մի պոչ: Կետի գլուխը բռնում է մարմնի մի երրորդ
մասը, իսկ բերանն այնքան լայն է, որ նրա մէջ ազատ
կարող է տեղաւորւել մարդկանցով լիքը մի մակոյկ:
Կետն ատամ չունի, այլ նրանց փոխարէն բերանում կան
երկար եղջերային թերթեր: Աչքերն ու ատամները համե-
մատաբար փոքր են. գլխի վերին մասում գտնւում է նրա
շնչառիկը, որի օգնութեամբ կետը շնչում է: Դուրս գա-

լով ջրի երեսը, նա նախ շնչառիկի միջով ջրի փոքրիկ
ցայտեր է բաց թողնում և յետոյ օդ հաւաքում. դրանից
յետոյ նա կարող է մի քառորդ ժամու չափ ջրի տակը
մնալ:

Կետը. գլխաւորապէս բնակւում է հիւսիսային ցուրտ
ծովերում: Նրա ճարպը և բերանի եղջերային թերթերը
շատ թանգ են դնահատւում, ուստի և նրա որսալու հա-
մար բազմաթիւ նաւեր են ուղևորւում: Որսորդները մա-
կոյկներով մօտենում են այդ ամեհի կենդանուն և երկա-
թէ սրածայր ձողեր խրում նրա մարմնի մէջ այնքան,
մինչև որ նա արիւնաքամ լինելով, անշունչ դուրս է լո-
ղում ջրի երեսը: Կետի որսը շատ վտանգաւոր է, որովհե-
տև նա իւր պոչի մի հարւածով կարող է խորտակել մակոյ-
կը՝ մարդկանց հետ միասին:

55. Փիղ

Փիղը ցամաքային կենդանիներից ամենամեծը և ամե-
նաերկարակեացն է: Նա ապրում է երկուհարիւր տարուց



աւելի: Նրա մարմինը մօտաւորապէս երկու սաժեն եր-
կարութիւն ունի: Փղերն ունենում են երկար և չափա-

զանց շարժուն կնճիթ, որի ծայրին մատնանման մի աւել-
լամիս կայ: Կնճիթը փղի համար նոյնն է, ինչ որ ձեռքը
մարդու համար: Նրանով փիղը վեր է առնում կերակուրը
և տանում իւր բերանը: Կնճիթով նա ճանապարհ է բաց



Փ Ի Դ.

անում անտառում, կոտրատելով և արմատախիլ անելով
ամբողջ ծառեր. նրանով էլ փիղը պաշտպանւում է թշնա-
միների՝ յարձակումից: Փղի ատամները շատ մեծ-մեծ են.
Նրանցից երկուսը դուրս են ցլած բերանից:

Չնայելով իւր զարհուրելի ոյժին, փիղը շատ հեղ,
խաղաղասէր և զգոյշ կենդանի է. շատ անգամ մի ամենա-
հասարակ աղմուկից կամ կասկածելի շշուկից փղերի մի
ամբողջ՝ երամ սարսափահար փախչում է: Սակայն բար-
կացած ժամանակ նա զարհուրելի է և չափազանց վտան-
գաւոր: Փղերին սպանում են նրա ատամները ձեռք բերե-
լու համար, որոնք յայտնի են փղոսկր անունով և շատ
թանգ են գնահատւում: Փղոսկրից մարդիկ զանազան

մանր-մուկնր բաներ են շինուամ: Տաք երկիրների բնակիչ-
ները փղերին որսում են նաև բնտանի դարձնելու համար.
նրանց սովորեցնում են զանազան աշխատանքներ կատա-
րել և ծանրութիւններ կրել: Ընտանեցրած փղերով ճա-
նապարհորդելիս՝ մարդիկ նստում են կամ ուղղակի նրանց
մէջքին և կամ նրանց վրայ շինած առանձին վրաններում:
Փղին կառավարում են սուր մուրճով, որով խփում են
նրա գլխին, որ առաջ գնայ:

56. Աղաւնիներ

Ես կանգնած էի սեպացած բլուրի վրայ, իսկ իմ առ-
ջև սփռած էր հաճարի հասունացած արտը. նա երբեմն
ծածանւում էր ոսկեայ գոյնով, երբեմն տարածւում էր
արծաթեայ ծովի նման և պսպղին էր տալիս:

Բայց ալիքները բնաւ չէին օրօրւում այդ ծովի վրայ,
խեղդող օդի անշարժութիւնը գուշակում էր մի մեծ փո-
թորիկ:

Իմ շուրջն արեգակը դեռ ևս լուսաւորում էր իւր
ջերմ և աղօտ լուսով, իսկ այնտեղ, հաճարի արտի միւս
կողմում, ոչ այնքան հեռու, մուգ կապտագոյն մառա-
խուղն ահագին կուտակութեամբ բռնել էր երկնակամարի
ամբողջ կէսը:

Ամեն ինչ լուութեան մէջ էր... ամեն ինչ հառաչում
էր արեգակի վերջին ճառագայթների փայլման ներքոյ:
Չէր լսւում, չէր երևում ոչ մի թռչուն. թագնւած էին
մինչև անգամ ճնճողուկները: Միայն մի ինչ-որ տեղ, մեր-
ձակայքում, մենաւոր ջրածաղկի խոշոր տերևները յամառ
կերպով շնչում էին և թափահարւում:

Ինչպէս սաստիկ բուրում էին դաշտերի խոտաբոյսե-
րը: Ես նայում էի կապտագոյն ամպակոյտի վրայ...
մռայլը տիրում էր իմ սրտում: Դէհ, շուտով, շուտով,
մտածում էի ես, փայլատակիր, ոսկեղէն օձ, դղրդացիլը,
որոտ, շարժւիլը, գլորւիլը, հեղեղւիլը, ո՛վ չար մառախուղ,

վերջ տուր այդ տխուր հեծութեան:

Բայց մառախուղն անշարժ էր: Նա առաջւայ նման ճնշում էր անմռունչ երկիրը... միայն կարծես թէ աւելի ուռչում էր և մթնանում:

Եւ ահա նրա միագոյն կապուտակութեան վրայ նըշմարեց մի ինչ-որ բան, որ սլանում էր հարթ-հաւասար կերպով. կարծես թէ իսկ և իսկ մի սպիտակ թաշկինակ լինէր կամ ձիւնի պատառ: Դա մի սպիտակ աղաւնի էր, որ թռչում էր գիւղի կողմից: Թռչում էր, թռչում միշտ միևնոյն ուղիղ գծով... և խորասուզեց անտառի յետևում:

Անցաւ միքանի վայրկեան,—դեռ տիրում էր միևնոյն խիստ լուսթիւնը: Բայց նայիր: Այժմ նշմարւում են երկու թաշկինակներ, ձիւնի երկու պատառներ յետ են սլանում. դրանք երկու սպիտակ աղաւնիներ են, որ թռչում են դէպի տուն հաւասար թռիչքով:

Եւ ահա վերջապէս պայթեց փոթորիկը և սկսեց բնութեան կատաղի խաղը:

Ես հագիւ կարողացայ փախչել մինչև տուն: Քամին մռնչում, սոսկալի կերպով պտտւում էր: Պատառ-պատառ եղած շիկագոյն ամպերը ներքևից առաջ էին մղւում: Ամեն ինչ տակն ու վրայ էր լինում, խառնաշփոթութեան մէջ էր, դղրդում էր: Անձրևի սարսափելի տարափը ջրային սիւների նման ցած էր թափւում: Կայծակների հրեղէն կանաչագոյն փայլատակումը աչք էր կուրացնում: Սաստիկ բոմբիւնը կարծես թէ թնդանօթներից էր արձակւում: Փչում էր ծծմբային հոտ:

Բայց կտուրի ծածկի տակ, երդիկի կողքին, միմեանց մօտ նստած են երկու սպիտակ աղաւնիներ,—և՛ այն, որը թռչում էր իւր վարուժանի յետևից, և՛ այն, որին բերաւ նա և գուցէ ազատեց մահից:

Երկուսն էլ գուրգուրում. էին միմեանց,—և իւրաքանչիւրը շօշափում էր իւր թևիկով դրացու թևը...

Երջանիկ էին նրանք: Եւ ես ինձ երջանիկ էի զգում նրանց վրայ նայելով:

57. Թուխարկան

Ամառ էր: Փոքրիկ Անահիտը կալուսն էր: Նա դէզի ստւերում շինել էր մի փոքրիկ տուն և տիկիներին մէջը հաւաքած՝ խաղում էր: Մայրն ուղարկել էր նրան, որ դէզը պահպանէ հաւերի քըրքելուց: Անահիտիցն մօտիկ կրրկուում էր նրանց թուխարկանը: Նա փախցրել էր մի հասկ, կտցահարում էր և թափւող դեղին ցորենի հատիկները բաժանում էր իւր ձագուկներին:

Թուխարկանն յանկարծ մի սարսափելի ճիչ արձակեց և թևերը լայն բացեց: Անահիտը ոչինչ չէր հասկանում. բայց փոքրիկ ձագուկները մօր արածը շատ լաւ հասկացան, որովհետև, լսելով մօր ձայնը՝ մի փոքր հեռու եղողները հաւաքւեցին և մտան մօր բացած թևերի տակ: Անահիտն ուշադրութեամբ նայում էր՝ առանց մի բան հասկանալու:

Բայց Անահիտը շուտով իմացաւ, թէ թուխարկանն ինչու հաւաքեց իւր ձագուկներին թևերի տակը: Ահա պտտւում էր նրազլխին մի ուրուր: Նա յարձակեց հաւի վրայ, կամենում է նրա ձագուկները յափշտակել. մայրը չի թողնում: Հաւը կռւում է ուրուրի հետ իւր թոյլ կրտցով: Բայց նա յոգնել է արդէն երկար կռւելուց:

Անահիտն էլ երկար չնայեց, վազեց թուխարկանին օգնութեան: Ուրուրը, տեսնելով Անահիտին, իսկոյն փախաւ և մայրն ու իւր ձագուկներն ազատւեցին ուրուրի ճանկերից:

Անահիտն աքաղաղակռիւններ շատ էր տեսած, բայց երբէք չէր տեսել, որ մի հաւ կռւէր մի ուրիշ թռչունի հետ, մի վախկոտ հաւ կռւէր մի զօրեղ ուրուրի հետ:

Անահիտն իսկոյն վազեց տուն և մօրը պատմեց իւր տեսածը:

—Հապա ինչո՞ւ ես ասում ինձ «վախկոտ հաւ ես», մայրիկ,—ասաց Անահիտը,—հաւը միթէ վախկոտ է: Ես տեսայ, ինչպէս բաջութեամբ կռւում էր մեր թուխարկանը ուրուրի հետ:

—Հաւերը վախկոտ են, — պատասխանեց նրա մայրը, —
բայց ոչ այն ժամանակ, երբ նրանք թուխս են լինում
նստած: Թուխսը կանը մայր է, իսկ մայրը վախ չգիտէ:
Ասուած նրան ձագեր է տւել, նրանց բաժին սէրն ու գո-
րութիւնն էլ հետն է տւել մօրը, որ նրանց սիրէ, պահէ
ու մեծացնէ: Մի մայր, որքան որդի որ ունի, այնքան
անգամ աւելի է նրա սէրն ու գօրութիւնը: Մեր թուխսը-
կանը տասներկու ձագուկ ունի: Նրա ոյժն ու սէրն էլ
տասներկու հաւի ոյժի ու սիրոյ չափ է:

58. Ծիծեռնակների չուն

«Վայն եկել է տարել թռչուններին», — այսպէս են
ասում մարդիկ, երբ սկսում է ձմեռը: Եւ իրաւի, շատ
վատ է նրանց բանը. բազմաթիւ թռչուններ սաստիկ
ցրտի և սառնամանիքի ժամանակ սառչում են: Բացի
դրանից նրանք կոտորւում են և քաղցից: Ո՞րտեղից ճա-
րեն կերակուր, քանի որ գետինը ծածկւած է լինում ձիւ-
նի հաստ շերտով: Պատահում են, ճիշտ է՝ բարի մարդիկ,
որ նրանց առաջ հացի փշրանքներ են դրում, և անտառ-
ներում թփերի վրայ դեռ ևս լինում են սառած պտուղ-
ներ: Բայց չէ՞ որ բոլոր թռչունները բուսեղէնով չեն կե-
րակրւում. կան և շատ այնպիսիներ, որ ամբողջ ամառ-
ւայ ընթացքում ամիսներ շարունակ կերակրւում են մի-
միայն միջատներով: Ի՞նչ է սպասում այդ թռչուններին
ձմեռը: Ո՞չ մի մոծակ, ո՞չ մի որդ նրանք չեն գտնի:

Այդ տեսակ թռչունների թւին պատկանում են վայ-
րի ծիծեռնակները և նրանց ազգականները — ջրածիծառն
և ընտանի ծիծառը: Ամառնային երկար օրերին յաճախ
կրտեսնէք՝ ինչպէս նրանք նագելի կերպով զանազան ուղ-
ղութեամբ կտրում, անցնում են օդը, հետամուտ լինելով
միջատներին, որոնց որսում են թռչելիս:

Ահա այդ պատճառով սեպտեմբեր ամսում, հէնց որ
սկսւում են աշնանային ցրտերը, նրանց մեծամասնու-

Թիւնը թողնում է մեր կողմերը և չլուծ մինչև դարուծ: Եթէ տաք և մեղմ եղանակ է, նրանցից շատերը ուշանում են և աւելի երկար են մնում մեզ մօտ:

Հետաքրքրական տեսարան են ներկայացնում ծիծեռնակները իրանց այդ հեռաւոր ճանապարհորդութեանը պատրաստելիս: Հաւաքւում են նրանք, մեծ երամներ կազմում, ընտրելով իրանց համար մի որ և է բարձր շինութեան կտուր կամ եկեղեցու գմբէթ: Սկզբից թւով քիչ են լինում, բայց օր օրի վրայ թռչում, հաւաքւում են աւելի և աւելի շատ թռչուններ և վերջ ի վերջոյ շինութեան կտուրը կատարելապէս սեին է տալիս:

Վերջապէս ծիծեռնակները հարիւրներով բարձրանում են օդը և թռչում են այնքան խտացած, որ կազմում են մի խիտ խումբ: Դրանցից շատերը այլևս յետ չեն դառնում, որովհետև չլելը դժւար և վտանգաւոր գործ է: Ոմանք սաստիկ յոգնում են երկար թռչելուց և ուժասպառ լինում, միւսները կոտորւում են կերակուր չգտնելու պատճառով, — ճանապարհին կերակուրը դժւար է ճարւում: Քիչ չեն կոտորւում այդ անպաշտպան թռչունները և զանազան գիշատիչ թռչուններից, ինչպէս, օրինակ, բազէներից և ագռաւներից: Այդ բոլոր դժւարութիւններից և վտանգներից թեւաւոր ճանապարհորդների թռուցիկ շարքերը սաստիկ նօսրանում են: Յաջորդ տարին հաւանօրէն յետ կրգան կէսից քիչ այն թռչուններից, որոնք լի ուժով և առողջութեամբ աշնանը չլել են մեր կողմերից:

Ծիծեռնակները չլելու ժամանակ նստում են հանգստանալու նաւերի և փարոսների վրայ: Երբեմն նրանք այնքան յոգնում են երկարատև թռչելուց, որ կարելի է նրանց նոյն իսկ ձեռքով բռնել: Միքանիսը երկար-երկար պտտւում են փարոսի ճրագների շուրջը, թիթեռնիկների պէս, խփում են ապակիներին և կոտորւում: Ցաւալի է մանաւանդ նայել, ինչպէս հարիւրաւոր խեղճ, փոքրիկ թռչուններ անշնչացած լողում են ծովի անողոք ալիքների

երեսին: Նրանք յոգնածութիւնից չեն կարողացել շարունակել ճանապարհը և նւաղելով՝ ընկել են ջուրը:

Չարմանալի խելքի տէր են այդ փոքրիկ արարածները: Երբէք չշեղելով ճանապարհից, նրանք թռչում են հարիւրաւոր վերստեր սարերի, ծովերի վրայով և հասնում իրանց ճանապարհորդութեան նպատակին: Պակաս զարմանալի չէ և այն, որ նրանք յետ են դառնում միշտ նըշանակած ժամանակին: Միքանի տեղերում նրանք երևում են ամենայն տարի ապրիլի 6—7-ին: Վերադառնալով գտնում են իրանց հին բները և իսկոյն սկսում են նորոգել փշացած տեղերը, որոնք խանգարւել են ձմեռայ քամիներից և գող ճնճողուկից, որ բնակւել է այնտեղ՝ ծիծեռնակների շւելուց յետոյ:

Երբեմն այդ փոքրիկ, ցելից շինւած բներին տիրանալու համար սարսափելի կռիւ է ծագում հին և նոր տէրերի մէջ: Բները շինել են, իհարկէ, ծիծեռնակները, բայց ճնճողուկներն էլ սակաւ չեն աշխատել դրանց վրայ: Նրանք քաղել, բերել են խոտ և դարման, որ այժմ բնի մուտքից դուրս է ցցւել ամեն կողմ: Անցքը զգալի կերպով մեծացրած է, ծիծեռնակի համար շատ լայն է:

Բացի դրանից, ապրելով բնի մէջ մի ամբողջ ձմեռ՝ ճնճողուկները ընտելացել են և նրանց համար ցաւալի է բաժանւել տաք, փոքրիկ բնակարանից, որտեղ այնքան լաւ էր իրանց ձագուկների համար... Բայց վերջ ի վերջոյ ծիծեռնակները յաղթում են և դուրս վռնդում ճնճողուկներին, որոնք ստիպւած են լինում փնտրել բնակութեան նոր տեղեր և նոր բներ շինել իրանց համար:

Խոնաւ եղանակներին մանաւանդ ծիծեռնակները աւելի եռանդով են աշխատում հին բները վերանորոգելու և նորերը շինելու: Շինութեան համար նրանք ցելիւր վերցնում են ճանապարհներից, կրելով իրանց ծուռ և փոքրիկ կտցիկներով: Յելիւր խառնւելով բերանի կպչուն լորձոնքի հետ՝ արագութեամբ պնդանում է օդի մէջ:

Ծիծեռնակը շատ բարակ և փոքրիկ ոտներ ունի. նա

սակաւ է նստում գետնի վրայ, որովհետև դժարութեամբ է կարողանում նորից վեր թռչել:

Էգը ածում է հինգ կամ վեց փոքրիկ սպիտակ ձւեր՝ ծածկւած կարմիր բծերով: Ձւերի վրայ նստած միջոցին որձը նրա համար կերակուր է բերում: Բայց թռչունների համար ամենամեծ հոգսերի ժամանակը սկսւում է, երբ ձւերից դուրս են գալիս ճուտիկներ ու բարձր ճշարով ամեն ընկալէ բաց են անում իրանց կարմիր կտուցիկները, ազահութեամբ ձգւում դէպի կերակուրը և ուտում են՝ որքան էլ որ բերեն ծնողները:

Պատահում է, որ մի ամառայ ընթացքում ծիծեռնակները երկու անգամ են ձու ածում և երկու անգամ ճուտիկներ հանում. բայց երկրորդ ճուտերը հազիւ են կարողանում աճել, մեծանալ: Երբեմն ջահէլները անկարող են լինում երկար ճանապարհորդութիւն սկսել, երբ հասնում է չլելու ժամանակը և նրանք կոտորւում են ցրտից և քաղցից:

Մի անգամ մի զոյգ ծիծեռնակներ երկրորդ անգամ ճուտեր հանեցին: Այդ պատահեց ամառայ վերջին և մինչև փոքրիկների թռչել սովորելը, վրայ հասաւ չլելու ժամանակը և նրանց ծնողներն էլ ուրիշների հետ թռանգնացին, թողնելով որ իրանց խեղճ փոքրիկները քաղցած մեռնեն, զուր սպասելով ծնողների վերադարձին:

Հետևեալ տարին, երբ հայրն ու մայրը կրկին եկան ու սկսեցին վերանորոգել և կարկատել հին բունը, բնի տակ, գետնի վրայ կարելի էր տեսնել անցեալ տարւայ հինգ փոքրիկ թռչնակների մանր կմախքները, որոնց անսիրտ ծնողները դուրս էին նետել բնից:

Թռչունները, երբ չլելու ժամանակ թռչում են ծովի վրայով, յաճախ այնքան բարձր են սալառնում օդի մէջ, որ բոլորովին աներևոյթանում են: Տեսնողներ են եղել, որոնք ասում են, թէ սերմնաքաղ ազուաւներն երբեմն այնպէս բարձր են թռչում, որ հազիւ են նշմարւում սև կէ-

տերի պէս և եթէ նրանց աղաղակները չլինին, հազիւ թէ կարելի լինի նրանց ջոկել:

Ինչպիսի զանազան տեսարաններ են տեսնում շուրջ թռչունները տարւայ զանազան եղանակներին... Տեսնում են հարաւային երկնքի փայլուն, ջինջ կապուտակը, կիզիչ արևը՝ բարձր արմաւենիներն և նարնջի անտառները լուսաւորելիս, հարթ կտուրները արևելեան ցածրիկ շինութիւնների՝ փայլփլող, սպիտակ, մերկ պատերով:

Ինչպէս այդ ամենը նման չէ այն բանին, ինչ որ մեզ մօտ են տեսնում:

Թէև մեզ մօտ ծիծեռնակներին շրջապատում են ոչ այդպիսի ուրախ և զարդարուն պատկերներ, ինչպէս այնտեղ, ուր նրանք շուրջ են ձմեռը, բայց և այնպէս մեր կողմերը նրանց համար աւելի սիրելի են, և մեզ մօտ են նրանք իրանց համար բուն շինում, ձագուկներ հանում. ասել է, մեզ մօտ են նրանք իրանց կարծես տանը զգում: Ուր որ ասւած է՝ «հիւր գնալը լաւ է, բայց տանն աւելի լաւ է»:

Գիտէ՞ք ուրիշ շուրջ թռչուններ:

59. Արծիւ

I.

Արծիւն ամենայն իրաւամբ բոլոր թռչունների թագաւորն է համարւում: Նրա սրատես աչքերը, կեռացած կտուցը և սուր ճանկերն ահ ու սարսափ են ազգում ոչ միայն բոլոր թռչունների, այլ և մարդկանց ու միւս կենդանիների վրայ: Նրա պատկերը մինչև օրս էլ գործ է ածւում՝ իբրև նշան ոյժի և փառքի: Հին ժամանակներում պարսիկները և հռովմայեցիները սովորութիւն ունէին իրանց զօրքերի առաջից տանել մի կենդանի արծիւ կամ նրա պատկերը:

Արծիւները բաժանւում են միջանի տեսակի, բայց

Նրանցից ամենանշանաւորը «արքայ արծիւ» կոչւողներն են, որ ապրում են Եւրոպայի ու Ասիայի լեռնոտ տեղերում: Այդ արծւի բարձրութիւնը հասնում է մէկ ու կէս արշինի, իսկ փետուրները շառատ գոյն ունին:

Արծիւը գիշատիչ թռչուն է, այսինքն կերակրւում է կենդանիների մսով: Իւրաքանչիւր տարի ածում է երկու ձու, որոնցից դուրս են գալիս նրա ձագերը — փոքրիկ արծւիկները:

Արծիւները սովորաբար ապրում են անմատչելի ժայռերի, բարձրաբերձ լեռների մէջ... Այդտեղ քարի խորշի մէջ շինում է նա իւր բունը, որ ոչ մի գեղեցկութիւն, ոչ մի գրաւչութիւն չունի:



Ինչպէս բոլոր ուժեղ թռչունները, այնպէս էլ արծիւը շատ քիչ հոգս է տանում իւր բնակարանի մասին: Նա իւր բունը թաղցնելու կարիք չունի. ո՞վ կրհամարձակէ ձեռք մեկնել նրան, ո՞վ կըկարողանայ բարձրանալ ամեհի ժայռերի, դարաւոր ծառերի գլուխը, ուր ապրում է «թագաւոր արծիւը»: Նրա բունը բաղկացած է ճիւղերի կոյտից, որի մէջ կայ մի փոքրիկ խորութիւն, իսկ շուրջը յաւելւած սալայատակի ձևով: Առաջինը ձագերի օրօրանն է, իսկ երկրորդը — սեղանը, որի վրայ արծւի ընտանիքը ճաշակում է իւր կերակուրը: Այդտեղ ամբարած է լինում արծւի պաշարը՝ սպանւած թռչուններ, նապաստակներ ու գառներ... Այդտեղ թափթփւած են կերակուրի հոտած, նեխւած մնացորդները, որոնց գարշելի հոտը բուրում է շրջակայքում:

Բունը վերադառնալիս՝ արծիւը իւր բերած որսը բաժանում է մանր կտորների և հաւասար չափով տալիս է ձագերին, իսկ երբ վերջիններս բաւական մեծանում են

և կտուցները ամրանում, այն ժամանակ նա ամբողջ
որսը դնում է սեղանին ու բոլորը միասին սկսում են
ուտել:

Որսի ժամանակ արծիւը չափազանց ճարպիկ ու հա-
մարձակ է: Նրա համար երկիւղ աւաճ բանը գոյութիւն
չունի: Նա սիրում է դառներ, փոքրիկ այծեր, վայրի սա-
գեր, աղւէսներ, նապաստակներ, կատուներ և ամեն տե-
սակ թռչուն, թէ ընտանի, թէ վայրի, թէ մեծ և թէ
փոքր:

Նկատւած որսը արծւի ճանկերից չի կարող խոյս տալ
ոչ արագ փախուստով և ոչ էլ թռչելով: Լոյսը բացւելուն
պէս նա հեռանում է բնից, թռչում հեռու ու բարձր և
շարունակ նայում է ներքև, որ տեսնի՞ ինչ է կատարւում
այնտեղ, ինչ որս է սպասում իրան և հէնց որ մի բան է
նկատում, իսկոյն կայծակի արագութեամբ վրայ է հաս-
նում և վերև բարձրացնում: Շատ անգամ արծիւը որսն
ուրիշ գիշատիչների ճանկերից է փախցնում: Այդ մասին
ականատեսները հետևեալն են պատմում:

— Իւրաքանչիւր օր հսկայ արծիւը գալիս, նստում էր
բարձր ծառի գագաթին և այդտեղից դիտում էր շրջա-
կայքը, կարծես լոկ հետաքրքրութեան համար. բայց ոչ,
նա որոշ նպատակ ունէր, որոշ ըռպէի էր սպասում, որ
իւր հօօրութիւնը ցոյց տայ:

Ահա ծովի վրայով սաւառնում են մի խումբ թռչուն-
ներ. արծիւն էլ այն կողմն է նայում. նրա ուշադրութիւ-
նը կենդրոնացած է միայն մէկի—գիշատիչ բազէի վրայ...

Յանկարծ բազէն սլացաւ ներքև և իւր կտուցով ալիք-
ների միջից դուրս բերեց մի ձուկը...

Հսկայ արծիւը նկատեց այդ բանը. նրա աչքերը կրակ
են դարձած. նա միքանի անգամ բաց ու խուփ արաւ
կտուցը և վերջապէս կայծակի արագութեամբ յարձակեց
բազէի վրայ:

Բազէն դիմադրութիւն ցոյց տւեց. սկսեց մի կատա-
ղի կռիւ, որ քսան ըռպէից աւելի տեւեց. երկու գիշատիչ-
ները մօտենում էին իրար, ճանկում, կտցահարում, ապա

հեռանում, միջանի պտոյտներ անում և նորից մօտե-
նում, նորից նոյնը կրկնում... Վերջապէս բազէն ուժա-
սպառ եղաւ. նա բաց թողեց որսը. արծիւն իսկոյն յա-
փրշտակեց և սլացաւ դէպի իւր բունը: Եւ արծւի այդ-
պիսի քաջագործութիւնները կրկնւում էին գրեթէ ամեն
օր...

II

Իբրև գիշատիչ թռչուն՝ արծիւը մեծամեծ փասաներ է
հասցնում մարդկանց, փախցնելով գառներ, այծեր, ըն-
տանի թռչուններ և այլն: Այդ պատճառով, երբ մի տե-
ղում արծիւը բուն է դնում, բնակիչներն աշխատում են
շուտով քանդել նրա բունը և դրանով ազատել հզօր թըշ-
նամուց. բացի դրանից, շատ որսորդներ բռնում են արծւի
ձագերին, մեծացնում են թակարդի մէջ և ապա վաճա-
ռում բաւական մեծ գնով:

Սակայն թէ արծւի բունը քանդելը և թէ ձագերին
բռնելը համարձակ փորձ է, որ երբեմն մէկ կամ միջանի
մարդկանց մահւան պատճառ է լինում, իսկ երբեմն էլ
յաջողութեամբ է վերջանում:

Բարձր ժայռի գագաթին բուն էին դրել երկու արծիւ.
Իւրաքանչիւր օր նրանք յարձակում էին գործում մօտա-
կայ գիւղի հօտի վրայ և գառներ էին յափշտակում: Նոյն
գիւղից մի որսորդ վճռեց ազատել իւր համագիւղացիներ-
ին այդ չարիքից և միևնոյն ժամանակ ձեռք բերել արծւի
ձագերը:

Նա կողքից կապեց պարկը, վեր առաւ ցանցը, սուրը
և երկու ընկերների հետ գնաց ժայռի մօտ:

Երբ արծիւները թռան, գնացին, գիւղացիները ցանցը
կապեցին որսորդի մէջքից և նրան կախեցին ներքև: Մի
րոպէում որսորդը մօտեցաւ արծւի բնին, հանեց ձագերը,
դրեց պարկի մէջ, քանդեց բունը և բղաւեց ընկերներին.

— Քաջեցէք վերև, ամեն ինչ յաջող է:

Սակայն այդ րոպէին վրայ հասան արծիւները. նրանք
բարձրից տեսել էին կատարւած իրողութիւնը, լսել էին
իրանց ձագերի ծըւծըւոցը և այժմ կատաղի կերպով յար-

ձակուում էին նրանց փրկելու և շարագործներին պատժելու համար:

Նրանք մօտենում էին որսորդին, փորձում էին կրտսահարել նրան, բայց սրի հարւածներ ստանալով, յետ էին նահանջում. նորից լսում էր ձագերի աղերսալի ծրւծրւոցը, նորից կրկնում էր անյաջող յարձակումը, իսկ որսորդն աւելի ու աւելի էր վեր բարձրանում: Աղբիւրի նման թափւում էր արիւնը արծիւների կրծքերից ու մէջքից, բայց ծնողական սէրը ստիպում էր նրանց շարունակել օրհասական կռիւր...

Վերջապէս արծիւներից մէկը արիւնաքամ եղաւ և անդունդը գլորւեց. այդ ժամանակ միւս արծիւն սկսեց կտցահարել ցանցը, որպէսզի կտրէ: Որսորդի սարսափն աւելացաւ. ընկերներն էլ զգացին վերահաս վտանգը և աւելացրին իրանց ջանքն ու ճիգը: Վերջապէս որսորդն ազատւեց, բայց նրա դէմքը մեռելային գոյն էր ստացել, իսկ մագերը սպիտակել էին սաստիկ երկիւղից: Դրանից յետոյ նա միշտ ցնցւում, սարսափում էր «արծիւ» խօսքը լսելիս:

Ի Ի Ի

Արծիւն երբեմն յափշտակում է փոքրահասակ երեխաների: Այդ մասին մի բնագէտ հետեւեալն է պատմում:

— Գարնանային օր էր. մի մատաղահաս կին երեխային նստեցրել էր արտի մէջ, իսկ ինքը բանջար էր քաղում: Նա բաւական հեռացել էր երեխայից, երբ լսեց նրա յանկարծակի ճիչը: Մայրը յետ նայեց և ահ ու սարսափով տեսաւ իւր երեխային արծւի ճանկերում: Արծիւն արագ-արագ վեր էր բարձրանում:

Թշուառ կինը աղմուկ բարձրացրեց, հովիւներին օգնութեան կանչեց: Նրանցից մէկը գիւղ վազեց, պարան բերելու, իսկ միւսները թագնւեցին ժայռի տակ... Արծիւն երեխային բարձրացրեց վերև և դրեց իւր բնի մէջ. այդ ժամանակ թագնւած հովիւները միաբերան բղաւեցին, որի հետեանքն այն եղաւ, որ արծիւը, վախեցած՝ բնից թռաւ և նստեց մօտակայ քարի վրայ: Գիւղը գնացած

հովիւր վերադարձաւ, պարանը տւեց ընկերներին և երկաթէ կօշիկներ հագնելով՝ ժայռի վրայ բարձրացաւ:

Արծիւը հասկացաւ նրա մտադրութիւնը և յարձակւեց նրա վրայ. գիւղացին պաշտպանւեց քարերով և մահակով. այդ բանը կրկնւեց միքանի անգամ: Վերջապէս հովիւր հասաւ արծւի բնին, գրկեց երեխային և ցոյց տւեց մօրը, որի ուրախութեանը չափ ու սահման չկար: Սակայն արծիւը շարունակում էր յարձակումները... Հովւի ընկերը ժայռի գլխից բաց թողեց պարանը, ազատարարը պարանը փաթաթեց մէջքին և յաջողութեամբ իջաւ ներքև:

Երեխայի մայրն արտասուէնքն աչքերին շնորհակալ եղաւ անձնագոհ հովւից:

Բայց ամեն անգամ չի յաջողւում ազատել: Շատ տնմեղ երեխաներ գոհ են գնում արծւի ճանկերին: Այսպէս, օրինակ, Ալպեան լեռներում 1882 թ. արծիւը փախցրեց հինգ տարեկան մի աղջկայ, բայց չկարողանալով այդ ճանրութիւնը պահել ճանկերում, բաց թողեց և աղջիկը, դիպչելով քարերին, ջախջախւեց:

Մի ուրիշ տեղում արծիւն իւր բունը տարաւ երկու տարեկան մի երեխայի և մինչև նրա հօր հասնելը, նա արդէն կտցահարել էր երեխայի աչքերը. սակայն դժբաղտութիւնը դրանով չվերջացաւ. երկու օրից յետոյ երեխան մեռաւ:

60. Թաւամագ մեղուն

Ա.

Անտառի խորքում մի հսկայ ծառի փչակում մեղունները շինել էին իրանց փեթակը:

Փեթակի բազմաթիւ փոքրիկ խցիկները, որոնք մոմից էին ձուլւած, բոլորն էլ լիքն էին: Նրանց մէջ կամ ոսկի մեղրն էր պահւած կամ սպիտակ ձւերն էին կամ թրթուրները՝ իրանց պատեանների մէջ փաթաթւած:

Այդ պատեաններէց մէկի միջիցն էր ահա, որ դուրս
սողաց մանուկ մեղուն ու գլուխը հանեց բճիճից:

Իսկոյն նրա դէմը վազեց դայեակ մեղուն:

—Ո՛ր, բարև՛, փոքրիկս, գալուստդ բարի. էդ ի՞նչ սի-
րուն ես, ի՞նչ թաւ մաղեր ունիս. եկ՛ անունդ դնենք Թա-
ւամագ:

Ասաւ ու սկսեց լիզել նրան. մաքրեց, յարդարեց ու
առատ կերակրեց մօտի մեղրի պաշարից: Եւ երբ Թաւա-
մագը լաւ կշտացաւ, դայեակը տարաւ նրան փեթակի
դուռը:

Աստուած իմ, ի՞նչ լոյս էր, ի՞նչ պայծառ: Թաւամագը
իսկոյն բացեց թևերն ու թռաւ թէ չէ՛ տեսաւ իւր շուրջը
կանաչ, անվերջ դաշտեր, իսկ վերևը մաքուր, կապոյտ
երկինք. և ի՞նչ անուշ բուրում էին ծառերն ու ծաղիկները:

Մեղուն սլացաւ և հրճանքի պտոյտներ էր անում
օդի մէջ:

Բ.

—Է՛յ, բարեկամ, ի՞նչ բանի ես այդտեղ, — հարցրեց
պառաւ մեղուն:

—Զարճանում եմ, — պատասխանեց Թաւամագը:

—Զարճանում ես, թէ Աստուածդ սիրես, — հեզնեց
պառաւը: — Բոլորս այժմ աշխատում ենք, ի՞նչ քէֆի ժա-
մանակ է. այդպէս առոյգ, այդպէս առողջ, մաղերդ էլ
այդպէս թաւ, ծաղկի փոշին իսկոյն կրկպչի: Թռի՛ր յետևիցս,
ես քեզ կըսովորեցնեմ:

Մեծ մեղուն այնպէս արագ էր թռչում, որ Թաւա-
մագը հազիւ էր կարողանում յետևից հասնել:

Մեծ մեղուն շիտակ մտաւ մի ահագին կապոյտ ծաղ-
կի բաժակ, սկսեց ծծել յատակի մեղրը, քսեց յետևի՛ ոտ-
ներին ու զնաց ծաղկի դեղին փոշու ամանների մօտ.
վերցնում էր դեղին փոշին ու քսում մեղրոտ ոտներին:

Թաւամագը նոյնն էր անում: Յանկարծ որ ջնայեց
իրան ու պառաւ մեղուն, ծիծաղը պահել չկարողացաւ:
Երկուսն էլ կարծես դեղին վարտիքներ էին հագել:

—Հը, հաւանեցիր վարտիքդ,—ասաւ մեծ մեղուն.—

դէ, գնանք տղան:

Հազիւ էին փեթակ մտել, որ փեթակի բոլոր դայեակներն ու բանւորները վրայ թափւեցին:

—Վայ, պահապաններ, օգնեցէք, վարտիքս կերան, վարտիքս:

—Բան չկայ, քաղցած են,—ասաւ մեծ մեղուն:—Դէ, լաւ, բաւական է, — դարձաւ միւսներին և առաջնորդեց թաւամագին շտեմարանը և ցոյց տուեց, թէ ինչպէս պէտք է ածէ մեղրը մոմէ բճիճների մէջ:

Ու թաւամագը դարձաւ մեղր հաւաքող: Յոգնեցնող աշխատանք էր, ճիշտ է, բայց աշխատանք էր. և ինչ լաւ ու կարևոր բան էր այդ աշխատանք ասլածը:

9.

Այսպէս էլ մի անգամ, երբ թաւամագը բեռնաւորլած դաշտից տուն էր դառնում, տեսաւ փեթակի շուրջը մի անսովոր իրարանցում. լսում էր սաստիկ բզբոց ու մի սարսափելի զոռոց:



Մօտ եկաւ ու զարմացաւ, որ բոլոր մեղունները դուրս էին թափւել ու պտոյտներ էին անում փեթակի շուրջը: Այնպէս էին կատաղել ու իրար խառնւել, որ ոչինչ չէր

կարելի հասկանալ: Այսքանը պարզ էր, որ մի թշնամի էր վրայ տւել: Եւ ինչ թշնամի. ինքը՝ արջը:

Յետևի թաթերի վրայ կանգնած, նա մըրթմըրթալով ման էր գալիս ծառի շուրջը, իսկ առաջի թաթերով աշխատում էր հասնել մեղրի պահեստին:

Յանկարծ քաշեց, պոկեց ծառի կեղևի մի կտորը, որտեղից դուրս թափւեցին ներսը մնացած մեղուները: Արջը մի թաթով պաշտպանւում էր նրանց յուսահատ յարձակումից, իսկ միւս թաթը կոխում էր փեթակի խորքը, ուր մեղրի շտեմարանն էր. հանում էր դուրս ու ազահաբար կուլ տալիս անուշ, ոսկեգոյն մեղրը:

Այս որ տեսաւ թաւամազը, էլ իրան զսպել չկարողացաւ, կատաղած նետւեց արջի վրայ ու խայթեց ուղիղ աչքը: Արջը մռնչաց սաստիկ ցաւից, թողեց փեթակն ու փախաւ:

Բայց խեղճ թաւամազը... Իւր զայրոյթից այնպէս խորն էր խայթել, որ խայթոցը մնացել էր աչքի մէջ: Խեղճը յանկարծ թուլացաւ, ընկաւ գետին իւր նման նահատակների մօտ և աչքերը յաւիտեան փակեց:

Բայց մեռնելիս նա չէր զղջում իւր արածի վրայ. չէ՞ որ փեթակի ազատութեան համար է զոհել իւր կեանքը, իւր տան համար, իւր հայրենիքի:

Չէ՞ որ՝ «ամենքը մէկի համար, մէկը ամենքի»:



61. Քրիստոնեութեան սկիզբը հայերի մէջ

Այն ժամանակները, երբ Յիսուս Քրիստոս քարոզում էր Հրէաստանում և հրաշքներ էր գործում, մեր Աբգար թագաւորը մի անբուժելի ախտով ծանր հիւանդ էր: Լսելով Քրիստոսի հրաշագործութիւնների մասին, բժիշկների օգնութիւնից յոյսը բոլորովին կտրած՝ նա դեսպանների ձեռքով նամակ է ուղարկում Փրկչին, թախանձագին խնդրելով, որ գայ իւր Եդեսիա քաղաքը և բժշկէ իրան: «Ես լսել եմ, — գրել էր թագաւորը իւր նամակում, — որ դու առանց դեղի բժշկում ես հիւանդներին — կոյրերի աչքերը բաց ես անում, կաղերին ոտ ես տալիս, բորոտներին սրբում ես, դիւահարներին առողջացնում և մինչև անգամ մեռելներին կեանք ես պարգևում: Այս ամենը լրսելով, ես ինքս ինձ ասացի, որ դու կամ երկնքից իջած Աստուած ես և կամ Աստուծոյ Որդի: Ուստի աղաչում եմ Քեզ, եկ, ինձ բժշկիր: Բացի այդ՝ ինձ ասել են նոյնպէս, որ հրէաները հալածում են քեզ, ես ունիմ մի փոքրիկ քաղաք, որը մեզ երկուսիս էլ բաւական է և Քեզ այստեղ ոչ ոք չի անհանգստացնիլ»: Դեսպանների հետ միասին Աբգար թագաւորը ուղարկում է նաև մի նկարիչ, որ եթէ Յիսուս ինչ-ինչ պատճառներով չկամենայ գալ, նրա պատկերը նկարէ և իրան բերէ:

Յիսուս, ստանալով Աբգարի նամակը, ասում է. — «Երանի նրան, որ դեռ ինձ չտեսած՝ հաւատում է»: Յետոյ պատւիրում է Թովմա առաքեալին Աբգարին գրել, որ ինքը չէ կարող գալ, բայց խոստանում է իւր համբարձումից յետոյ աշակերտներից մէկին ուղարկել, որ նրան բժշկէ:

Նկարիչը, երբ տեսաւ՝ որ Յիսուս գալու չէ, սկսեց պատկերը նկարել, բայց որքան աշխատում էր, այդ բանը չէր յաջողում նրան: Յիսուս, նկատելով այդ, վեր առաւ մի կտոր մաքուր կտաւ, ծածկեց երեսին և իսկոյն նրա վրայ նկարեց Իւր պատկերը: Այդ անձեռագործ պատկերը, որ Իսաստառակ է կոչւում, տարեց Եդեսիա և երկար ժամանակ պահւում էր այնտեղ:

Յիսուսի համբարձումից յետոյ նրա եօթանասուն երկու աշակերտներից մէկը, Թադէոսը, եկաւ Հայաստան, բժշկեց Թագաւորին և մկրտեց թէ արքայական ընտանիքը և թէ պալատականներից ու քաղաքի բնակիչներից շատերին: Թադէոս առաքեալը, Ադդէ անունով մի բարեպաշտ մարդու եպիսկոպոս ձեռնադրելով, իւր տեղ թողեց Եդեսիա, իսկ ինքը գնաց Հայաստանի միւս մասերում ևս քարոզելու, բայց շուտով նահատակեց Արգարի քրոջորդի Սանատրուկ իշխանի ձեռքով. սա թէպէտ սկզբում ընդունել էր քրիստոնէութիւն, բայց շուտով էլի ուրացաւ: Թադէոսի հետ Սանատրուկի հրամանով նահատակեց և նրա հարազատ դուստրը, Սանդուխտը, որը՝ չնայելով հօր յորդորներին, չկամեցաւ թողնել քրիստոնէութիւնը և նորից կուռք պաշտել:

Թադէոսից յետոյ Հայաստան եկաւ Բարդուղիմէոս առաքեալը, քարոզեց, բազմացրեց հաւատացեալների թիւը, շինեց եկեղեցիներ և ապա նահատակեց նոյն կուռքապաշտ Սանատրուկի ձեռքով:

Այսպիսով Հայաստանում հիմնւում է առաջին Քրիստոնէական եկեղեցի:

Թէպէտ Արգարի յաջորդներն ամեն կերպ աշխատում էին քրիստոնէութեան տարածման առաջն առնել, սակայն Հայաստանի առաջին լուսաւորիչների, Թադէոսի և Բարդուղիմէոսի ցանած բարի սերմերը և նրանց թափած արիւնն ապարդիւն չանցան: Շուտով հայերի մէջ ծնւեց մէկը, որի ջանքերով կուսպաշտութիւնն իսպառ հալածեց Հայաստանից: Այդ մարդը—ս. Գրիգոր Լուսաւորիչն էր:

62. Ս. Գրիգոր Լուսաւորիչ

Ա.

Երբ Հայոց Տրդատ թագաւորը դեռ ևս Հռովմ քաղա-
 քումն էր, նրա մօտ ծառայում էր Գրիգոր անուկով մի
 արդ: Սա այն Անակ Պահլաւունու որդին էր, որը որսի
 ամանակ սպանեց Տրդատի հօրը, Խոսրով թագաւորին, և
 նքը փախչելիս խեղդեց Երասխ գետում, իսկ նրա ըն-
 տանիքն սպանւեց մահամերձ թագաւորի հրամանով: Այս
 կոտորածից ազատւեց միայն Գրիգորը, որին նրա դայեա-
 ր, Սօֆիան, ծածուկ փախցրեց Կեսարիա քաղաքը: Սօ-
 ֆիան քրիստոնեայ էր, ուստի և Գրիգորն էլ կրթւեց քրի-
 ստոնէական ուսման մէջ: Չափահաս դառնալով նա ա-
 ճուսնացաւ Մարիամ անուկով մի քրիստոնեայ աղջկայ
 ետ և նրանից ունեցաւ երկու զաւակ, Արիստակէս և
 Արթանէս: Լսելով, որ իւր հայրն է սպանել Խոսրով թա-
 գաւորին, նա բաժանւեց կնոջից և գնաց Հռովմ, որպէսզի
 Խոսրովի որդու՝ Տրդատի մօտ ծառայելով, քաւէ հօր յան-
 դանքը: Գրիգորը մնաց Տրդատի մօտ, Հռովմում, այնքան,
 որինչև որ նա հռովմայեցոց կայսրից թագ ստացած՝ զօր-
 քով վերադարձաւ Հայաստան իւր հօր գահը բարձրանա-
 ու և նրա հետ եկաւ հայրենիք (286 թ): Յաջողութեամբ
 աննելով Հայոց Երիզա քաղաքը՝ Տրդատը շնորհակալու-
 թեան զոհ է մատուցանում Անահիտ դիցուհուն և պատ-
 իրում Գրիգորին, որ ծաղկէ պսակ դնէ կուռքի գլխին,
 այց նա բացարձակ կերպով մերժում է այդ, յայտնելով,
 որ ինքը քրիստոնեայ է: Չայրացած թագաւորը հրամա-
 նում է սարսափելի տանջանքների ենթարկել նրան, ապա
 տեղեկանալով, որ Գրիգորը իւր հօրն սպանող Անակի որ-
 ւին է, ձգել տւեց մահապարտների Խոր-Վիրապը: Գրիգորը
 Խոր-Վիրապում մնաց տասնևչորս տարի և կերակրւում
 էր մի պառաւ կնոջ ձեռքով, որն օրական մի կտոր հաց
 էր ձգում Վիրապը:

Այդ ժամանակներն էր, որ Տրդատի հրամանով Վաղարշապատում կատարեց չորսօրյա փախած երեսուն և հինգ կոյսերի նահատակութիւնը: Այս անիրաւ արիւնահեղութեան համար Աստուծոյ պատիժը հասաւ թագաւորին և պալատականներին: Նրանք կորցրին իրանց բանականութիւնը և համարեան անասնական բնաւորութիւն ստացան: Ապա Տրդատի քոյր Խոսրովագուխտի կրկնակի տեսիլքներից դրդւած՝ Խոր-Վիրապից հանեցին Գրիգորին, որին սկզբում մեռած էին համարում: Գրիգորը նախ թաղել տւեց Վաղարշապատի փողոցներում ընկած կոյսերի մարմինները, յետոյ բժշկեց թագաւորին և պալատականներին և վաթսուն ու վեց օր շարունակ նրանց քարոզեց քրիստոնէական հաւատը: Կարճ ժամանակից յետոյ թագաւորը՝ նախարարների և իշխանների հաւանութեամբ՝ Գրիգորին ընտրեց ընդհանուր քահանայապետ և ուղարկեց Կեսարիա, որ Ղևոնդ արքեպիսկոպոսից կաթողիկոս ձեռնադրւի: Կեսարիայից Հայաստան վերադառնալով՝ Ս. Գրիգորը քանդել տւեց բազմաթիւ մեհեաններ և նրանց տեղ եկեղեցիներ ու վանքեր կանգնեցրեց: Հէնց այդ ժամանակներն էլ նա հիմնեց հռչակաւոր Ս. Կարապետի վանքը Մուշ քաղաքի մօտ, որը մինչև օրս էլ յայտնի ուխտատեղի է Հայաստանում. այստեղ ամփոփւած է ս. Յովհաննէս Մկրտչի մասունքը: Երբ Տրդատն իմացաւ, որ ս. Գրիգորը վերադարձել է Կեսարիայից, իւր իշխաններին, զօրքը և բազմաթիւ ժողովուրդ հետն առած՝ ընդառաջ դուրս եկաւ: Ս. Գրիգորը երեսուն օր ծոմ պահել տւեց նրանց, որից յետոյ թագաւորին, իշխաններին, զօրքը և բազմաթիւ ժողովուրդ մկրտեց Եփրատ գետում: Այնուհետև նա թագաւորի հետ շրջեց Հայաստանի բոլոր կողմերը, մկրտեց ժողովրդին, շինեց բազմաթիւ եկեղեցիներ, վանքեր, կուսանոցներ և դպրոցներ բաց արեց: Վաղարշապատ թագաւորանիստ քաղաքում, ի միջի այլոց, նա հիմնեց ս. Էջմիածնի տաճարը (303 թ.), որը դարձաւ ամենայն Հայոց Հայրապետութեան Մայր Աթոռ: Ս. Էջմի-

ածինը մինչև օրս էլ կանգուն է և համայն հայերի միութեան կենդրոնն է կազմում: Այստեղ Ամենայն Հայոց Կաթողիկոսն օրհնում է սրբալոյս միւռոնը: Այստեղ է կատարւում Կաթողիկոսների օծումը և եպիսկոպոսների ձեռնադրութիւնը: Այստեղ են գտնւում մեր ազգային սրբութիւնները — ս. Գեղարդը, որը Թաղէոս առաքեալը իւր հետ բերել էր Հայաստան, ս. Գրիգոր Լուսաւորչի աջը, Կենարար Փայտը և այլն:

Այսպիսով Ս. Գրիգորն ամեն կողմ կենսատու լոյս տարածեց, որի համար և կոչւեց Լուսաւորիչ Հայոց աշխարհի:

Կեանքի վերջին տարիներում (331 թ.) Ս. Գրիգոր Լուսաւորիչը, սլաշտօնն յանձնելով Արիստակէս որդուն, քաշւեց Սեպուհ լեռան վրայ գտնւած Մանեայ այրը, ուր և կնքեց իւր մահկանացուն:

63. Հայոց տառերի գիւտը

Լ.

Հայաստանում առաջին դպրոցները հիմնեց Գրիգոր Լուսաւորիչը, որն ամեն կերպ աշխատում էր հաստատել քրիստոնէութիւնը հայերի մէջ և լուսաւորել հայրենակիցներին: Այդ դպրոցներում ուսումնս աւանդւում էր յոյն և ասորի լեզուներով, որովհետև չկային հայոց սեփական տառեր, չկային հայերէն գրքեր: Ուսումնսառու աշակերտները դժւարանում էին սովորել, չէին կարողանում իւրացնել օտար լեզուներով աւանդւող ուսումը: Ժողովուրդն էլ միշտ անմխիթար էր դուրս գալիս եկեղեցուց, որտեղ ժամասացութիւնը կատարւում էր իրան անհասկանալի լեզուով: Ս. Գիրքը և եկեղեցական կանոնները գրւած էին յունարէն կամ ասորերէն: Այս մեծ պակասութեան մասին առաջինը հոգս քաշեց Մեսրոպ Մաշտոցը, որ Տարօն գաւառի Հացիկ գիւղիցն էր: Մեսրոպը ուսեալ մարդ էր. նա գիտէր յունարէն, ասորերէն և պարսկերէն. միքանի տարի

Նա ծառայել էր թագաւորի պալատում քարտուղար պաշտօնով: Ուսումնական Մեսրոպը կամենում է օգտաւէտ լինել իւր ազգին. ծառայութիւնն արքունիքում ձանձրացրել էր նրան: Նա հեռացաւ աշխարհի վայելչութիւններէց և ճգնաւոր դարձաւ:



Ս. ՄԵՍՐՈՊ

խատանքը. նա ստիպւած էր Ս. Գրքից կարդացածը թարգմանել մայրենի լեզուով: Երկար այսպէս գործելով՝ բանիմաց Մեսրոպն համոզւեց, որ այսպէս անկարելի է շարունակել լուսաւորութեան գործը, հարկաւոր է մայրենի լեզուի տառեր հնարել:

Բ.

Մեսրոպն յայտնում է իւր խորհուրդը այն ժամանակեայ Հայոց կաթողիկոսին, մեծն Սահակ Պարթևին, որը՝ հասկանալով սեպհական տառերի անհրաժեշտութիւնը, Վաղարշապատում գումարում է հոգևորականների ժողով, խորհրդակցելու հայոց նշանագրերի մասին: Այն ժամանակեայ մեր Վռամշապուհ թագաւորն էլ նախանձախնդիր էր այս բանին. ինքն անձամբ ժողովին ներկայ լինելով՝ նա յայտնեց, որ Մսորիքում եղած ժամանակ լսել է, թէ մի ասորի եպիսկոպոսի մօտ գտնւում են հա-

յոց լեզւի տառերը: Սահակ կաթուղիկոսն ու Վռամշապուհ թագաւորը դեսպան են ուղարկում այդ եպիսկոպոսի մօտ, որը և բերեց յիշել տառերը: Մեսրոպը փորձեց գործածել դրանք, դասաւորեց յունաց տառերի կարգով, միքանի տարի աշխատեց սովորեցնել աշակերտներին, բայց իզուր—փորձն անօգուտ եղաւ: Բերած տառերը բաւական չէին հայոց բառերի բոլոր հնչիւններն արտասանելու համար. պակաս էին եօթը բաղաձայն և եօթը ձայնաւոր տառ:



Ս. ՍԱՀԱԿ

Մեսրոպը չվհատեց. նա դիմեց շատ տեղեր իւր նպատակին հասնելու համար. գնաց Եդեսիա, Պլատոն անունով մի ուսեալի մօտ, գնաց Սամոս կղզին Հռոմիանոս ճարտար գրողի մօտ, բայց նրա ջանքերը զուր եղան, — ոչ մէկից չկարողացաւ օգուտ քաղել: Այս բոլոր փորձերից յետոյ Մեսրոպը տեսաւ, որ յոյս դնելով ուրիշների վրայ՝ ոչինչ չի կարելի անել, սկսեց գիշեր ցերեկ մտածել այդ մասին և եռանդով ուսումնասիրել մայրենի լեզւի հնչիւնները. երկար ճիգ թափելուց յետոյ՝ վերջապէս Մեսրոպը յաղթեց դժւարութիւններին և իւր հնարագէտ խելքով ստեղծեց մեր նշանագրերը (406 թ.):

Գ.

Այս մեծ դիւտից յետոյ՝ Սահակն ու Մեսրոպը բաց են անում դպրոցներ, սովորեցնում են ուսման ծարաւ աշակերտներին նորագիւտ հայոց տառերը, թարգմանում են հին և նոր կտակարանները և ժամասացութեան բոլոր գրքերը օտար լեզուներից հայերէն: Հեշտանում է ուսման գործը աշակերտների համար. նրանք սկսում են կարդալ

մայրենի լեզուով, գրել մայրենի տառերով: Այնուհետև ժողովուրդն էլ՝ եկեղեցի գնալով՝ հասկանում էր ամեն բան և մխիթարւած վերադառնում էր տուն: Կամաց-կամաց լուսաւորութիւնը տարածւում է Հայաստանում, քրիստոնէութիւնը խոր արմատներ է ձգում ժողովրդի մէջ: Սահակի և Մեսրոպի բաց արած դպրոցներումն են ստացել իրանց սկզբնական կրթութիւնն այն անւանի հեղինակները — Եղիշէն, Եզնիկը, Մովսէս Խորենացին, որոնք գրեցին մեր հին պատմութիւնը և մշակեցին, ճոխացրին մեր լեզուն:

64. Հայոց առաջին պատմագիր

Մովսէս Խորենացին, Մեսրոպ Մաշտոցի քրոջորդին՝ որ մեր ազգի պատմութիւնը գրողներից առաջինն եղաւ, ծնւել է չորրորդ դարի վերջերը (մօտաւորապէս 385—395 թւականներին) Տարօն գաւառի Խորնի կամ Խորօնք գիւղում և այդ պատճառով էլ «Խորենացի» է կոչւում: Նրա մանկութեան տարիներումն էր, որ Ս. Սահակի ու Մեսրոպի ջանքերով և Վռամշապուհ ուսումնասէր թագաւորի աջակցութեամբ Հայաստանում բացւեցան դպրոցներ, որտեղ հայ մանուկներն սկսեցին սովորել հայոց նորագիւտ տառերը և կարդալ մայրենի լեզուով գրւած առաջին գիրքը: Այդ դպրոցներից մէկում, իւր մօրեղբօր ձեռքի տակ, ուրիշ ուշիմ և հանճարեղ մանուկների հետ դաստիարակւեց և Մովսէսը: Ուսումն յաջողութեամբ աւարտելով՝ նա միւս առաջադէմ մշակերտների հետ դիմեց այն ժամանակւայ լուսաւորւած երկրները՝ իւր գիտութեան ծաւալն ընդարձակելու համար և երկար տարիներ անխոնջ կերպով զանազան գիտութիւններ և գրքեր ուսումնասիրելուց յետոյ՝ հայրենիք վերադարձաւ:

Սակայն ինչ դրութեան մէջ գտաւ Մովսէսն իւր հայրենիքը: Ամեն կողմ լուրթիւն և ամայութիւն, ամբողջ երկիրը պարսիկների ձեռքով կրակի և սրի մատնւած, իսկ իւր բարերարները — Ս. Սահակն ու Մեսրոպը վախճանւած...

Վշտացած սրտով դիմեց նա Օշական գիւղը, ուր
գտնւում էր իւր մօրեղբօր նւիրական գերեզմանը: Աշ-
խարհից բոլորովին կտրւելով՝ նա փակւեց Ս. Մեսրոպի
գերեզմանի վրայ շինւած շքեղ մատուռի մէջ և երկար
տարիներ պատով, աղօթքով ու արտասուք թափելով՝ ան-
դուլ ու անխոնջ մեղւի նման աշխատում էր. նա գրեց
մեր ազգի պատմութիւնը՝ Հայկ Նահապետից սկսած մին-
չև իւր օրերը:

Իւր կեանքի վերջին տարիներում նա շատ թշւառու-
թիւններ կրեց և մինչև անգամ չոր հացի կարօտ մնաց:
Սակայն, վերջապէս, այն ժամանակւայ հայոց հայրապե-
տը, Գիւտը, որ Մովսէս Խորենացու դասակիցն էր եղած,
իւր թեմում շրջագայելիս անակնկալ կերպով Օշական
գիւղում տեսաւ և ճանաչեց նրան. նա վեր առաւ իւր
հետ մեր ազգի անզուգական մշակին և եպիսկոպոս ձեռ-
նադրելով՝ ուղարկեց Բագրևանդայ գաւառը: Այստեղ Մով-
սէս Խորենացին բաց արաւ ուսումնարաններ և ամեն
կերպ ճիգ էր թափում լուսաւորութիւն տարածել խաւա-
րի մէջ խարխափող հայերի մէջ:

Նա վախճանւեց մօտաւորապէս 487 թ. Տարօնում և
թաղւեց նոյն գաւառի Ս. Առաքելոց եկեղեցում:

65. Աւարայրի կրօնական պատերազմը

Ա.

ՀԱՅ ԻՇԽԱՆՆԵՐԻ ԱՆՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ.

Հայոց Վռամշապուհ թագաւորի մահից յետոյ պար-
սից թագաւորներն աշխատում էին Հայաստանը բոլորո-
վին ձուլել իրանց տէրութեան հետ: Բայց այդ նպատակին
գժւար էր հասնել, քանի որ հայերը քրիստոնեայ էին, իսկ
պարսիկները կրակապաշտ: Հայերն, իբրև քրիստոնեայ
ազգ, իրանց աւելի մօտիկ էին զգում յոյներին, որոնց
ձեռքումն էր Հայաստանի արեւմտեան մասը: Բայց յոյներն
էլ թշնամացել էին հայերի հետ այն օրից, երբ Մեսրոպի,

Սահակի և նրանց աշակերտների ջանքերով հայոց եկեղեցիներում և դպրոցներում յուրանց լեզուի փոխարէն մայրենի լեզուն էր սկսել գործածուել: Հայերն այդ ժամանակ չունէին զօրեղ թագաւոր: Վռամշապուհի որդի Արտաշէսը մի գեղիս և անառակ երիտասարդ էր, որ աւելի մտածում էր զւարճութիւնների, քան թէ երկիրը կառավարելու մասին: Հայոց նախարարները, զգլելով այդ թոյլ և անառակ թագաւորից՝ որոշեցին դիմել պարսից Վռամ արքային և խնդրել, որ նա գահից զրկէ Արտաշէսին և նրա տեղ Հայաստանում պարսիկ կուսակալ նշանակէ: Իզուր էր Սահակ կաթողիկոսն աշխատում համոզել նրանց, որ համբերեն և մի այդպիսի ազգամուսա քայլ չանեն:

Հայոց իշխանները՝ տեսնելով, որ Սահակը չի ուզում միաբանել իրանց հետ, դիմեցին պարսից թագաւորին և զրպարտեցին թէ Արտաշէսին և թէ Սահակին, իբրև թէ այդ երկուսը միացել են յոյների հետ և ուզում են ապստամբեցնել Հայաստանի պարսից մասը: Պարսից թագաւորը հէնց մի այդպիսի բանի էր սպասում. նա օգտուեց հայոց մեծամեծների շարախօսութիւնից և կանչելով իւր մօտ հայոց թագաւորին ու կաթողիկոսին, բանդարկեց: Սահակի փոխարէն կաթողիկոս նշանակեց Սուրմակ անուանով մի անարժան երէցի, իսկ Արտաշէսի տեղ հայոց երկրի վրայ կուսակալ (մարզպան) կարգեց:

Բ.

ՅԱԶԿԵՐՏ ԹԱԳԱՒՈՐԻ ՀՐՈՎԱՐՏԱԿԸ ԵՒ ՀԱՅՆԵՐԻ ՊԱՏԱՍՈՒՆԸ

Դէպքերը շուտով ցոյց տւին, թէ ինչ դժբաղդութիւնների պատճառ դարձաւ հայոց իշխանների անհեռատեւ քայլը: Վռամի մահից յետոյ պարսից թագաւոր եղաւ նրա որդի Յազկերտը, որը մոլեռանդ կրակապաշտ էր: Նա վճռեց բռնի կերպով հաւատափոխ անել հայերին և այդպիսով բոլորովին ձուլել մեր երկիրը Պարսկաստանի հետ: Յաւալին այն էր, որ հայ նախարարների մէջ գտնուեցին փառասէր մարդիկ, որոնք միայն իրանց սեպհական շահերն աչքի առաջ ունենալով՝ ծածուկ օգնում էին Յազ-

կերտին: Այդպիսի նախարարներէից էր և Սիւնեաց աշխարհի հօօր իշխանը, որի անուան էր Վասակ:

Յազկերտը հրովարտակ հանեց, որ իւր իշխանութեան տակ եղած բոլոր քրիստոնեաները, այսինքն հայերը, վրացիք և աղւանները, թողնեն իրանց հաւատը և երկրպագեն արեգակին ու պաշտեն կրակը: Պարսից կրօնապետը կամ մոզպետը իւր կողմից մի թուղթ գրեց հայոց մեծամեծներին, որի մէջ պախարակում էր քրիստոնէութիւնը և գովում պաշսից կրօնը:

Այդ ժամանակ հայոց կաթողիկոսն էր Սահակի և Մեսրոպի աշակերտ Յովսէփը: Նա Արտաշատ քաղաքում հայ աշխարհական և հոգևորական մեծամեծներից մի ժողով կազմեց: Այդ ժողովում կարդացւեց Յազկերտի և մոզպետի առաջարկութիւնը և գրւեց մի համարձակ պատասխան, որը վերջանում էր այս խօսքերով. «Մեր հաւատից մեզ ոչ մի բան չի կարող հանել — ոչ մարդիկ, ոչ հուրը և ոչ սուրը»:

Գ.

ՀԱՅ ԻՇԽԱՆՆԵՐԻ ՊԱՐՍԿԱՍՏԱՆ ԳՆԱԼԸ ԵՒ ՆՐԱՆՑ ՎԵՐԱԴԱՐՁԸ

Յազկերտը, ստանալով հայերի պատասխանը, շատ բարկացաւ և հրամայեց նախարարներին՝ գալ Պարսից Իսլամը: Նա կանչեց նաև հայոց զօրքի սպարապետ Վարդան Մամիկոնեանին: Երբ որ նախարարները հասան Յազկերտի մօտ՝ սա հրամայեց նրանց բոլորին էլ բանդարկել, մինչև որ համաձայնւեն փոխել իրանց հաւատը: Յազկերտն յայտնեց նախարարներին, որ եթէ նրանք յամառեն իրանց որոշման մէջ, մեծ զօրք կուղարկէ Հայաստան՝ բնաջինջ անելու բոլոր հայերին:

Տեսնելով, որ առանց իրանց ներկայութեան Հայաստանում շատ դժւար կըլինի հայերին ընդդիմադրել պարսից զօրքին՝ նախարարները խորհեցին և վճռեցին երեսանց ընդունել կրակապաշտութիւն, որպէսզի իրաւունք ստանան վերադառնալու հայրենիք և իրանց երկիրը պաշտպանեն Յազկերտի զօրքի աւերումներից:

Երբ Յազկերտը լսեց, որ նախարարները պատրաստ են ուրանալ իրանց հաւատը, սաստիկ ուրախացաւ և պարզկներ տալով նրանց՝ յետ ուղարկեց Հայաստան, նրանց հետ դնելով մոզերի մի մեծ խումբ և պարսկական զօրք։ Նա հրաման էր տւել մոզերին և զօրքին — փակել բոլոր եկեղեցիները Հայաստանում և նրանց տեղ կրակատներ հիմնել։

Հայ ժողովուրդը, երբ լսեց նախարարների ուրացման գոյժը և մոզերի ու պարսից զօրքի գալը, ոտքի կանգնեց և պատրաստուեց զէնքով պաշտպանել իւր հաւատը։ Մոզերի հէնց առաջին փորձը — կործանել եկեղեցին՝ ցոյց տւեց, թէ որքան դժւար էր հայերին բռնութեամբ հաւատափոխ անել։ Երբ մի գիւղում մոզերը ուզում էին փակել եկեղեցին, նրա երէց Ղևոնդը ժողովրդի հետ յարձակւեց պարսիկների վրայ և ջարդելով յետ քշեց իւր սրբափայրից։

Իսկ նախարարները, երբ հասան Հայաստան, բացարձակ յայտնեցին, որ չեն ուրացել իրանց հաւատը։ Վարդան Մամիկոնեանն իսկոյն նախարարների ժողով գումարեց և բոլորն Աւետարանի վրայ երդւեցին՝ չխնայել իրանց կեանքը հայրենիքի և ազգային եկեղեցու պաշտպանութեան համար։ Հայերի ոգևորութիւնը և հաստատամտութիւնն այնքան զօրեղ էին, որ նոյն իսկ Վասակն ստիպւած էր միանալ նախարարների հետ և երդւել Աւետարանի վրայ, որ հաւատարիմ կըմնայ քրիստոնէական հաւատին։

Այսպէս անհն հասարակ հայ ժողովուրդը, իշխանները և հոգևորականները միաբանելով թոյլ շտւին քանդել իրանց եկեղեցիները և մոզերին պարսից զօրքի հետ միասին քշեցին Հայաստանից։

Դ.

ՎԱՍԱԿԻ ՈՒՐԱՅՈՒԹԻՒՆԸ

Այդ քայլն անելով հայերը լաւ գիտէին, որ Յազկերտն անպատիժ չի թողնիլ իրանց, ուստի սկսեցին պատրաստւել դիմադրելու Յազկերտի նոր յարձակումին։ Միևնոյն

ժամանակ իշխան Ատոլմ Գնուհուն և Վարդան Մամիկոնեանի եղբորը, Հմայեակին, ուղարկեցին Յուհայ Թէոդոս կայսեր մօտ օգնութիւն խնդրելու: Իսկ ինքը — Վարդան Մամիկոնեանն առժամանակ իւր զօրքով դիմեց դէպի հիւսիս — օգնելու իւր փեսային, Վրաց թագաւորին, որը նոյնպէս կուռւմ էր Յազկերտի դէմ:

Վասակ Սիւնին, օգտւելով Վարդան սպարապետի բացակայութիւնից, խախտեց իւր երդումը, ուրացաւ բրիստոնէութիւնը և սկսեց բացարձակ համոզել նախարարներին, որ յետ կենան իրանց մտադրութիւնից և ընդունեն Յազկերտի պահանջները: Վասակը մինչև անգամ սկսեց աւերել այն նախարարների երկրները, որոնք չէին ուզում միաբանել իւր հետ: Բայց երբ լսեց, թէ Վարդանը՝ յաղթելով պարսիկներին՝ արդէն վերադառնում է, փախաւ և ամրացաւ Սիւնեաց աշխարհում:

Ն.

ԱՒԱՐԱՅՐԻ ՃԱՆԱՏԱՄԱՐՏԸ

451 թւականի Չատկի տօները նոր էին անցել, երբ լուր հասաւ, որ պարսից ահազին զօրքն արդէն հասել է Ուրմիա լճի արեւմտեան ափը՝ Հեր ու Չարեանդ գաւառը: Վարդանն իսկոյն հրաւէր կարդաց հայոց բոլոր իշխաններին, որ գան, հաւաքեն Արտաշատ քաղաքում: Իսկ պարսից բանակի դիրքը և թիւը լրտեսելու նպատակով, նա առաջ ուղարկեց Առանձար Ամատունի իշխանին 300 կրտսրիճ հեծեալներով:

Վարդանի հրաւէրն իսկոյն արձագանք գտաւ և հայ իշխաններն շտապեցին իրանց զօրքերով Արտաշատ, ուր ժողովեց 66 հազար զօրք: Առանձարը տեղեկութիւն բերեց, որ պարսիկները դիմում են Արտազ գաւառը: Վարդանն՝ անցնելով 66 հազար զինուած հայերի գլուխը, դիմեց թշնամու բանակի դէմ: Հայոց զօրքը, հասնելով Տղմուտ գետի սիւսի մօտ գտնւող Աւարայր գիւղը՝ գետի միւս ափին հանդիպեց պարսից զօրքի հանդէպ բանակ դրեց: Յետոյ իրաթուղիկաւ, Ղևոնդ երէցը և ուրիշ միքանի քա-

հանաներ հայոց զօրքի մէջ էին և քաջալերում ու խրախուսում էին հայ զինուորներին:

Միւս օրը, յունիսի 2-ին, լուսադիմին հայոց բանակից երևում էր, թէ ինչպէս պարսից զօրապետ Մուշկանն առաջ էր բերում պատերազմի փղերը, որոնց ամեն մէկի մէջքին մի-մի մարդկոց էր դրւած՝ լի սպառազինւած մարդկանցով: Այն վիթխարի կենդանիներից իւրաքանչիւրի երկու կողմը նա կանոնեցրել էր երեք հազար զինուոր:



Վարդանը, աղօթելով զօրքի հետ՝ ինքն էլ պատրաստւեց ճակատամարտի: Նա հայոց զօրքը բաժանեց չորս գնդի. առաջին գունդը յանձնեց Ներշապուհ Արծրունուն, երկրորդը՝ Խորէն Խորխոռունուն, երրորդը՝ Թաթուլ Վանանդեցուն, իսկ չորրորդը պահեց իրան, օգնական ունենալով Արշաւիր Կամսարականին և իւր կրտսեր եղբօրը՝ Համազասպին:

Ճակատամարտն սկսեց նետաձգութեամբ գետի երկու կողմերից: Հայերն, անցնելով Տղմուտ գետը, քաջութեամբ յարձակեցան պարսից վրայ: Քաջ Վարդանը կոտորեց պարսիկների ամենաուժեղ թևը: Այս արիւնահեղ


պատերազմը տևեց ամբողջ օրը: Երբ Վարդանը վիրաւոր-
ւած ընկաւ իւր քաջ ընկերների հետ՝ հայոց զօրքն, անա-
ռաջնորդ մնալով՝ ցրւեց, պատերազմի դաշտում թողնելով
1036 հոգի, մինչդեռ պարսից կողմից ընկել էին 3544 մարդ:

2.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԸ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՅԵՏՈՑ

Աւարայրի ճակատամարտից յետոյ հայերը ցրւեցան
և ամրացան Հայաստանի զանազան բերդերում ու անմատ-
չելի լեռներում և դեռ երկար ժամանակ շարունակում
էին կռւել պարսիկների դէմ: Վարդանի եղբայր Հմայեակը,
յոյներից օգնութիւն չստանալով՝ հասաւ Հայաստան Աւա-
րայրի պատերազմից յետոյ: Նա իւր խմբերով ամրացաւ
Պարխար լեռներում և անդադար յարձակւում էր պար-
սից վրայ ու կոտորում նրանց: Նա այդպէս երկար կռւեց
հայրենիքի թշնամիների դէմ, մինչև որ դիւցազն եղբօր
համան ինքն էլ ընկաւ կռւի դաշտում:

Յազկերտը՝ տեսնելով, որ չի կարողանում կոտրել հա-
յերի կամակորուժիւնը, հրամայեց Մուշկանին դադարե-
ցնել պատերազմական զործողութիւնները հայոց երկրում:
Նա, մեծամեծ խոստումներ անելով, կենդանի մնացած
նախարարներին իւր մօտ կանչեց, իսկ Յովսէփ կաթողի-
կոսին, Աւոնդ երէցին և միքանի ուրիշ հոգևորականների,
իբրև ապստամբութեան դրդիչների, հրամայեց կալանա-
ւորել և ջորիների վրայ կապած՝ ուղարկել Պարսկաստան:
Երբ նախարարները հասան Պարսից Դուռը՝ Յազկերտը,
հակառակ իւր երդման, բանդարկեց նրանց բոլորին, իսկ
կաթողիկոսին, Աւոնդին և միւս հոգևորականներին սաս-
տիկ տանջանքների ենթարկելով՝ սպանել տւեց:




ՀԻՆԳԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ

Ա. ԱՌԱՆՆԵՐ

66. Աքաղաղն ու մարգարիտը

Օրւան մէկը մի աքլոր
Քջուջ-մջուջ անելիս՝
Տեսաւ մի հատ մարգարիտ
Աղբի միջին փայլելիս:
Կտցեց, ասաւ.— «էս ի՞նչ է.

Ինձ հարցնես, ոչինչ է:
Այ վնյը տամ էն մարդին
Որ գին կրտայ էս գաղին.
Իսկ ինձ համար մի գարին
Արժէր էսպէս հաղարին»...



67. Խեցգետինը, ձուկն ու կարապը

Խեցգետինը, ձուկն ու կարապ
Օրւան մէկը՝ պարապ-սարապ՝
Մի սայլ գտան բեռը վրան
Ու երեքով լծւան նրան:

Շատ քաշեցին նրանք սայլից,
 Ընկան ուժից, ընկան հալից,
 Բայց ակները կանգնած սայլի
 Իրանց տեղից ժած չեն գալի:
 Թէպէտ սայլը շատ թեթև էր,
 Բայց կարապը վեր կըթևէր,
 Խեցգետինը հա՛յետ ու յետ,
 Իսկ էն ձուկը ո՛չ էս, ո՛չ էտ,
 Զու քաշում էր դէպի գետը.
 Մենք ի՞նչ ունենք սրանց հետը—
 Ո՞վ էր արդար, ո՞ւմն էր մեղը,
 Միայն սայլն է դեռ իւր տեղը:

68. Կապիկն ու հայելին

Իրան տեսնելով
 Հայելու միջին՝
 Կապիկը ոտով
 Մի բռնեց արջին.
 —Քեռի, հլա դէս,
 Սրան մի տես.
 Էս ի՞նչ ուեխ է...
 Կնճռոտ տրեխ է.
 Հրէջ, ցուցանք...
 Պատիժ, փորձանք
 Գտանք, պրծանք:
 Ես տեղոց տեղ կը-
 սպանւէի,
 Թէ քիչ սրան նման-
 ւէի:

Բայց թէ ես էլ
 Ինչո՞ւ հետ եմ...
 Էդպէս ցուցանք
 Քչի՞ն գիտեմ:
 Թւեմ զատ-զատ,
 Աերոնց մէջ շատ:
 —Քան թէ թւես
 Չերոնց զատ-զատ,
 Լաւ չէ՞ նայես,
 Խելօք, վրադ,—
 Արջը ասաւ.
 Բայց զուր խօսաւ.
 Արջի խօսքը
 Տեղ չհասաւ:





69. Կապիկն ու ակնոցները

Ծերացել էր կապիկը,
 Լաւ չէր տեսնում պապիկը.
 Բայց հասել էր ականջին,
 Թէ արատ է դա չնչին,
 Իսկոյն գտաւ նա ճարը
 Տւեց գինն ու վճարը,
 Առաւ ակնոց
 Մի ողջ կապոց:
 Ակնոցները փոքր ու մեծ
 Ձեռքերին էսէնց-էնէնց,
 Մին դնում է իւր գլխին,
 Մին էլ պոչի մէջտեղին,
 Մին լիզում է, թքոտում,
 Մին էլ սրբում, հոտհոտում,
 Հնա փորձում է, հնա փոր-
 ձում,
 Բայց ակնոցը չի գործում:
 Էն պապողուն ապակին

Լոյս չի տալիս պապիկին:
 —«Կորչին, գոռաց կենտ
 ու կենտ,
 Նա յիմար է, նա է խենթ,
 Ով լսում է հետհետին
 Մարդկանց հազար մի ստին:
 Սրանց մասին
 Ինչ որ ասին,
 Սուտ է, սուտ:
 Էս ապակին
 Խաւար աչքին
 Ի՞նչ օգուտ»:
 Ու կապիկը
 Ծեր պապիկը,
 Խորը վշտով ակնոցները
 Էնպէս խփեց չոր քարին,
 Որ ջուր կտրած փշրանքները
 Կանանչ-կարմիր կապեցին:





70. Չրվեժ եւ առւակ

Լեռան տակից մի աղբիւրիկ կը վազէր,
 Բայց ջուրն այնքան նւազ էր,
 Որ անցնող-դարձողի աչքին հազիւ կերևար.
 Միայն թէ շատ անւանի էր նրա ջուրն առողջարանը:

Աղբիւրի մօտի բարձր ժայռերից
 Փրփրած, կատաղի մի Չրվեժ կիջնէր.
 Մա հպարտ-հպարտ՝ գոռամաք ահագին
 Ասաց առւակին.

—Տես, ինչ կասեմ քեզ.

Դու խեղճ ջրիկ ես,
 Բայց ինչո՞ւ այդքան
 Քեզ հիւրեր կը գան:

Ինձ մօտ թէ գան, իրաւն ասած, դարմանք չէ,
 Հիանալի մի տեսք ունիմ, աննման.

Սա, տեսնեմ, քո յատկութիւնդ ի՞նչ է,
 Ինչո՞ւ մարդիկ միշտ գունդագունդ քեզ կը գան:

Առական ասաց խաղնելով
 Հեզիկ ու քաղցր ձայնով.
 — Գիտե՞ս՝ ինչու.
 Բժշկւելու:



71. Առիւծի որսորդութիւնը

Առիւծն ու շուն, գայլն ու աղւէս
 Իրար հետ ապրում էին եղբօր պէս.

Միմեանց ազնիւ խօսք են տալիս՝

Մէկտեղ լինել միշտ որսալիս.

Ինչ որ ընկնի ձեռքերին,

Հաւսար անեն փայ-բաժին:

Չգիտեմ՝ ինչ կերպով

Կամ թէ ինչ հնարքով,

Առաջ աղւէսն եղնիկ է որսում.

Իսկոյն այդ մասին բոլորին յայտնում,

Որ գան բաժանեն այդ ընտիր որսը,

Չորս բաժին անեն և առնեն չորսը:

Եկան ամենքը: Առիւծն էլ եկաւ

Ու այսպէս խօսեց. — «Բերէ՞ք, ես բաժնեմ.

Մենք չորս ենք, եղբայրք, չորս կտոր անեմ:
 Ահա նայեցէք. այս է իմ բաժին,
 Ինչպէս խօսք դրած էինք մեր միջին.
 Այս փայն էլ իմն է, զի ես առիւծ եմ.
 Սա էլ՝ որ ձեր մէջ ուժեղը ես եմ.
 Իսկ սա, — թող մէկն ապա մի թաթը մեկն է,
 Տես, թէ իւր գլխին ինչ ձիւն կըբերէ»:



72. Առիւծն ու մոծակը

Խեղճի վրայ մի ծիծաղիւր,
 Անճարին մի վիրաւորիւր.
 Խեղճ մարդն էլ շատ անգամ քեզ այնպէս
 Կըխայթէ, որ կըմնաս սևերես:
 Քո գլխին շատ էլ մի հաւատար,
 Լսիր այս առակը, ականջդ առ:
 Այնպէս պատահեց, որ առիւծը հզօր
 Մոծակի սիրտը խիստ խոցեց մէկ օր:
 Մոծակն այդ բանից շատ վիրաւորեց,
 Առիւծ արքային պատերազմ յայտնեց:
 Կուռողն էլ ինքն էր, փողահարն էլ ինքը,
 Վրան էր բոլոր զրահն ու զէնքը:

Բզզալով ընկաւ թշնամու վրայ,
 Որ մէկ հարւածով մահացու վէրք տայ:
 Առիւծն սկզբում մի հանաք կարծեց,
 Բայց երբ մոծակը նրան մէկ լաւ խայթեց,
 Տեղից վեր թռաւ մեր առիւծ արքան,
 Սկսեց զարկել պոչովն ինքն իրան:
 Բայց քաջ մոծակն արնի համն առած,
 Սիրտն էլ նեղացած, ինքը բարկացած,
 Զո՛ւ արաւ, թռաւ, ճակատին նստեց,
 Տղրուկի նման արիւնը ծծեց:

Անճար առիւծը շատ էլ զօռ արեց,
 Բաշը թափ տւաւ, գլուխն օրօրեց,
 Բայց դու ո՛չ մեռնես, մոծակն իւր քէֆին
 Մէկ քթին էր զարկում ու մէկ ականջին:
 Առիւծի ճարը հէնց որ կտրւեց,
 Տեսաւ մոծակն իւր հոգին հանեց,
 Ընկաւ գետնի վրայ և այնպէս գոռաց,
 Որ նրա ձայնից սար ու ձոր դողաց.
 Մէկ ժանիքներն էր կրճրտացնում
 Ու մէկ գետինը ճանկրտում, պոկում:
 Ամբողջ անտառում էլ շունչ չմնաց,
 Նրա գոռոցից փախան սարսափած,
 Կարծես սար ու ձոր կրակ էր ընկել,
 Կամ կարկուտ եկել, ջրհեղեղ արել:
 Եւ այսքան շփոթ, այսքան աղմուկը
 Հնարել կարաց փոքրիկ մոծակը:
 Երբոր առիւծը իսպառ թուլացաւ,
 Գետնի վրայ չոքեց ու մեղայ եկաւ.
 Խնդրեց մոծակից, որ իրան ների
 Եւ այնուհետեւ էլ կռիւ չանի:
 Մոծակն էլ իրան վրէժը հանած,
 Թշնամուն այսպէս քարովը տւած,
 Մեր թագաւորի յանցանքը ներեց
 Եւ լաւ պայմանով նրա հետ հաշտւեց:



73. Նապաստակները

Նապաստակներն ամբողջ
 ցեղով
 Անտառի մէջ արին ժողով,
 Եւ ժողովում մի ծեր շղէիկ
 Ասաւ. «Լսէք, մեծ և պատիկ,
 Շունը հաչէ,
 Քամին փչէ,
 Ամպը գոռայ,
 Մուկը ճռռայ,
 Օձը սողայ,—
 Մեր էս ցեղը
 Հան կը դողայ:
 Վախկոտներ ենք էգ թէ
 արու,
 Չենք տալ քացի, չենք տալ
 հարու,
 Թէկուզ լինինք մի-երկու
 ծին,
 Մեզ պիտ ուտեն արծիւն
 ու ցին»:

Էսպէս ապրել չի կարելի
 էս աշխարհում չարերով լի:
 Չարն ու բարին աշխարհի
 հետ
 Թողնենք, գնանք, թափւենք
 մի գետ».
 Շղէիկները ոչ էս, ոչ էն,
 Եւն ընկան մահի ճամպէն,
 Հէնց որ եկան գետին մօտիկ,
 Էն գորտերը մեծ ու պատիկ
 Խառնիխուռը
 Թափւան ջուրը:
 Իսկոյն էդտեղ մի այլ շղէիկ՝
 «Դարձէք, կանչեց, պապիս
 որդիք,
 Էլ մի կախէք ձեր քթերը,
 Մեզնից վախկոտ են գոր-
 տերը»:

74. Ճպուռն ու մրջիւնը

Թըռի-վըռի մի ճպուռ
 Ողջ ամառը շուռ ու մուռ
 Երգեց, ճռաց,
 Ճըռճռաց:
 Մին էլ, ըհը՛, ձմեռը
 Փռեց իրա թևերը,
 Բացեց գորգը սպիտակ,
 Դաշտերն առաւ ձիւնի տակ:
 Անցան պայծառ օրերը
 Էլ որն ասեմ, էլ որը,
 Երբ ամեն մի թփի տակ
 Համ սեղան կար, համ օթեակ:
 Եկան օրեր ցրտաշունչ.
 Ճպուռն ընկաւ լուռ ու
 մուռնը,
 Քաղցած փորին էլ ի՞նչ երգ.
 Ցուրտը տարաւ ոտ ու ձեռք:
 Զընգըր-զընգըր դողալով,
 Ծանր-ծանր սողալով,
 Նա մրջիւնին ասում էր.

«Գլխիդ մատաղ, սանամէր,
 Մի ճար արա՛ շունչ առնեմ,
 Ցրտից սովից չմեռնեմ,
 Կերակրի, տաքացուր,
 Մինչև դարուն ապրեցուր»:
 —Ի՞նչ խաբար է, իմ սանիկ,
 Զարմանում եմ, ա ջանիկ:
 Զաշխատեցի՞ր ամառը.
 Ասա, ի՞նչ էր պատճառը:
 —Էդպէս բանի, սանամէր,
 Էլ ո՞վ ժամանակ ունէր:
 Էն խոտերում բուրաւէտ
 Երգում էինք մերոնց հետ:
 «Ուրեմն դու՛»...

—Այո՛, ես,

Ողջ ամառը դէն ու դէս,
 Երգ երգեցի մշտապէս:
 —Երգեցիր հա՛, շատ բարի.
 Այժմ էլ բռնի վերվերի,
 Քամին ծափ տայ՝ դու պարի:

75 Խոզն ու կաղնիս

Մի դարևոր կաղնու տակ
 Խոզը ազահ ու անյագ
 Էնքան կաղին ղխտըլեց,
 Որ ցած ընկաւ ու փռեց.
 Փռեց, չռեց ու քնեց,
 Քնեց, քնեց, որ դարթնեց,
 Դունչը տարաւ ու մէկից
 Ծառը փորեց պինդ տակից:

«Քո արածը, սպասէ,
 «Զէ՞ որ ծառին վնաս է,
 «Նա կը շորնայ արևից»,—
 Ազուան ասաւ վերևից:
 —Չորանում է՛ շորանայ,
 Ինձ ի՞նչ օգուտ, որ մնայ,
 Իսկի էլ չեմ ափսոսում,—
 Տակից էն խոզն էր ասում.

Միայն կաղին ունենամ,
 Ուտեմ, ուտեմ, գիրա-
 նամ: Իւր կոյր աչքով չի տեսնի,
 Որ կաղինը հիւթալի
 Կանաչ ճիւղերս են տալի.—
 —Այ ապերախտ խոզենի,
 Ով քեզ նման վիզ ունի,
 Ասաւ կաղնին խոզուկին՝
 Էն կախգլուխ կուզիկին:

76. Պոչատ աղւեսը

Փախաւ աղւեսը,
 Փախաւ թակարդից,
 Բայց պոչի կէսը
 Թողեց նա ներսը:
 Էդպէս պոչատ,
 Պոչից անջատ,
 Գնաց, ասաւ ընկերներին.

—Այ ձեզ մատաղ, ես ձեր գերին,
 Դէն գցեցէք ձեր պոչերը,
 Ինչո՞ւ են պէտք էդ փչերը.

Իրանք զարդ չեն ու զարդարանք,
 Այլ մեր գլխին պատիժ, փորձանք,

Գետնի աւել,

Վազքի խափան,

Մեզ անվայել,

Աւելորդ բան:—

Էդտեղ մի ծեր վարպետ աղւես

Ասաւ նրան՝ «Ապրես, ապրես,

Ա՛յ ծակամուտ թոռիս թոռը,

Էդքան չեն տայ խելքին զօռը.

Բա քանի որ տեղն էր պոչդ,

Ինչո՞ւ չարիւր դու էդ կոչդ:





77. Ագոստն ու աղւեսը

Բաղդի բերմամբ,
 Թէ պատահմամբ,
 Մի մեծ ագոսաւ
 Մի գունդ պանիր
 Դաշտում գտաւ,
 Կտցում առաւ:
 Օ, ինչ սլանիր, դեղին ոսկի...
 Բայց նա չառած համը իսկի,
 Աղւէսն անցաւ
 Ծառի մօտով,
 Գերւեց,
 Էրւեց,
 Պանրի հոտով:
 Վազեց, գնաց բերնի ջուրը
 Եւ թուլացան կուռն ու
 ճուռը.
 Կախարդն էդտեղ, իրա ձևին,

Ծառի տակից, աչքն ագոսա-
 ւին,
 Հեղիկ-նազիկ,
 Փափկամազիկ,
 Բացեց լեզուն
 Անուշ-մեղուշ,
 Թափեց-չափեց
 Շաքար ու նուշ.
 — Ինչքան լանն ես,
 Ես քո գերին,
 Քո էդ սևիկ
 Վառ աչերին,
 Նուրբ ծալքերով
 Զոյգ թևերին:
 Մի դու մտիկ,
 Էդպէս քթիկ,
 Էդպէս ճտիկ.

Մախամուր ազին,
 Խառ ու դումաշ
 Ատշամն հազին,
 Գիտեմ, անշուշտ իմ քուրիկի
 Ձայնն էլ կըլի հրեշտակի,
 Երգիր, քուրիկ, մի ամաչի,
 Իմ ուղածը մի մեծ բան չի:
 Թէ որ չքնաղ էդ տեսքիդ հետ
 Երգելում էլ եղար վարպետ,
 Օ, կըդառնաս, իմ սրբուհի,

Թռչունների մայր թագուհի»:
 Ազուաւ ազին
 Գովեստներից
 Իրա մասին
 Շշմած, ուռած՝
 Ազուաւային
 Բկովը մին
 Որ չկըռուց,—
 Պանիրն ընկաւ կտցիցը ցած,
 Շողոքորթը ըռխեց-գնաց:

78. Շունն ու ձին

Մի տան բակում շունն ու
 ձին,
 Իրար առան առանձին,
 Շունը ձիուն
 Թէ՛ «Գլխիդ ձիւն,
 Ի՞նչ մեծ բան ես...
 Բեռ կըտանես,
 Արտ կը ցանես.
 Ձի, ձի,
 Խնոցի,
 Հեծի, լծի,
 Մեծ շուրն անցնի,
 Տուր դէն գցի:
 Է՛, թող կորչի աննշանը...

Այինչ ասեմ ինձ պէս շանը.—
 Ես ցերեկը տունը պահեմ,
 Ես գիշերը հօտին նայեմ,
 Ձին ոտ մեկնի ինձ հաւասար»:
 Ձին թէ՛ «Ճիշտ է, հաչան
 Բասար,
 Ես որ հանգիստ
 Կողքիս պառկեմ,
 Բեռ չտանեմ,
 Դաշտ չհերկեմ,
 Տուն կըմնամ,
 Որ դու պահես,
 Հօտ կըմնամ,
 Որ դու նայես»:



79. Էջն ու առիծք

Ազլէսն ասաւ. «Էջ քեռի,
Ի՞նչ ես բանել վերվերի»:
Էջը թէ՛ — Սուս, մեր տղան,
Ես որ մօրից նոր եղայ...
Մի տեսնես դու առիւծին,
Ես ի՞նչ գիտեմ՝ քանի ծին,
Հիւանդ ընկել է այրում,

Վերջին օրերն է համրում
Ո՞վ անցնում է մօտովը
Կամ պողովը, ոտովը...
«Քեռի, դու է՞լ խփեցիր,
Դու է՞լ հերսդ թափեցիր:
— Բա կարծում ես մնացի՞.
Ես էլ նրան մի քացի...»

80. Արծիւն ու ճիճուն

Հսկայ թևերը լայն-լայն տարածած՝
Հզօր արծիւը ուղղեց իւր թռիչք
Դէպի բարձրաբերձ լեռներ սեպացած,
Դէպի անսահման կապուտակ երկինք:
Երկան սաւառնեց նա խիտ ամպերում,
Քանի ոյժ ունէր գօրեղ թևերում.
Եւ վերջ ի վերջոյ յոգնած ու դադրած,
Նա նստեց հսկայ մի լեռան կրճքին,
Որի գագաթը մինչ երկինք հասած,
Սարսափ էր ազդում վերև նայողին:
Նստեց նա հանգիստ, անվախ, անվրդով
Եւ շուրջը գոռոզ հայեացք ձգելով,
Իւր արքայական ձայնովը ահեղ,
Որոտաց ուժգին. «Մենակ եմ այստեղ,
Մենակ ու ազատ այս լեռան վրայ,
Որպէս քաջայաղթ լիազօր արքայ.
Իմ գահն է անհուն այս երկնակամար,
Որոտ ու ամպեր — ոտքիս պատւանդան.
Ո՞վ կայ աշխարհում փառքիս հաւասար,
Ո՞վ կարէ հասնել գահիս բարձրութեան»:
— Ե՛ս...

Հսւեց յանկարծ մի ձայն թոյլ, բարակ,

Մեծապանծ թռչնի հէնց ոտների տակ,
 —Ես՝ անձրեային ճիճուս աննշան:
 —Ի՞նչպէս, դու այստե՞ղ, իմ դէմ յանդիման:
 Ասա ինձ շուտով, ճիճու անպատկառ,
 Ռ՞րտեղից դու այս ամպերին հասար...
 —«Այն նեխուած ճահճից, արծիւ ինքնագով,
 Ուր դու ծնւած ես քո այդ վեհ փառքով.
 Այն նեխուած ճահճից, որտեղից այժմ դու
 Զգուում ես անգամ հայեացք ձգելու»:
 —Բայց ի՞նչ հնարքով դու, միջատ չնչին,
 Հասար իմ անհաս ամպազարդ գահին.
 Ասա, պատմիր ինձ, ի՞նչպէս, ի՞նչ կերպով»...
 —«Ի՞նչպէս, — սողալով, արծիւ, սողալով»:

81. Արծիւն ու կաղնին

(ՀԻՆ ԶՐՈՅՑ)

Եղաւ՝ մի անգամ արծիւն ու կաղնին
 Մի անտառի մէջ վէճի բռնւեցին,
 Թէ ո՞րն իրանցից շատ տարի կապրի,
 Որն է դիմացկուն ու պինդ աւելի:
 Արծիւն ասաց՝ ես, կաղնին էլ, թէ՛ ես:
 Երկուսն էլ յամառ ու հպարտ այսպէս
 Մեծ-մեծ պարծենցան, սաստիկ վիճեցին:
 Վերջը այս տեսակ պայման կապեցին.
 Փամանակ դրին հինգ հարիւր տարի,
 Արքան հաւքերի, արքան անտառի,
 Որ թէ որոշած այն օրին հասնեն,
 Այն օրը դարձեալ մէկ-մէկու տեսնեն:
 Ու արծիւն իսկոյն կաղնուցն հեռացաւ,
 Հզօր թևերը շարժեց, վերացաւ
 Դէպի ամպերը, դէպի ժայռերը,
 Ուր անց է կացնում իւր լաւ օրերը:

Կաղնին էլ փռեց ճիւղերն երկաթի,—
 Խոր ու խոր միսեց ճանկերն արմատի
 Ու այնպէս հուժկու կանգնեց անտառում,
 Որ վայր չընկնի էլ հինգ հարիւր տարում:
 Դարեր անցկացան:

Եւ անա մի օր
 Արծիւն եկաւ՝ ծերացած, անզօր,
 Ծըւոցը կտրած, տկար, հեալով,
 Թոյլ-թոյլ թևերը հազիւ քարշ տալով.
 Տեղ հասաւ մի կերպ, նայեց դէս ու դէն,
 Տեսաւ, որ կաղնին ընկել էր արդէն,
 Ընկել էր անեղ փոթորկի առաջ,
 Ճիւղերը թէև դեռ թարմ ու կանաչ:
 —Հէյ, կանչեց, գոռոգ, պարծենկոտ կաղնի,
 Դէ լաւ ճանաչիր ինձ ու քեզ հիմի.
 Հինգ հարիւր տարուց մի ժամ էլ դեռ կայ,
 Ընկել ես արդէն, անկոտորում հսկայ:
 —Հինգ հարիւր տարի ապրել եմ կանգնած,
 Այդքան էլ կապրեմ այսպէս թեք ընկած,
 Մինչև լրանայ մի հազար տարին,—
 Պատասխան տաւ ընկած վիթխարին:

82. Բազին եւ աղաւնի

Գիշատիչ բազին իւր սուր ճանկերում
 Բռնած աղաւնուն, պատառոտում էր:
 —Հը՛մ, ճանկս ընկար. գուր ես աշխատում
 Պրծնել իմ ձեռքից, գուր այդ հնարքներ:
 Խնամեցաք, ես ձեզ լաւ եմ ճանաչում.
 Հայհոյիչներ էք, խորամանկ օձեր.
 Ձեր ցեղը միշտ մեր արիւնն է խմում,
 Դուք էք մշտական մեր թշնամիներ:
 Բայց կան սուտաճներ վրէժխնդրութեան,

Նրանք ամենքին կանեն դատաստան:
 — Ա՛խ, ո՛ւր էր՝ թէ այդպէս լինէր,
 Այդ հէնց իմ սրտի ուղածն էր, —
 Հագիւ հառաչեց աղաւնին մարած,
 Սուր-սուր ճանկերում սաստիկ ճնշւած:
 — Ինչպէս, ինչպէս, այդ ինչ ասացի՞ր,
 Ա՛յ դու անհաւատ, մի մէկ էլ կրկնիր:
 Դու չես հաւատում, հա՛, աստուածներին,
 Նախախնամութեան այն հօօր ոյժին:
 Է՛հ, ուզում էի ազատել ես քեզ,
 Բայց չէ, տեսնում եմ, որ արժանի չես.
 Դէհ, մեռիր, գուր է, գուր քո փրկութիւն.
 Անաստուածներին չկայ թողութիւն:

83. Սոխակներ

Մի ճարպիկ թռչնորս գարնան օրերում
 Անտառների մէջ սոխակ էր որսում:
 Խեղճ սոխակները, վանդակում փակւած,
 Ճուղողում էին, ճարները կտրած.
 Թէև, իհարկէ, նրանք կուզէին,
 Որ անտառներում ազատ ման գային.
 Բանդում փակւածը ի՞նչ սիրտ կունենայ,
 Որ դեռ երգի էլ, կամ զլարճանայ:
 Բայց էլ ի՞նչ անէին,
 Որ գոնէ չերգէին
 Եւ իրանց սև օրը
 Միասին չողբային:
 Նրանցից միայն մէկը չէր երգում.
 Նա իւր սիրելի ու կարօտն էր քաշում:
 Արտասաւթոր աչքերով,
 Նա դաշտերին էր նայում,
 Գիշեր-ցերեկ տանջւելով՝
 Ընկերուհուն էր յիշում:

Իւր ընկերուհուց խեղճը անջատւած՝
Հալւում, մաշւում էր, վանդակում փակւած:
Անբաղձ սոխակը վերջը մտածեց.

— Այսպէս չի լինիլ, — ինքն իրան ասեց. —

Անխելք մարդիկն են շարունակ տխրում,
Իսկ խելօքները հնար են փնտրում,

Որ դժբախտութեան

Մի կերպով վերջ տան:

Կարծեմ ես ինքս էլ, եթէ աշխատեմ,

Իմ թշւառութեան մի ճար կրգտնեմ.

Մեզ խօսմ չեն բռնել, որ մեր միան ուտեն,

Այլ որ մենք երգենք, իրանք էլ լսեն:

Մեր այս պարոնը, ինչպէս կերևի,

Երգեր լսելու սաստիկ սէր ունի.

Եթէ իմ ձայնով ես նրան դուր գամ,

Փոխարէնն անշուշտ պարգև կստանամ

Եւ նա վերջ կըտայ իմ ստրկութեան:

Այսպէս սիրտ տւաւ սոխակն ինքն իրան

Եւ ոգևորեց,

Երգել սկսեց,

Իւր անուշ ձայնով,,

Սիրուն երգերով

Նա իւր պարոնին զմայլեցրեց:

Պարոնն էլ միայն նրան հաւանեց

Եւ լաւ խնամեց,


Իսկ միւսներին —

Վատ երգողներին

Իսկոյն արձակեց:

Եւ այնուհետև մեր խեղճ սոխակին

Աւելի ամուր ու պինդ փակեցին:



84. Էջն ու սոխակը

Իշուկը մի սոխակ տեսաւ:
 —Մէկ ինձ նայիր, նրան ասաւ.
 Ասում են՝ դու լաւ ես երգում,
 Բայց չգիտեմ, ճիշտ են ասում:
 Ես ականջներ ունիմ լայն-լայն,
 Լաւ եմ լսում ամեն մի ձայն.
 Բայց քո երգը ես չեմ լսած,
 Թէև լսել շատ եմ ուզած:
 Այս լաւ եղաւ, որ քեզ գտայ,
 Դէ, մէկ երգիր, մէկ բըլբըլայ,
 Տեսնեմ՝ ուղի՞ղ լաւ ես երգում,
 Թէ՞ իգուր են այդքան գովում:
 Անմեղ սոխակը նազ չարաւ,
 Սիրուն կտուցը բաց արաւ,
 Ուզեց ցոյց տալ ականակին,
 Որ գուր չեն գովում սոխակին.
 Չայնը լարեց ու սկսեց...
 Սոխակի ձայն, ինչե՞ր չասեց.—
 Մէկ խօսում էր ու մէկ երգում,
 Հազար խաղով խաղացնում.
 Մէկ դայլայլում, դըլդըլցնում,
 Մէկ գեղգեղում, կըլկըլցնում.
 Այնպէս շլուում, սրնգում էր,
 Որ սար ու ձոր զըզըլում էր.
 Լեռ քարերն էլ դարձրին ուշ,
 Այնքան քաղցր էր, այնքան անուշ.
 Ամեն մի շունչ և արարած
 Լսում էր լուռ՝ ապուշ կտրած.
 Քամին կտրեց իւր վըզըցը,
 Աղբիւրն իրա քըչքըչոցը.
 Ո՛չ մի տերև չէր սըլսըլում,
 Ո՛չ մի թռչուն չէր ծըլըլում:
 Տաւարներն էլ չարածեցին,

Այլ նստեցան, ականջ դրին.
 Տաւարածն էլ՝ շունչը քաշած՝
 Սոխակին էր լսում ապշած:
 Անմեղ ժպիտը բերանին,
 Ձեռքով էր անում ընկերին:
 Վերջապէս սոխակը լռեց,
 Իշի վճռին ականջ դրեց.
 — Է՛հ, էջն ասաց, վատ չես երգում,
 Լաւ ես ծւում, ծըւծըւում.
 Բայց ես շատ եմ ամսոսում քեզ,
 Որ չես երգում աքլորի պէս:
 Եթէ մեր աքլորին տեսնես,
 Նրա երգին ականջ դնես,
 Այնուհետև նրա նման
 Դու էլ կերգես շատ աննման:

Այս վճիռը որ իմացաւ,
 Մեր սոխակը շատ նեղացաւ.
 Նա չգիտէր, որ իւր դիմաց
 Մի անճաշակ էջ էր կանգնած:
 Թևին խփեց, թռաւ-գնաց
 Դէպ աշխարհն երանելեաց:



85. Առաւօտ

Գիշերն անցաւ. առաւօտեան
Մէզը փուեց դաշտի վրայ.
Շուտով արտուտն էլ վաղորդեան
Աւետիքը պիտի տայ.—

«Արշալոյսը բացւեցաւ,
«Քնած երկիրն արթնացաւ»:

Դեռ նիհրում են դաշտ ու անտառ,
Բայց զեփուռը արտերին,
Գուրգուրելով երգ սիրավառ՝
Շշնչում է մեղմագին՝

«Արշալոյսը բացւեցաւ,
«Համ-արարած արթնացաւ»:

86. Գարնան առաւօտ

Բարի լուսի զանգեր զարկին
Զընգզընգալէն անոնշ, անոնշ,
Հոյսը բացւեց մեր աշխարհքին
Ճրդճրդալէն անոնշ, անոնշ:

Հովտում առուն խոխոջում է
Գըլգըլալէն անոնշ, անոնշ.
Քամին բարակ շընկշընկում է
Զըլգըլալէն անոնշ, անոնշ:

Կռուկնին եկաւ երամ կապած
 Կրակրուալէն անոնշ, անոնշ,
 Կաքաւն քարին տաղ է կարդում
 Կրդկրդալէն անոնշ, անոնշ:

Հարսն ու աղջիկ հանդերն ելան
 Շորորալէն անոնշ, անոնշ,
 Ծաղկանց բուրմուկնքն անմահական
 Սըլսըլալէն անոնշ անոնշ:

87. Գուքանի երգ

Արի, գութան, վարի, գութան,
 Օրն եկել է, ճաշ դառել,
 Առ շոն առ, խոփիդ դուրպան,
 Օրհնեալ է Աստուած, հորովէլ:

Քաշիր, եզր, ուսիդ մատաղ,
 Քաշիր, քաշենք, վար անենք.
 Ճիպտին արան, քշիր, հօտաղ,
 Մեր սև օրին ճար անենք:

Պարտատէրը գանգատ գնաց,
 Քեօխովէն կրգայ՝ կրծեծի:
 Տէրտէրն օրհնեց, անվարձ մնաց,
 Կբարկանայ՝ կանիծի:

Դէհ, քաշեցէք, դէհ, քշեցէք,
 Էլ մեր դառը քրտինքը.
 Չարշարեցէք, աշխատեցէք,—
 Ողորմած է երկինքը:

Արի, գութան, վարի, գութան,
 Օրն եկել է, ճաշ դառել.
 Առ շոն առ, խոփիդ դուրպան,
 Օրհնեալ է Աստուած, հորովէլ...

88. Վարդը

Փոքրիկ տղան մի վարդ տեսաւ,
Տեսաւ մի վարդ դաշտի միջին.
Վարդը տեսաւ, ուրախացաւ,
Մօտիկ վազեց սիրուն վարդին.
Սիրուն վարդին, կարմիր վարդին,
Կարմիր վարդը դաշտի միջին:

Տղան ասաւ.—Քեզ կը պոկեմ,
Ա՛յ կարմիր վարդ դաշտի միջին:
Վարդը ասաւ.—Տես, կը ծակեմ,
Որ չմոռնաս փշոտ վարդին.
Փշոտ վարդին, կարմիր վարդին,
Կարմիր վարդը դաշտի միջին:

Ու անհամբեր տղան պոկեց,
Պոկեց վարդը դաշտի միջին.
Փուշը նրա ձեռքը ծակեց,
Բայց էլ չօգնեց քնքուշ վարդին.
Քնքուշ վարդին, կարմիր վարդին,
Կարմիր վարդը դաշտի միջին:

89. Երկրագործ

Ռհ, երկրագործ, երկրագործ,
Որքան սիրո՞ւն է քո գործ:
Արևը չելած՝ մաճն է քո ձեռքիդ,
Եօթը զոյգ եզ, գոմէշ լծած գուլթանիդ,
Ծրում ես, պատռում դու կոշտ ու խոպան,
Լեռներ ու ձորեր, հանդ ու անդաստան:
Ցանում ես ցորեն, կորեկ ու գարի,
Բամբակ ու բրինձ ամենայն տարի:
Ծլում են, ծաղկում ճակտիդ քրտինքով

Քո վարած դաշտեր, որ լի էր փշով:
 Անցնում է գարուն: Ոսկեգօծ հասկեր
 լցնում, ծածկում են քո սիրուն արտեր.
 Քամին փչում է, արտը տատանում,
 Կարծես նոր հարս է, հորանց է գնում:

Ո՛հ, երկրագործ, երկրագործ,

Որքան սիրո՞ւն է քո գործ:

Համնում է ամառ: Մանգաղը ձեռքիդ
 Հնձում ես, հնձում, խուրձեր կապտում.
 Խուրձերը բարդ-բարդ՝ սայլով ու ձիով
 կրում ես, տանում, կալը հասցնում:
 Այնտեղ կալսում ես, թեղում ու քամում,
 Մաքուր ցորենը քո տունը կրում,
 Իսկ չոր դարմանը անասնոց համար
 Չմեռան պաշար՝ մարագը լցնում:
 Եւ երբ փչում է դառնաշունչ ձմեռ,
 Խրճիթում նստած՝ քո խոփն ես սրում,
 Մարքում, պատրաստում արօր ու գութան.
 Եւ գարնան գալուն նորից սպասում:

Ո՛հ, երկրագործ, երկրագործ,

Որքան սիրո՞ւն է քո գործ:

90. Յոգնած երկիրը

Ցուլուն աստղերը կապոյտ երկնքում
 Երգում են անուշ միասին խմբւած,
 Եւ զգուշութեամբ կամաց են երգում՝
 Չզարթեցընեն երկիրը նիրհած:

Ա՛խ, ամբողջ օրը շրջող ոտներից,
 Անվերջ աշխատող կուռ բազուկներից,
 Ամուր բարախող մարդկանց սրտերից
 Խեղճ մայր-երկիրը սաստիկ է յոգնած...

91. Ամպեր

Հայոց երկնքով ամպեր են վազում
 Խիստ քամու ձեռքից:
 Սև-սև ամպերը սարերի նման
 Անցնում արտերից:
 «Կացէք, այ ամպեր, ինչո՞ւ էք փախչում,
 «Անձրև չէք թափում.
 «Մեր ծարաւ արտեր օրեր են համրում
 «Ու ձեզ սպասում:
 «Քամի, դու քամի, խղճա՛ արտերին,
 «Թող այդ ամպերին,
 «Կանգնեն ու թափեն անձրևի շիթեր,
 «Ջրեն մեր արտեր»:
 Քամին հանդարտւեց, մեղմ անձրև թափւեց,
 Արտերը ջրեց.
 Արտը բարձրացաւ, ցօղուն արձակեց
 Ու հասկեր բռնեց:
 Գիւղացին գնաց, տեսաւ ու խնդաց,
 Խնդաց ու ասաց.
 «Փնփ Գեղ, ո՞վ Աստուծ, որ տւիր մեզ հաց,
 «Չենք մնալ քաղցած»:

92. Գարնան անձրև

Ե՛կ, գարնան անձրև, թափւիր յորդառատ
 Ցրտացած երկրի սառ կրճքի վրայ.
 Թող նորից երկիրն շունչ քաշէ ազատ,
 Թող նրա կրճքին ջերմ կեանքը եռայ:

 Երկա՛ր նա տանջւեց դառնաշունչ ձմրան
 Ցուրտ կապանքներում, քեզ սպասելով.
 Նա շատ համբերեց, կենսատու գարնան
 Քաղցր կարօտը ջերմ փայփայելով:

Թափւիւր, ան անձրև, իբրև մարգարիտ,
Ինչպէս երկնառաք ցօղը կենսաբեր,
Ոռոգիւր դաշտեր, անտառ ու հովիտ,
Կանաչով պատիր լեռներ ու ձորեր:

Թող յորդանալով աղբիւր ու գետակ
Սառցէ շղթաներ անահ խորտակեն,
Դուրս գան ավերից, վազեն համարձակ,
Ազատ խոխոջան, ազատ կարկաչեն:

Թող քեզ լոյս-արև ժպտայ սիրավառ
Եւ՝ որպէս երկնից հաշտութեան նշան՝
Քո կաթիլներում փայլուն ու պայծառ
Նա սիրով կապէ կարմիր ծիածան...

Ե՛կ, գարնան անձրև, թափւիւր յորդառատ
Ցրտացած երկրի սառ կրծքի վրայ.
Թող նորից երկիրն շունչ քաշէ ազատ,
Թող նրա կրծքին ջերմ կեանքը եռայ:

93. Գիւղում

Գիւղից վերև, ճամպի վրայ,
Տերևախիտ մի ծառ կայ.
Անտառիցը նա զատւած,
Մարդու կացնից ազատւած՝
Դեռ կանգնած է,—և շոգին
Հով է տալիս մշակին:
Իսկ նրանից ո՛չ հեռու
Մի լեռնային պարզ առու՝
Դուրս գալով մութ ծմակից,
Խոխոջում է փրփրալից:
Սակայն նա չէ շատ խորին.
Այն առակում, կէսօրին,
Երբ որ տապից նեղանում,
Գնում էինք, լողանում,

Խաղում էինք վազվզում
Գոյն-գոյն մանրիկ աւազում:
Եւ մեր ճիչը մտնկական՝
Միանալով մի առ ժամ
Այն վտակի աղմուկին՝
Խաղաղ, հանգիստ հովիտին
Կենդանութիւն էր տալիս:
Ա՛խ, որքան էր դիւր գալիս,
Երբ տկլոր խումբը մեր
Աղաղակով վազում էր
Թիթեռնիկի յետևից,
Որ թռչում էր թփերից.
Եւ միշտ յոգնած ժամանակ
Հանգչում էինք ծառի տակ...

Չ. Գիւղի ժամը

Տան-դօ, տան-դօ... Նազլիւ, վեր կաց,
Արևն արդէն մայր է մտնում.
Տես, խաթունն էլ՝ գործը պրծած՝
Փողոցումն է, ժամ է գնում:

Ժամը տւին, — տան-դօ, տան-դօ.
Տէր, փառքդ շատ, — տան-դօ, տան-դօ:

Շուտով նախիրն հանդից կը գայ,
Գնանք, որ էլի շուտ յետ գանք.
Կովը կթենք, թը՛ռ — թը՛ռ կաթ տայ,
Կովը կթենք, մեր ցաւն հոգանք:

Ա՛խ, նազլու ջան, չե՞ս իմանում,
Էգուց էլի աղան կը գայ.
Նրա սիրտը միշտ անկշտում
էլի ամպի պէս պիտ գոռայ:

«Շուտով, Գրիգոր, փողերը բեր...
էլի՞ չկայ, — կովդ հանիր»:
Ա՛խ, նազլու ջան, այն ի՞նչ բան էր,
Մի՞տդ է հերու... Տէր, Դու փրկիր:

Հայրիկդ արդէն գնացել է,
Որ փող ճարէ. երբ պիտի գայ.
Տեսնենք՝ մէկը խղճացել է...
Ա՛խ, սև օրը Աստուած չտայ:

Շուտով, նազլու, գնանք ժամը,
Աղօթք անենք. քո ձայնն Աստուած
Շուտ կըլսէ, — այս անգամը
Մեզ չի թողնիլ անկով, անհաց:



95. Անգրագետ

Երբէք մէկին չեմ նախանձում
 ես աշխարհի երեսին,
 Միայն, գրագէտ դուք պարոններ,
 նախանձում եմ ձեր բաղդին:
 Ա՛խ, զթացէք խեղճ գեղջուկիս
 ու գրել սովորցրէք.
 Տւէք մի թերթ սպիտակ թուղթ,
 մի փետուրէ գրիչ տւէք,
 Որ ձեզ յայտնեմ՝ ինչ ցնորքներ,
 ինչ մտքեր կան իմ պիտում,
 Մի ողջ աշխարհ ես ձեզ ցոյց աւամ
 այդ աննաման պատկերում:
 Այժմ անհետ չքանում են
 այդ մտքերն ու երազներ.
 Ես անգրագէտ, ես անուս եմ...
 սովորցրէք, պարոններ:

Ազնիւ գործ է, թէ մարդ գրել
 իւր խօսքերը կարենայ,
 Բոլորն՝ ինչ որ մտածում է,
 բոլորն՝ ինչ որ հոգուց գայ.
 Գրչով պատմէ այն ամենը,
 ինչ դիզւել է իւր սրտում,
 Ճմարտութիւն միշտ քարոզէ,
 բարի գործի մեծութիւն:
 Ա՛յ, դու սագ իմ ճերմակթևիկ,
 քեզ տւել եմ կերակուր,
 Քեզ սիրել եմ, փոխարէնը
 թևիցդ ինձ մի գրիչ տո՛ւր:
 Սիրո՛ւն դու սագ, տո՛ւր, խնդրում եմ
 ինձ թռչելու զոյգ թևեր...
 Ես անգրագէտ, ես անուս եմ.
 սովորցրէք, պարոններ:

96. Մայր

Մայր ունէի, մայր նազելի,
 Մի փափկասիրտ արարած.
 Բուռն սիրով նրան էի
 Սիրտս ու հոգիս նւիրած:
 Նա էր միակ իմ պաշտելին,
 Միակ ծաղիկն իմ հոգոյս.
 Նա էր իմ թոյլ, մանուկ
 կեանքին
 Միակ նեցուկ, միակ յոյս:
 Եւ ես ուրախ, ես երջանիկ,
 Որպէս անհոգ մի թռչնակ՝
 նետուում էի միշտ մօրս գիրկ,
 Վայելում սէր ու զգւանք:
 Սակայն, աւանդ, մահն
 անիրաւ,
 Մահն անողոք ու դաժան
 Ազիզ մօրս խլեց-տարաւ,
 Տարաւ անդարձ, յաւիտեան:
 Ո՛հ, էլ չունիմ ես մայր անգին,
 Որ ինձ սիրէր, փայփայէր,
 Որ իմ խղճուկ, անտէր
 կեանքին,
 Թե ու թիկունք նա լինէր:

97. Իմ մայրը

Ես մայր չտեսայ.
 Հէնց ծնած օրս թողեց աշխարհը.
 Մանկութեան օրերս դառնութեամբ անցան.
 Ո՛չ մօր փաղաքշանք, ո՛չ կարեկից սիրտ:
 Ես որք մեծացայ, օտար ամենին.
 Յիշում եմ՝ ինչպէս ամենից թաքուն
 Արցունքն աչերիս պարտէզ իջնելով,
 Կամ լի թախիծով
 Մայրական սիրոյ կարօտով բռնւած,
 Ծաղկազարդ դաշտում թափառում էի.
 Իսկ մութն ընկնելիս տուն յետ դառնալով՝
 Սիրած դայեակիս գիրկն էի նետուում,
 Աչերին նայում, վշտացած հարցնում.
 —Ո՛ւր է մայրիկս:
 —Հանգիստ կաց, անուշ, մայրիկը չկայ.
 Նա սառը հողի տակ քուն է քաշում:

—Սառը հողի տակ.

Բայց, ասան, ինչո՞ւ:

—Սյո, բալիկս, գերեզմանի մէջ.

Սյո՞ Սասուած ուզեց, ո՞վ չի մեռնելու:

Որքան էլ դառն էին այդ ասածները,

Բայց ես հասկացայ, որ հողի տակին

Մայրիկս էր պառկած, անի, սիրելի հող:

Բաղդաւոր տղայք ինձ չհասկացան.

Փախայ նրանցից, հողին փարւեցի.

—Իմ անուշ մայրիկ, ինձ էլ քեզ մօտ առ:

98. Որբիկ

Մերկ ու թուլակազմ եկար այս աշխարհ
Եւ մօրդ գրկում կառնէիր հանգիստ.

Ի՞նչ էր դառնութիւն, չարչարանք ու վիշտ,
Քեզ ծանօթ չէին, խաղաղ էր հոգիդ:

Բայց միայն, աւանդ, մահը տարածամ
Տառապեալ մօրդ դրաւ գերեզման.

Եւ քեզ, խեղճ գառնուկ, որք, անօգնական
Թողեց օտարի մշտափակ դռան:

99. Մանկանը

Ուրախութիւն քեզ անպակաս,

Ով դու մանուկ սիրելի.

Ծլիս, ծաղկիս ու զօրանաս,

Տալով պտուղ արժանի:

Որպէս ծաղիկ, մանուկ, քաղցր ես
Եւ շնորհագեղ, որպէս օր.

Մանուկ, մանուկ, ինձ չխաբես,

Միշտ կանց այդպէս լուսաւոր:

Նայիր վերև, տես՝ ինչ սիրուն
Սյնտեղ փայլում են աստղեր,
Եւ անթիւ են, և շողշողուն,
Որպէս երկու քո աչեր:

Սյնտեղ, հոգեակ, բնակում է
Մեր սուրբ Հայրը երկնքի.
Նա է, որ մեզ ուղարկում է
Եւ կեանք, և՛ սէր՝ և՛ հոգի:

100. Աւետարան

Ամեն անգամ, երբ թերթում եմ
Ես էջերը Սուրբ Գրքի,
Միշտ վշտացած մտածում եմ—
Ո՞ւր է սէրը մարդերի,

Որ Փրկիչը սուրբ կտակով
Մարդկութեանը աւանդեց,
Խաչի վրայ իւր արիւնով
Գիր կենդանի դրոշմեց:

Մարդիկ վաղուց մոռացել են
Խաչ ու քարոզ կենդանի.
Աւետարանն ուրացել են,
Էլ Սուրբ Գիրքը գին չունի:

Ամենայն գիրք միշտ կարդում են,
Միրոյ գիրքը չկամին.
Ո՞ւր, չգիտեմ, որոնում են
Բաղդը իրանց խեղճ կեանքին:

101. Բերդեհեմի այրի ս. Աբանուկը

Անյոյս խաւարը, չարութեան ոգին
Տիրել էր աշխարհ, և վաղուց մարդիկ

Ապառաժ սրտով կործանել էին
 Խանդավառ զգացման պատկերը գեղեցիկ.
 Անցած օրերի մաքուր պատմութիւն
 Ապականութեան ասպարէզ դարձած,
 Էլ չէր կարմրում նենգամտութիւն,
 Առաքինութեան փառքն էր շիջած...
 Բայց հասաւ օրը մի նորոգ կեանքի,
 Եւ Բեթղղէմից նոր արև ծագեց,
 Այլից առաջին ճիշդ Մանուկի
 Փրկութեան ժամը մարդկանց աւետեց:
 Նրա ժպիտն էր, որ անհուն սիրով
 Սրտերի սառոյցն պիտ հալեցնէր,
 Եւ մարդկութիւնը նրա շրթունքով
 Ճշմարտութիւնը պիտի ուսանէր:

102. Մի հաւատար

Չհաւատաս դու, եթէ քեզ ասեն՝
 Հանգիստ դու նստիր և յուսով եղիր,—
 Օրեր, տարիներ անհոգ թող անցնեն,
 Քեզ համար գործը կը գայ ինքն իրեն:

Դու մի հաւատար, թէ որ քեզ ասեն՝
 Ձեռքդ մի շարժիր, նստիր՝ ինչպէս կուտ,
 Արծիւն ու առիւծ ոսկի կը բերեն,
 Քեզ համար օտարք անդուլ կը գործեն:

Դու մի հաւատար այլոց խօսքերին,
 Աչքդ մի ձգիր այլոց ձեռքերին.
 Միայն հաւատան քո իսկ ոյժերին
 Եւ քո խելացի առողջ մտքերին:





Յ Ա Ն Կ


*Ազոաւն ու աղւէսը, Աթ. Խընկոյեան	146
Աղաւնինիւր, Բաֆֆի	105
Աղբիւր	23
Ամառն անտառում, Բաֆֆի	64
Ամենաթանկագին բանը, Վ. Միրովիչ	21
Ամենալաւ վկայականը, Սահակեան	7
Ամենապէտքական բանն աշխարհում, Ա. Իսահակեան	28
Ամպ, Բաֆֆի	56
*Ամպիւր, Կ. Կ. Մել.-Շահնուգ	159
Այգեքաղ, Ղ. Աղայեան	66
*Անգրագէտ Յ. Յովհաննիսեան	162
Անձնագոհ ընկեր, Ս. Յակ.	13
Անտառի գեղեցկութիւնը	53
Անտառում	54
Անփորձ փիսիկը, Գ. ք. Մկրտ.	81
Առաւօտ, Գ. եպ. Սրվանձտեան	37
*Առաւօտ, Յովհ. Յովհաննիսեան	155
Առիւծ և վագր	98
*Առիւծի որսորդութիւնը	140
*Արծիւն ու ճիճուն, Ա. Մատ.	148
*Առիւծն ու մոծակը	141
Արևի մօտ, Ա. Իսահակեան	18
Արծիւ, Տ. Հրանոյշ	112
*Արծիւն ու կաղնին, Յ. Թում.	149
Արջ, Մուշայեան	94
Արտը, Վ. Փափագեան	59
Աւարայրի կրօնական պատերազմը, Կ. Կ.	129
*Աւետարան, Յ. Յովհ.	164
*Աքաղաղն ու մարգարիտը, Աթ. Խնկոյեան	136
*Բազէն և աղաւնին, Ժուկովսկի	150

Բարեկամութիւն	5
*Բեթղեհէմի այրի ս. Մանուկը, Ա. Իսահակեան	164
Բօրը	75
Գայլ, Մուշայեան	89
*Գարնան անձրև, Ա. Մատ.	159
*Գարնան տաւօտ	155
Գարնանը, Պ. Պոշեան	39
Գարնան սկիզբը, Բաֆֆի	38
Գիւղական ընտանիքի պարապմունքը, նոյն	41
*Գիւղի ժամը, Յովհ. Յովհան.	161
*Գիւղում, Յովհ. Թումանեան	160
*Գութանի երգ, նոյն	156
Դէպի քաղաք, Բաֆֆի	43
Դըրնդէզ, Յակ. Աղաբար.	69
Երախտագէտ առիւծը	101
Երգի հրապոյրը, Ա. Իսահակ.	31
Երեք բարեկամ	6
*Երկրագործ, Կ. Կ. Մել.-Շահնաղարեան	157
*Էջն ու առիւծը, Աթ. Խնկ.	153 148
*Էջն ու սոխակը, Ղ. Աղայեան	148 153
Ընկերներ, Լ. Մանուկեան	17
Ընտանի ձի	83
Թանկագին մատանի	24
Թաւամազ մեղուն, Աւենարիուս	117
Թուխսրկան, Բարկաս	107
Թռչնակի երգը, Անդերսէն	25
*Իմ մայրը, Յ. ք. Սառիկեան	163
*Խեցգետինը, ձուկն ու կարապը, Աթ. Խնկոյեան	136
*Խոզն ու կաղնին, նոյն	144

Ծիծեռնակների չուռն, Ն. Շխեան	108	*Յողնած երկիրը, Յովհ. Յովհաննիսեան	158
Ծնողասէր աղջիկը	12	Նարէկի նժոյգը	85
Ծոցանուկի, Յակ. Աղարաբ	46	*Նապաստակները, Աթ. Խնկ.	143
Կարկուտ, Կ. Կ. Մել. Շահնազ.	62	*Շունն ու ձին, նոյն	147
*Կապիկն ու ակնոցները, Աթ. Խնկոյեան	138	Որդիական սէր, Մ. Մամուրեան	11
*Կապիկն ու հայելին, նոյն	137	*Որբիկ, Ա. Ծատուրեան	164
Կետ	102	Ուղտ, Մինտիւնի.	87
Կոպէկը, Լ. Տօլստոյ	7	*Պոչատ աղւէսը, Աթ. Խնկ.	145
Հայոց առաջին պատմագիր	128	*Ջրվէժ և առւակ	139
Հայոց տառերի գիւտը	125	Սար գնալը, Խ. Արովեան	50
Հաստատուն տուն, Սէյրի	33	Սերմնացան, Արարատեան	49
Հարազատ մայրը, Ս. Գիրք	10	*Սոխակներ, Ղ. Աղայեան	151
Հաւաաարիմ շուքը,	73	Ս. Գրիգոր Լուսաւորիչ	123
Հուռնձ	65	Ստահակ որդին, Մ. Մամուր.	4
Զմեռը հայ գիւղերում, Արովեան	67	*Վարդը, Գեօթէ	157
Ճնճղուկ, Տուրգենև	27	Վանայ կատուն, Վ. Փափաղեան	78
*Ճպուռն ու մրջիւնը, Աթ. Խնկ.	144	Փիղ	103
Եայիսւայ փոթորիկը, Լէօ	51	Քարը	14
*Մայր, Ա. Ծատուրեան	163	Քոյր և հղբայր	3
*Մանկանը, Շահազիզ	164	Քրիստոնէութեան սկիզբը հայ-իրիս մէջ	121
*Մի հաւատար	166		
Մուրացկան, Տուրգենև	22		







10P

10/80

ՀԱՆ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0027426

A 11
2883